

17200

F. J. J. J. J. J.

Zuchigle Zuchigle Zuchigle

Zuchigle

Uleglyny Uleglyny

9(47.925)

7-68

19

17280

19 AUG 2006

ԱՆՆՈՐ-ի գրադարան № 4.

Բ. ԻՃԽԱՆՅԱՆ.

ՀԱՎԱՅԵՂԱՓՈՒԱԿԱՆ
ՇԱՐԺՈՒՄԸ
ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ.

(Բազուի արիւնանեղ անցքերի
սոխիթով.)



Յ(47.92):323.2
Ի-60

Б. ИСІХАНЯНЪ.

Контръ-революціонное
виженіе въ Закавказьѣ

(По поводу кровавыхъ
событій въ Баку).

Բ Ա Յ Ո Ւ

Տպարան Ն. Ա. Երեւանցեանի

1918

19 AUG 2011

№ 4 «ԲԱՆԻՈՐ»-ի գրադարան № 4

Պրոֆ. Ռուզիկոս Կեռնաբաբո

Բ. ԻՇԽԱՆԵԱՆ *Ե*

9(47.92)

Ի - 68

**ՀԱՎԱՅԵՂԱՓՈՒԱԿԱՆ
ՉԱՐԺՈՒՄԸ
ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ**

(Բազի արիւնահեղ անցքերի առիթով)

*Մեզման Կարոտիկի Յարչո
Արարտիկի Անճախաբ,*
սուր կարգի մատուցման:

Երևան
1918 թվական



Տպարան Ն. Ա. Արևաճառի
1918

280

Ն ր կ ու լ խ օ ս ք

Այս գրքոյկի մի մասը՝ մինչև 35 երեսը, լոյս է տեսել «Բանուր» թերթի բանասիրականում (№№ 10, 11 և 12): Թերթը առժամանակ դադարեցնելու պատճառով, լոյս է ընծայում ամբողջ գրքոյկը՝ եր մնացած մասերով միասին:

Բ. Ի.



20989 4

I

Նրեոյթի ընոյթը.

Քաղցենի մասձողը սովորաբար սահում է հասարակական բարդ երեոյթների վրայից: Նրանց ծագման պատճառները քրքրելու և վերլուծելու փոխարէն, պատահական թիւրիմացութիւնների և չարաբաղդ դէպքերի հետ է կապում նա երեոյթի առաջացումը կամ շարժման բռնկումը: Եւ որովհետեւ թիւրիմացութիւնը կամ աննախատեսելի դիպուածը կարող են միայն առանձին աննատների հետ պատահել կամ նրանց միջոցով տեղի ունենալ, ուստի մեղջանական մասձողութեան ներկայացուցիչը և նրա ОБЫВАТЕЛЬ ունիղնդիբը կամ ընթերցողը երեոյթի ծագման աղբիւրը վերջին հաշւով համարում են առանձին անհատները: Ուրիշ խօսքով երեոյթի պատճառները բըդխեցնում են անհատական կամեցողութեան հիմքից:

Եթէ երեոյթը դրական է՝ իր բնոյթով, և հանրօգուտ՝ իր հետեանընեբով, ապա այդ հանգամանքը վերա-

գրուում է գործող անհատի ըարի և համայնասէր կամեցողութեան: Իսկ եթէ երևոյթը բացասական է և հանրազնաս, ապա դա առանց այլևայլի բացատրուում է անհատի չար և համայնատեաց կամեցողութեամբ:

Օրինակների համար հեռուն չգնանք: Ազգամիջեան կեանքի այնպիսի լուրջ երևոյթներ, ինչպէս, օրինակ, հայ վրացական կամ հայ-թրքական յարաբերութիւնների լարւած վիճակն է եղել զանազան ժամանակներում, հայ (ինչպէս և զբացի) մակերեսային լիբերալներն ու իդէալիստները ջանացել են կատարող բացասական փաստերն ու անցքերը պարզապէս վերադրել սոսկ թիւրիմացութիւնների, «մեղքի քսակը» կախել մի կամ միւս կողմի շարակամ անհատների վզից և նըրանց յետին դիտաւորութիւնների արդիւնք համարել հասարակական երեւոյթի առաջացումը:

Հայ-վրացական յարաբերութիւնների հիմքում որոնել են ինտելիգենտ գործիչների դատապարտելի մեղսակցութիւնը և պատասխանատուութեան կանչել շարախնդիր գրիչների զրգուող հրապարակախօսութիւնը: Հայ-թրքական յարաբերութիւնների հիմքում որոնել են անդրկուլիսեան ծպտեալ ոյ-

ժերի մութ գործերը և «շէյթանները» խաղացնող մատերը:

Հայ ընթերցողները առհասարակ և ոչ նւազ չափերով հայ ընթերցող բանւորները մասնաւորապէս, շատ են լսել ու կարգացել ոչինչ չասող նման «բացատրութիւններ» ամբիօններից և պարբերականների մէջ. նրանց քաղաքացիական դատախարակութեան համար յանձնարարւած ճանապարհը եղել է և ծառայել է միայն, որպէս քաղաքացիական մոլորութեան դպրոց:

Հասարական բարդ երևոյթները ունեն իրանց հասարակական խոր, լուրջ պատճառները: Հասարակական օրգանիզմի սերոյն կառուցւածքի գոյութեան օրինակիւ պայմանների ծոցում պիտի քրքրել պատմական առեալ մօմենտի արտադրած երևոյթի կամ շարժման առաջացման պատճառները: Հասարակական երևոյթի հիմքում պիտի որոնել ոչ թէ առանձին անհատներ կամ նոյն իսկ կուսակցական խմբակներ, այլ հասարակական կօյնկախ: Մասնայական շարժումը պիտի բըղխեցնել ոչ թէ անհատական կամեցողութեան կամ կուսակցական տենչանքների հիմքից, այլ դատակարգային իդէալի ու կամեցողութեան հիմքից: Անհատները կամ անգամ կուսակցու-

Թիւնները սոսկ ածանցւած, երկրորդակարգ կամ սեկունդեր գործօններ են, որոնք միայն արտայայտում և պաշտպանում են հասարակական կուլիկտիւի շահերը, հիմնաւորում և ձևակերպում են դասակարգային իդէալը պայքարում են դասակարգային ձրգտումների համար, իրականացնում են դասակարգի կամքը: Ուրեմն չեն կարող երևոյթի ծագման պատճառ լինել այն ոյժերը, որոնք իրանց հերթին կամաարտայայտիչնր և կամակաարներ են հանդիսանում աւելի հիմնական, առաջնակարգ կամ պրիմէր գործօնների:

Այն բոլոր գրութիւնները, որոնք մինչ այժմ լոյս են տեսել տեղոյս սօցիալիստական մամուլի բոլոր կարգի օրգաններում Բագուի անցքերի և սրբանց հետ կապ ունեցող դրսի յար և նման գէպքերի առիթով, իրիցա հեռու են գիտական օրիեկտիւիզմից և մարքսիստական պատճառակցական վերլուծութիւնից: Ծամժմւած, շարլօն արտայայտութիւնների և բազմիցս հորովւած տրաֆաշիտների շրջանակներից հեռուն չեն անցնում յիշեալ գրութիւնները:

Փորձենք աւելի սերտ մօտենալու երևոյթին. հետազօտենք նրա խոր

արմատները, ցուցահանենք նրա շարժիչ գործօնները, հաստատենք նրա բովանդակութիւնն ու տենդենցները, մատնացուցենք նրա համարձակ թախքի օժանդակ ազդակների և բարենպաստ պայմանների վրայ, վեր հանենք նրան իր ծագման վայրի շրջափակ սահմաններից և որոնենք նրա օրգանական կապերը լայն հորիզոնների փեշերում:

Բայց նախ քան այդ աշխատանքը, անհրաժեշտ է մեզ մի փոքր ներածական դիտողութիւն անել երևոյթի բընոյթի նկատմամբ, թէ և քննելիք երևոյթի բնոյթը կարող է իր ամբողջ մերկութեամբ պարզել միայն փաստական վերլուծումներից յետոյ, այսինքն աշխատանքի վերջում: Հէնց այդ է պատճառը, որ մեր նախնական դիտողութիւնները միայն ներածական իմաստ կարող են ունենալ:

Ի՞նչ բնոյթ ունեն արդեօք Բագուի անցքերը, որոնք, որպէս երևոյթ, առաւել կամ նուազ չափերով համատարած և համարժէք են արևելեան Անդրկովկասում, բայց որոնց նախադասարաստական քայլերը և շիկացած արտայայտութիւնը տեղի են ունեցել — և պէտք է անհրաժեշտօրէն տեղի ունենային — բացառապէս Բագում,

որպէս քաղաքական շարժման և իդէա-
կան իմտութեան կենտրոն:

Տեղոյս սօցիալիստական գրեթէ բո-
լոր օրգանները, երևի բացառութեամբ
միայն «Нашъ Голосъ» թերթի, Բագ-
ւի անցքերը անւանեցին քաղաքա-
ցիական պատերազմ, դրա տակ հաս-
կանալով մոսուլմանական իրականու-
թեան մէջ նախապատրաստւած մի
կտիւ՝ ուղղւած պետական իշխանու-
թեան տեղական օրգանների դէմ:
«Нашъ Голосъ» թերթը, ընդհակա-
ռակը, պնդում է իր առաջնորդողում
(№ 59), որ պատահած արիւնահեղ
ակտերը ազգային պատերազմ է
տակ երկու գրացիների՝ հայերի և
թուրք-թաթարների միջև*):

*) Չափազանց մակերևոյթային և
թեթեամիտ վերաբերմունք է ունեցել
«Нашъ Голосъ» թերթի «մարքսիստ»
յօզւածագիրը դէպի առաջադրւած լուրջ
հարցը: Իր երկատոյ առաջնորդողի մէջ
սկզբում յայտարարում է, որ ինքը հրա-
ժարում է վերլուծութեան ենթարկել
անցքերը՝ նրանց չափազանց թարմ
լինելու պատճառով, բայց անմիջապէս
յիտոյ, յաջորդ պարբերութեան մէջ,
նա յայտնում է (առանց մազաչափ
կատակածելու) մի համարձակ միտք,
որին կարելի է հանգել միայն անցքե-
րը վերլուծութեան ենթարկելուց յի-

Նախ և առաջ զադափարիս խիստ,
հասարակական իմաստով մեծ ուղ-
ղազրման կարիք ունեն վերոյիշեալ
արտայայտութիւնները (քաղաքական
— ազգային պատերազմները), մանա-
ւանդ վերջինը: Նկատենք, տու այժմ
կողմնակի, որ մեր ծայրերկրի անցքերը
ոչ քաղաքացիական և ոչ էլ ազգային
պատերազմ է եղել, այլ, ինչպէս յի-
տոյ կը տեսնենք, ուրիշ բնոյթ են ու-
նեցել:

Եթէ ասում ենք քաղաքացիական
կտիւ կամ պատերազմ Ֆրանսայում,
Գերմանիայում կամ բուն Ռուսիայում
(ոուս տարրի կենտրոններում), դրա
տակ հասկանում ենք, որ միևնոյն ազ-
գութեան պատկանող քաղաքացիու-
թեան տարբեր կաթեգորիաները կամ
հակամարտ հատւածները պատերազ-
մում են իրար դէմ, որոնցից մէկի
կամ միւսի կողմն է անցնում կառա-
տոյ: Յայտնել, որ կատարւած անցքե-
րը կարելի է բացատրել միայն երկու
փողովուրդների— հայերի և թուրքերի
և ազգային թշնամութեամբ և վրէժ-
խնդրութեամբ, նշանակում է կատա-
երապէս չհասկանալ եղած շարժման
պատմական իմաստը: Պատմական անց-
քերն ու ակտերը ազգերի վրէժխն-
դրութեան զգացմունքով չեն բացա-
տրում, յարգելի «մարքսիստ»:

վարական իշխանութիւնը, նայեա՞ծ ինչ ուղղութիւն և լօզունգներ ունի տւեալ պայքարը: Յրանսխայում քաղաքացիական պատերազմի օրով (1871 թ.) իշխանութիւնը կանգնած էր բուրժուազիայի կողմը, իսկ Ռուսիայում գրունում ենք բոլորովին հակառակը:

Միանգամայն տարրեր է երևոյթը, եթէ կոխը տեղի է ունենում մի ենթակայ (հպատակ) մանր ազգի կամ ժողովրդի և պետականօրէն տիրող ազգի իշխանութեան միջև: Ենթակայ ժողովուրդը պետական քաղաքացիներ լինելուց բացի, ամենից առաջ էտնիական-ազգային միաւոր է (սակաւ դէպքերում նաև կրօնական միաւոր է, ինչպէս օրինակ հրէութիւնն ու մահմեդականութիւնն է):

Ենթակայ ազգային միաւորի յայտարարած կոխը չի կարելի ոչ մի դէպքում անւանել քաղաքացիական, որովհետև նա չի մղում սոսկ և միշտ քաղաքացիական իրաւունքների համար: Այդ կոխը կարելի է ընդունել տարբեր կերպով, նայեա՞ծ այն տէնդենցներին, որոնցով առաջնորդում են կուռղները և այն դրօշակին, որ պարզել են նրանք: Եթէ ենթակայ կամ հպատակ ազգերը գտնուում են ըէակցիօն ըէփմի տակ և հալածւած վիճակի մէջ,

ինչպէս օր. լեհութիւնն է Պրուսիայում, հայութիւնը և այլ բաղադրից մանր ազգերն են Թիւրքիայում, կամ հրէաները, լեհերը, վրացիները, հայերը, ուկրայիցիները և այլն եղել են վաղեմի ցարական Ռուսիայում, ահա այդ բոլոր դէպքերում ենթակայ և հալածւած ժողովուրդները կոխը՝ պետական իշխանութեան դէմ, կարող ենք անւանել ազգային ազատագրական և յեղափոխական շարժում կամ ապստամբութիւն:

Եւ ընդհակառակը, եթէ մի ազատ ու զեմօհրատիկ երկրում, ուր ազգային հալածանք ու ճնշում չկայ և ուր ինքը պետական իշխանութիւնը յեղափոխական դրօշակի տակ է վարում իր քաղաքականութիւնը, կոխ է յայտարարում օրև է ենթակայ ազգային միաւորի կողմից յեղափոխական իշխանութեան դէմ, ապա այդ կոխը այլ բան չէ, բայց եթէ հակապետական և հակա յեղափոխական մի ըէակցիօնէր շարժում կամ ապստամբութիւն:

Ճիշտ այդ բնոյթն ունի մեր ընդունութեան առարկան՝ Բագու և նրանից դուրս թուրք յետադիմական տարրերի կողմից յայտարարած կոխը ուստական յեղափոխական իշխանութեան դէմ:

Այո, թուրք-թաթարական միայն
բէակցիօնէր տարրերի և ոչ ամբողջ
ազգային միաւորի կողմից:

Ճնշած ժողովուրդների ազատա-
գրական և յեղափ. շարժումը համա-
բեցինք ազգային, որովհետև ազգա-
յին ընդհանրութիւնը կենսապէս շահա-
գրգուած է շարժման դադափարային
բովանդակութեամբ ու տենդենցներով՝
հալածուած վիճակից փրկելու համար:

Ընդհակառակը, թուրքական բէակ-
ցիօնէր և հակայեղափոխական շար-
ժումը չենք կարող ազգային համարել,
որովհետև մահմեդական ազգաբնակու-
թեան 90 տոկոսից աւելին՝ ողջ չբա-
ւոր գիւղացիութիւնն ու բանւորու-
թիւնը ամենից առաջ, մազաչափ շա-
հագրգուած չէ հակայեղափոխական
և բէակցիօնէր շարժման ու կուր լօ-
ղունդներով՝ ընդդէմ դեմօկրատիայի
և յեղափոխութեան:

Բայց չէ՞ որ մուսուլման ազգաբնա-
կութիւնը հոծ բաղմութեամբ մաս-
նակցում է այդ կուրին՝ իբր բէկական
իդէօլօգների առաջնորդութեամբ. —
կարող են մեզ հարցնել:

Այո մասնակցում է. բայց այդ չի
նշանակում, որ այդ հոծ մասօսաները
նպատակագիտակից բէակցիօնէրներ և
հակայեղափոխականներ են, այլ այդ

նշանակում է, որ թուրք մասօսաները
տակաւին անգիտակից գործիքներ են
հակապետական բէակցիայի և հակա-
յեղափոխութեան ճանկերում,

Մի անգամ ընդմիշտ պիտի պարզ
լուրնել, որ որևէ հասարակական շարժ-
ման կամ երևոյթի բնոյթը չի որոշ-
ում ըստ շարժման մասնակցող հա-
սարակական հատւածների թուի ու
բաղմութեան, այլ բացառապէս ըստ
շարժման իդէական բովանդակութեան,
ըստ առաջնորդող տենդենցների: Ու-
րեմն երևոյթի բնորոշման յատկանիշ
գիծը կամ կրիտերիումը չպէտք է ու-
րոնել շարժման մասնակցող բաղմու-
թեան չափի ու քանակի մէջ, այլ բա-
ցառապէս մասնակցող բաղմութեան
շահագրգուութեան աստիճանի մէջ:

Եթէ մենք ցոյց տւինք, առ այժմ
ներածական գիտողութիւններով, որ
մեր քաղաքի և ծայրերկրի անցքերը,
դադափարիս խիստ ու ըննական իմաս-
տով վերցրած՝ քաղաքացիական կուր
չէ, այլ սեղաբառ հակապետական և
հակայեղափոխական բէակցիօնէր շա-
րժում կամ ապստամբութիւն է մու-
սուլման տիրապետող դասի կողմից,
ապա էլ աւելի դիւրին է ապացուցել,
որ յիշեալ անցքերը չունեն ոչ մի դէպ-

ըում հայ թրքական ազգային պատե-
րազմի բնոյթ:

Իրա մասին ժանրամասն կըխօսենք
յետագայ բաժիններում:

II

Շարժման գործօնները

Ռուսիայի հասարակական կառուց-
ւածքը (ստրուկտուրա) յեղափոխու-
թիւնից առաջ կրթնում էր, ինչպէս
յայտնի է, դասային կազմի (состав-
ный составъ) վրայ: Իս միջին դարե-
րից մնացած մի կաշկանդող սխտեմ է,
որ իր էութեամբ պահպանուել էր մեր
երկրում մինչև 20-րդ դարը: Այդ դա-
սերը հետեւեալն է.

1. Տոհմային կամ ժառանգական ազ-
նւականութիւն (родовое или потом-
ственное дворянство):

2. Անձնական ազնւականներ, չի-
նովնիկներ քաղաքացիներից (дворяне
личные, чиновники не изъ дворянъ):

3. Հոգևորականութիւն (духовен-
ство):

4. Տոհմային և անձնական պաշ-
ւաւոր քաղաքացիներ (потомствен-
ные и личные почетн. граждане):

5. Վաճառականներ (купцы):

6. Քաղքիներ (мѣщане):

7. Գիւղացիներ (крестьяне):

Այդ եօթը դասերից էր բաղկացած
(չհաշուելով կողակներին և օտարահայ-
տակներին) լայնածաւալ Ռուսիայի
բազմամիլիոն ազգաբնակութիւնը:
Ռուսիայի բնակչի ով լինելը՝ օրէնքի
առաջ և իրաւունքի տեսակէտից, ճա-
նաչոււմ էր միայն նրա այս կամ այն
դասի պատկանելութեամբ: Համա-
ռուս բնակչիչը իրաւագօր և իրաւա-
հաւասար քաղաքացի չէր, այլ նա ար-
ւեստական կաշկանդումների ենթակայ
անդամն էր այս կամ այն դասի:

Արեւմտեան Եւրոպայի ազատ երկրը-
ներում վաղուց է խորտակւած հասա-
րակական ստրուկտուրայի դասային
սխտեմը կամ դասային հասարակա-
կարգը (составный строй): Ամեն մի յե-
ղափոխութեան, ամեն մի ազատագլը-
ւող ժողովրդի ամենախոշոր նւաճում-
ներից մէկը կայանում է դասերի իս-
պառ վերացման մէջ: Դասերի փոխա-
րէն յաղթանակում է ազատ քաղաքա-
ցիութեան իրաւահաւասարութեան ըս-
կըզրուները. Այդ յաղթանակի ամենա-
փայլուն օրինակը աւել է Ֆրանսիա-
կան Մեծ Յեղափոխութիւնը:

Այդ յաղթանակի նոյնքան փայլուն
օրինակը աւաւ ուսական Փետրուար-
եան Մեծ Յեղափոխութիւնը: Վերաց-
նելով ցորական Ռուսիայի վերոյիշ-

եալ եօթ դասերը, ազատագրւած Ռուսիայի յեղափոխական կառավարութիւնը իր առաջին նշանաւոր դեկլարացիայի մէջ շեշտեց, որ չկայ այլևս դասային խտրութիւնների սկզբունքը, բոլորն էլ ազատ ու իրաւահաւասար քաղաքացիներ են:

Այժմ մի կարևոր հարց. ո՞ր դասերն են կորցնում և որոնք են շահւում յեղափոխութեան այդ խոշոր յաղթանակի հետևանքով:

Ինչպէս է, որ կորցնում են նրանք, որոնք առանձնապէս շահւել են հին ըէժիմի օրով, և օգտւում են նրանք, որոնք միայն զրկւել ու տուժել են ուսալ:

Շահագրգռութեան աստիճանի տեսագէտից նայելով հարցին, մենք կարող ենք յիշեալ 7 դասերը բաժանել երեք կաթեզօրիաների:

Առաջին կաթեզօրիայի մէջ մտնում են սկզբի երեք դասերը (1. տոհ. ազն. 2. անձնակ. ազնւակ. 3. հոգևորականութիւն): Երանք, թէև քանակով փոքրաթիւ, բայց իրաւունքներով մեծատուն դասերն էին հին ըէժիմի օրով, որոնց համար երբէք ցանկալի չէր դասային խտրութիւնների վերացումը և որոնք, հէնց այդ տեսակէտից, երբէք չէին կարող հաշտ աչքով նայել



նոր իրաւաւորին: Մէկը խոշոր կաւածատիրութեամբ և աւանդական լիազօր արտօնութիւններով օժտւած (1. դասը), միւսը բերօղրատական-չինովնիկական հիրարխիայի մէջ շահաւէտ անկիւններ գրաւած (2. դասը), իսկ երրորդը՝ ի վերուստ հովանաւորւած կաստայի ձրիակեր անդամներն էին (3. դաս): Ահա այդ դասերը, մասաւանդ և յատկապէս առաջին դասը, պէտք է սկզբից և եթ համարել կատարւած յեղաշրջումների թշնամիներ և ամեն մի հակայեղափոխական շարժման բնական գործօններ:

Երկրորդ կաթեզօրիայի մէջ մտնում են 4-րդ և 5-րդ դասերը (պատաւոր քաղաքացիներ և վաճառականներ), որոնք իբրև քաղաքային բուրժուազիայի հատւածներ՝ իրանց ունեցւածքի ցնեղով և պրօֆեսիայով, շահագրգռւած էին դասերի վերացումով, որպէսզի նոր, ազատ կարգերում կարողանային աւելի լայն հիմքերի վրայ, արագ ու համարձակ թախչնելով զարգացնել կապիտալիստական արդիւնաբերութեան և շահագործութեան սխտեմը: Ուրեմն այդ դասերը, թէև հեռու էին յեղափոխութեան ակտիւ զերակատարների կոչումից, բայց շահագրգռւած էին այնպիսի ազատ

1005
20984

Հ.Ս.Ս.Հ. ԼԵՆԻՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

իրաւակարգով, ուր ցարական բռնակալութեան փոխարէն իշխէր բուրժուական պարլամենտարիզմը, իսկ անտեսական կեանքում խոշոր կալածատիրութեան հովանաւորութեան փոխարէն՝ ազահովէէր և զարգացնէր խոշոր արդիւնաբերութիւնն ու առատուրը:

Վերջապէս երբորդ կաթեգորիայի մէջ մտնում են վերջին երկու դասերը՝ 6-դն ու 7-դը (քաղեքնիութիւնն ու գիւղացիութիւնը): 6-րդ դասը քաղաքային մանր բուրժուազիան է, իսկ 7-րդ՝ ամենաբազմաքանակ գիւղացիութիւնը, ամփոփում է իր մէջ քաղաքային բանւորութեան այն հատւածները (պրօլետարիատի ամենամեծ տոկոսը), որոնք իրանց ծագումով պատկանում են գիւղացիութեան: Այդ երկու դասերը, մանաւանդ և յատկապէս 7-րդ դասը (գիւղացիութիւնը և նրանից ծագած բանւորութիւնը) իբրև ամենից շատ շահագործւող, իրաւագուրկ և ճնշւած կաթեգորիան հին ըէժիմիօրով, ոչ միայն կենսապէս շահագրգռւած էին դասային կաշկանդող սահմանափակումներից ազատագրւելու, այլև, իբրև այդպիսիք, պէտք է դառնային—և իրապէս դարձան—յեղափոխութեան ամենադրական գործօնները:

Սակայն յիշեալ եօթ դասերի մէջ կան երկուսը, որոնք լարւած էին միմիանց դէմ ոչ միայն դասային տարբերութիւններով, այլ սօցիալական խոշոր կարգի հանգոյցով: Դա 1-ին և 7-րդ դասերն էին՝ կալածատէր տոնձային անուականութիւնը կամ ազրարային արխիտօկրատիան մի կողմից և չքաւոր՝ սակաւահող կամ հողազուրկ գիւղացիութիւնը միւս կողմից: Դրանք դասային հակամեծաներ էին, որոնցից առաջինը նոյնքան էր արտօնւած և նոյնքան էր շահւում հին ըէժիմիօրով, որքան երկրորդը իրաւագուրկ էր և հարստահարւում էր անխնայ: Ռուսական յեղափոխութիւնը առաջին հերթին ոչ միայն լուծեց այդ հակամեծաների դասային անդնդախոր տարբերութիւնների հարցը՝ յայտարարելով նրանց հաւասարազօր քաղաքացիներ, այլև առաջ նետեց հողային հարցի նման վիրաւոր հանգոյցը արմատապէս լուծելու անյետաճգելի լօզունքը: Նշանակում է այդ շափով համառուս պիւղացիութիւնը (անշուշտ նպատակադիտակից, կազմակերպւած հատւածները) պիտի դառնար յեղափոխական իրաւակարգի կենդանի նեցուկը և նրա նւաճումների արթուն պահպանը: Ընդհակառակը, կալածատէր

ազնւականութիւնը պիտի դառնար յեզափոխութեան ընտան թշնամին և կենդանի գործօնը ամեն մի հակայեզափոխական շարժման:

Այժմ տեսնենք, թէ ինչ է ներկայացնում իրանից այդ հակայեզափոխական գործօնը մեր ծայրերկրում: Նախ և առաջ մի քանի տւեալներով ցոյց տանք կալւածատէր ազնւականութեան թուական ոյժը տեղական զլիւաւոր ժողովուրդների մէջ:

Տոհմային ազնւականների կամ աւատական (ֆէօդալ) տարրի քանակական ոյժի տեսակէտից Անդրկովկասը մի աննախանձելի բացառութեամբ գերազանցում է ողջ Ռուսիայի բոլոր մնացած մասերից: Այսպէս օրինակ ըստ ընդհանուր ժողովրդագրութեան տւալների (1897 թ.) Անդրկովկասի ազնւականութ. կազմում է ողջ ազգաբնակչութեան աւելի քան 2,80% -ը:

Ազնւականութիւնը, իբրև տիրապետող դաս, պիտի որոնել յաակապէս վրացական և թուրքական իրականութեան մէջ: Վրացիների մէջ տոհմ. ազնւականները կազմում են ամբողջ վրաց ժողովրդի 5,26%, իսկ թուրքերի մէջ նոյն դասը կազմում է ողջ թուրք ազգաբնակչութեան 3,40%, հայերի մէջ ընդհակառակը, չնչին է այդ

դասի տոկոսը: Նա կազմում է ողջ հայ ազգաբն. միայն 0,85%, նոյն իսկ ոչ մի ամբողջ տոկոսը: Վրաց ազնւականութիւնը կազմում է Անդրկովկասի ամբողջ ազնւականութեան ընդհանուր թուի 45,32%, թուրքականը՝ մօտ 30,00%, իսկ հայկականը՝ ընդամէնը 5,95%, այսինքն 5—6 անգամ նւազ թուրքականից և մօտ 9 անգամ նւազ վրացականից: Ազնւական տարրի մի այդպիսի ուժեղ ներկայացուցչութիւն, ինչպէս վրաց և թուրք ժողովուրդներն ունեն, չկայ ոչ մի տեղ, չունի ոչ մի ժողովուրդ ոչ միայն Ռուսիայում, այլ և երկրագնդի վրայ: Սակայն այն հակայական ոյժն ու ազդեցութիւնը և չարիքի բնաւորութիւն ստացած այն բացասական դերը, որ ունի և խաղում է թուրք բէկութիւնը թրքական կեանքում, չունի և նոյն չափով չի խաղում վրաց ազնւականութիւնը վրացական կեանքում: Այդ տարրերութիւնների մասին կըխօսենք մենք յետոյ, իսկ այստեղ հաղորդենք մի քանի տւեալներ թուրք ազնւականների (բէկերի և աղալարների) հարազատ օջախից*):

*) Սովորական լեզուով թուրք բառը արասյայում է թաթար բառի իմաստը: Մինք այստեղ պահպանում ենք սովորական գործածու-

Թուրք-թաթարական տարրի խտացած կենտրոնները համարում են երեք նահանգներ. Գանձակի, Բագրի և Երևանի նահանգները, մանաւանդ Գանձակինը: Այդ երեք վայրերում կենտրոնացած են Անդրկովկասի ողջ թըրքութեան աւելի քան 97,00% -ը (39 տոկ. Գանձակի նահ., 36,00 տոկ. Բագրի նահ. և 22,00 տոկ. Երևանի նահ.): Իսկ այդ երեք վայրերի թուրք բէկութիւնը կազմում է Անդրկովկասի թուրք բէկութեան ընդհանուր թուի 90,09 տոկ. (դրանցից 50,85 տոկ. Գանձակի նահանգում, 26,55 տոկ. Բագրի նահ.

Թիւնը: Այստեղ մեր խօքը վերաբերում է ոչ թէ առասարակ մահմեդականներին կամ մուսուլմաններին, այլ Ադրբէյջանի թաթարներին (թուրքերին), որոնք թուով գերազանցում են բոլոր մուսուլմաններին, իսկ ազդեցութեամբ կատարելապէս աիրապետում են Անդրկովկասի ընդհանուր մուսուլմանական կեանքում: Հէնց այդ թուրք-թաթարների մէջ է, որ ազնական-բէկական տարրը թւական ասիւրան ուժեղ ներկայացուցչութիւն ունի և հսկայական դեր է խաղում: Այսպէս, օրինակ, մինչդեռ թուրքերը կազմում են Անդրկովկասի (դրա մէջ մտնում է նաև Դաղստանի շրջ.) բոլոր մահմեդականների ընդհանուր թւի 54,50%, թուրքական բէկութիւնը, ընդհակառակը, կազմում է մահմեդական բոլոր ժողովուրդների ընդհանուր բէկութեան արդէն 87,51 տոկոսը, ասել է հսկայական մեծամասնութիւնը:

և 12,68 տոկ. Երևանի նահ.): Նշանակում է միայն Գանձակի նահանգում կենտրոնացած է անդրկովկասեան ողջ թուրք առնմային ազնականութեան կամ բէկութեան, խանութեան, ազալարութեան կէսից աւելին: Այդ փաստը աւելի շօշափելի կերպով երևում է հետևեալ տւեալներէց: Թուրք ազնականութիւնը կամ բէկութիւնը կազմում է նահանգական ողջ ազնականութեան ընդհանուր թուի մէջ հետևեալ տոկոսները. Գանձակի նահ. 80,50 տոկոս, Բագրի նահ. 71,38 տոկ., Երևանի նահ. 67,40 տոկ.: Այնուհետև թուրք բէկութիւնը կազմում է նահանգական ողջ թուրք ազգօրնակութեան մէջ հետևեալ յարաբերական թիւը. Գանձակի նահ. 4,41 տոկ: Բագրի նահ. 2,53 տոկ., Երևանի նահ. 1,87 տոկոս:

Այդ խտրող տոկոսների հանդէպ միանգամայն նսեմանում են հայ ազնականութեան վերաբերեալ տւեալները նոյն վայրերում: Այսպէս օրինակ հայ ազնակ. (բէկութիւն, մելիքութիւն) կազմում է նահանգական ողջ ազնական. ընդհանուր թուի մէջ հետևեալ տոկոսները. Գանձակի նահանգում 14,74 տոկ., (թուրք 80,50 տոկ.), Բագրի նահ. 4,60 տոկ., (թուրք 71,38 տոկ.),

Երևանի նահ. 6,52 տոկ., (Թուրք 67,40 տոկ.): Իսկ նահանգական ողջ հայ ազգաբնակչութ. մեջ հայ տոնմ. ազնւակ. կազմում է՝ Գանձակի նահ. 1,47 տոկ. (Թուրք 4,41 տոկ.), Բագրի նահ. 1,51 տոկ. (Թուրք 2,53 տոկ.), Իսկ Երևանի նահ. միայն 0,13 տոկ. (Թուրք 1,87 տոկ.): Անյայտանալու չափ չնչին է հայ ազնւակ. տոկոսը Երևանի նահանգում: Թուրք բէկութիւնը ևս համեմատաբար նւաղ ներկայացուցչութիւն ունի Երևանի նահանգում:

Այսպէս ուրեմն Գանձակի նահանգը՝ թէ ընդհանուր առմամբ և թէ մասնաւորապէս Թուրքերի նկատմամբ, հանդիսանում է տոհմային ազնւակաւութեան (բէկութ., խանութ., աղաւարութ. և մելիքութ.) անմրցակից որրանը: Ըստ գաւառների վերցրած, Թուրք բէկութեան յարաբերաբար ամենամեծ տոկոսը կենտրոնացած է Չանգեզուրի գաւառում (նահանգի ողջ Թուրք բէկութեան 28,07 տոկոսը), այնուհետև Շուշայ գաւ. (17,14 տոկ.), Գանձակի գաւ. (12,03 տոկ.), Նուխլայ գաւ. (11,84 տոկ.), Ղաղախի գաւառ (10,80 տոկ.) և այլն: Հինգ գաւառներում կենտրոնացած է նահանգի ողջ Թուրք բէկութեան մօտ 80 տոկ.: Հայերի մօտ բէկութեան և մելիքութեան

մնացորդների օջախը համարւում է Շուշայ գաւառը (նահանգի ողջ հայ տոնմ. ազնւակ. 46,12 տոկ.), այնուհետև Չանգեզուրի գաւ. (21,00 տոկ.), Գանձակի գաւ. (11,16 տոկ.), Ղաղախի գաւ. (9,12 տոկ.): Չորս գաւառներում կենտրոնացած է նահանգի ողջ հայ ազնւակաւութեան 87,40 տոկ.:

Շատ բնորոշ է այն հանդամանքը, որ Թուրք բէկութեան շատ չնչին մասըն է ապրում քաղաքներում. նրանք ամուր կապւած են գաւառական կեանքի հետ: Այսպէս օրինակ Թուրք և հայ ազնւակաւութիւնը դասաւորւած են քաղաքներում հետևեալ տոկոսներով.

	Թուրք ազնւակ.	հայ ազնւակ.
Գանձակի նահ. քաղաքներում . . .	9,80%	32,3%
Բագրի նահանգի քաղաքներում . . .	22,88 »	79,10 »
Երևանի նահ. քաղաքներում . . .	48,41 »	76,00 »

Միջին թւով վերցրած ողջ Թուրք ազնւակաւութեան (յիշեալ երեք նահանգներում) 24,21 տոկոսը ապրում է քաղաքներում, իսկ հայ ազնւակաւութեան 43,40 տոկոսն է ապրում քաղաքներում: Այդ փաստը ունի իր սօցիալ-տնտեսական նշանակութիւնը, որին կը դառնաւ մենք յետագային:

Համառօտ տեւալներով պարզեցինք մենք թուական մեծութեան պատկերը թուրք իրականութեան մէջ տիրապետող այն դասի, որին անանեցինք մենք իւրաքանչիւր հակայեղափոխական շարժման բնական գործօններ:

Տեսնենք այժմ, թէ ինչ քաղաքական ձգտումներ էր փայտաշում այդ դասը իր մտաւորականներէ, իր դասակարգային իղէօլոգներէ առաջնորդութեամբ:

III

Տնտեսական տիրապետութիւնը և քաղաքական տննդննցները.

Տոհմային ազնւականը*) միաժամանակ տոհմային կալւածատէր է: Նա ժառանգէ ժառանգ ստացել է հողը իր տոհմներից, ժամանակի ընթացքում նաև պարզել է ստացել «վերին խնամակալներից», ինչպէս և «գնել» է մասնակացող հարեանի գոյքը կամ գրա-

*) «Տոհմային ազնւականութիւնը» ընդհանուր արտայայտութիւնն է բամաթիադոս դասի, ինչպէս են. իշխան, խան, բէկ, մելիք, տալար, վրացիներն մէջ՝ թաւադ, աղնաուր և այլն: Վերին, միջին և ստորին կարգի տիպոգրոսներով և համապատասխան արածնութիւններով օժտւած հաւաածներն են զրանք միևնոյն տոհմային-ազնւական դասի:

ւել ու գաւթել է գաղթող, թափառող զիւղացու ունեցւածքը:

Հողը ոչ միայն ապրուստի միջոց է ծառայել ազնւականի համար, այլև նրա նիւթական բարեկեցութեան և հարստութեան մշտաբուղիս ազբիւրն է եղել: Մեծաքանակ հողատիրութիւնը դարձել է ազնւականի (բէկի կամ մելիքի) համար նաև տնտեսական տիրապետութեան ապահով նեցուկը: Թուրքը կալւածատէրը կուտակել է իր տրամադրութեան տակ երկրագործական բազմապիսի բերքերի առատ պաշարներ. նա եղել է միաժամանակ խոշոր անասնատէր, խաշնատէր, երամատէր և անտառատէր: Բէկի կամ ազնւականի գոյքի ու միւլքի այդ բնական (նատուրալ) հարստութիւնը հետագնեակ դիզել է նրա տրամադրութեան տակ նաև փողի, հնչիւն դրամի, ոսկու և արծաթի հարստութիւն: Նա տէր է և իշխող գաւառական մըթնոլորդում. շրջապատը ենթարկւած է բէկին ոչ միայն տնտեսապէս, այլ դրամի միջոցով:

Սակայն տոհմային ազնւականը ոչ միայն կալւածատէր էր, այլ զիւղատէր և ճորտատէր: Նա ոչ միայն մեծ հողերի առատ բերքերի լիազօր անօբէն էր, այլև զիւղերի սեփականատէրը

և ճորտերի վիճակի անկաշկանդ իրա-
ւագորքը: Նա ոչ միայն անաշխատ
կեանք էր վայելում, այլև տոհմային
իրաւունքներով արտօնւած էր ուրիշի
(«ռհաթի») վաստակը իւրացնելու և
ճորտի քրթնաթոր աշխատանքը շա-
հագործելու ճրիագար: Իսկ դա նշա-
նակում է, որ տոհմային ազնւակա-
նութիւնը հիմնել էր գաւառական մըթ-
նոլորդում իր ոչ միայն անտեսական,
այլ սօցիալակամ տիրապետութիւնը:

Իր այդ երկու առարկայական յատ-
կութիւններով օժտւած, տոհմային-
կալւածատէր ազնւականութիւնը հան-
դիսանում էր որպէս ազրարային բար-
ձր արիստօկրատիան մեր ծայրեր-
կրում:

Ազրարային արիստօկրատիայի տըն-
տեսական և սօցիալական տիրապե-
տութեան ընդ նեցուկների այդ փաս-
տական նկարագրից պարզում է ինքն
ըստինքեան, թէ ինչ զաղափարային
հակումներ, ինչ Ֆիզիօնօմիա պիտի
ունենայ այդ զասը հասարակական և
քաղաքական կեանքում: Ինչպէս ա-
մեն տեղ, այնպէս էլ մեր երկրում,
կալւածատէր ազնւականութիւնը կամ
ազրարային արիստօկրատիան եղել է
— և անհրաժեշտօրէն պէտք է լինէր—
կօստերվատիւ (պահպանողական) իր

հասարակական հայեացքներով և ընկե-
ցիօնէր (յետադիմական) իր քաղաքա-
կան տենդենցներով, իր դաւանան-
քով*): Նրա համար անընդունելի է
փոփոխութիւնը մի հասարակակարգի,
ուր նա տոհմային աւանձնաշնորհում-
ներով և իրաւական արտօնութիւննե-
րով բազմած է տիրապետութեան սան-
դուղքի վերին աստիճանի վրայ: Նա
տանել չի կարող քաղաքական մի յե-
ղաշրջում, որ կոչւած է ոչ միայն վե-
րացնելու այդ տիրող բարձր շերտի
դասային աւանձնաշնորհումներն ու
արտօնութիւնները, այլև արմատից պո-
կելու նրա անտեսական և սօցիալա-
կան տիրապետութեան ամուր նեցուկ-
ները— վերջ տալու խոշոր-հողային
մասնաւոր սեփականատիրութեան ըս-
կըզբունքին:

*) Խօսքս, անշուշտ, չի վերաբերում ազ-
նւական ծագում ունեցող այն սակաւաթիւ
անհատներին, որոնք ինչպէս ուրիշ երկրնե-
րում, այնպէս էլ Ռուսիայում եղել են լեզգաթ-
մարտիկներ ժողովուրդների ազատագրութեան
գործում: Իրանք հատընտիր դէմքեր են, որոնք
զաղարել են ազնւական դասի հաւատարիմ
անդամներ լինելուց այն ընդէից սկսած, երբ
նեւուել են յեղափոխութեան գերիւ և կռիւ
յայտարարել ընկեցիօնէր դասի դէմ: Սեր
խօսքը վերաբերում է այստեղ հնչեանուր
երեսթին, գառային կօլեկախին:

Ի զուր չէ միապետական հին ը-
 ժիմը առանձին խնամքով պաշտպանել
 տոհմային ազնւականութեան դասա-
 յին արտօնութիւններն ու խոշոր կա-
 ռածատիրական շահերը, լաւ իմանա-
 ում, որ հասարակականօրէն կօնսեր-
 վատիւ և քաղաքականօրէն ըէակցի-
 նէր իր ամենաապահով ու ամենահա-
 լատարիմ հենարանը՝ պետութեան
 կենտրոնում և ծայրերկրներում, կա-
 րող էր միայն այդ դասը լինել: Միւս
 կողմից՝ ի զուր չէ, որ այդ արածնեալ
 և փայփայլած դասը՝ ոուսական, վրա-
 ցական, թուրքական և այլն կեան-
 քում, ամեն կերպ աշխատում էր իր
 աղգային իրականութեան մէջ ան-
 խաղա պահել միապետութեան հեղի-
 նակութիւնը և բիւրօկրատական կա-
 ռավարութեան ըէակցիան՝ պետական
 ընդհանուր քաղաքականութեան շուր-
 ջը: Միապետութիւն և կարածատէր-
 տոհմային ազնւականութիւն— դրանք
 մէկը միւսին մասնացուցւած և մէկը
 միւսով պայմանաւորւած ինտիմութեա-
 ներ են:

Սակայն մենք միակողմանի կը լի-
 նէինք միւր զնահատումների մէջ, և թէ
 վրիպենք մեր ուշադրութիւնից քն-
 նութեան ենթակայ դասի կեանքում
 կատարւող մի կարեւոր երևոյթ:

Բանը նրանումն է, որ դեռ նախ
 քան յեղափոխութիւնը տոհմային ազ-
 նականութեան շարքերում կատար-
 ւում էր տնտեսական քայքայման և
 դասային կազմալուծման մի անու-
 ընալի պրօցես, որ առաջ էր ընթա-
 նում թէև դանդաղ, բայց ապահով
 քայլերով: Եւ այդ պրօցեսը ամենա-
 մեծ չափերով տեղի էր ունենում վրա-
 ցական և հայկական կեանքում: Փո-
 դային տնտեսութեան հարւածները
 խորխուրում էին նախորդ կամ քնա-
 կան տնտեսութեան հիւքերը: Արդիւ-
 նաբերական կենտրոնների ապահով
 վարձատրութիւնը և հնչիւն դրամի
 աւելի ու աւելի բարդացող կարիքը
 քաջում բերում է զիւղացիների լեզի-
 օններ մերկ գաւառներից դէպի ժխո-
 բալից քաղաքները: Այդ մասսայական
 գաղթին միանում են անազին քանա-
 կով նաև այսպէս կոչւած «մանր» կամ
 սակաւատէր ազնւականները: Իսկ ազ-
 նական-քեկական պրօլետարիագիա-
 յի ակնյայտնի պրօցեսն է, որ ան-
 խնայ ակոսներ է փորում տոհմային
 դասի շարքերում և դրանով առաջ
 բերում շահերի ու ձգտումների հակա-
 մարտ տարբերութիւններ միևնոյն դա-
 սի զանազան հատւածները միջև: Իր
 տնտեսական և սօցիալական կացու-

Թեամբ հասարակ գիւղացու, արհեստաւորի ու բանւորի վիճակին մասնւած մանր կամ ստորադաս ազնւականը, այսպէս կոչւած «ազնւական» (բէկ կամ մելիք) պրօլետարը՝ տարերայնօրէն ազատագրուում է այն պահպանողական հոգեբանութիւնից և բէակցիօն մտածելակերպից, որ այնքան յատուկ է խոշոր կալւածատէր դասին և արտօնութիւններով օժտուած ու հովանաւորուած կաստային: Եւ այն չափով, որով «ազնւական պրօլետարը» ազատագրուում է իր դասային տրադիցիաներից և հակուսմներից, նոյն չափով դառնում է նա մտաչելի իսկական պրօլետարիատի և գիւղացիութեան ըմբօսա, բողոքող ու համարձակ տրամագրութիւններին: Իրա լաւագոյն ապացոյցը դառնում ենք մենք վրաց իրականութեան մէջ, ուր առաջաւոր դեմօկրատիայի կազմակերպւած շարքերում կան ահագին քանակով «ազնւական պրօլետարներ» կամ պրօլետարականացած ազնւականներ:

Սակայն ազնւականութեան ստորին կամ սակաւատէր խաւերի պրօլետարականացման պրօցեսի հետ միաժամանակ առաջ է ընթանում ղաւասային անկման կամ կազմալուծման մի աննահանջ տենդենց նաև ազնւականու-

թեան վերին շերտերում: Եւ այդ երեւոյթը ևս ամենացայտուն կերպով նրկատուում է վրաց իշխանական բարձր դասի շարքերում:

Տնտեսական յարաբերութիւնների ինչ կարգի փոփոխութեան է ենթակայ կալւածատէր տիտղոսաւոր ազնւականութիւնը:

Ազրաբային արիստօկրատիայի շարքերում նկատուում է մի կողմից գրամական անըստարար եկամտատի և միւս կողմից քարոզացած պահանջների խրօնիքական ճգնաժամի տենդենց: Նատուրալ տընտեսութիւնը՝ իր երկրագործական հին պրիմիտիվ (նախնական) ձևերով, չի տալիս նրան այլևս այն գրամական կանխիկ հասոյթը, ինչպիսին պահանջում է նրանից նորագոյն քաղաքային կուլտուրան՝ իր փողային անտեսութեան շուայլ ծախսերով: Հետզհետէ եւրոպականացող կենցաղը, բարձրակարգ նիստ ու կացը, կուլտուրական բաւականութիւնների և հաճոյքների խտտապահանջ ճաշակը աւելի արագ են աճել ու բարդացել, քան այն տեխնիքական բարեփոխութիւնները, որոնք կարող էին առատացնել արիստօկրատ ազրաբի եկամտային աղբիւրները զիւզատնտեսութեան սահմաններում:

Այդօրինակ տապնապի ենթակայ կալածատէրերը կանխիկ զրամի միջոց գտնելու համար սկզբում սովորաբար դիմում են հողային բանկի «օգնութեան»: Բայց բանկային տոկոսների յետագայ բարդացումը ստեղծում է սնանկացող ազնւականների համար նոր, աւելի վտանգաւոր կրիզիս, առանց «իւղելու» նրանց կլորիկ գումարներով: «Փրկութեան» վերջին կէտը, որին հարկադրւած դիմում է անձարակ ազրարը, դա խոշոր կապիտալիստի փողային սնդուկն է: Ծախելով վերջինս (սովորաբար ոչ վրացի կապիտալիստի) իր հողային սեփականութիւնը, վրացի կալածատէր իշխանը փոխարկւում և դառնում է սոսկ կրաւորական մի ընկտիէ: Եւ այսպէս, ազնւականի տնտեսական դիրքի փոփոխութիւնը բնանհրաժեշտօրէն պայմանաւորում էր նաև նրա սօցիալական դերի փոփոխութեան հնարաւորութիւնը: Եւս գաղտնւում էր այլևս կալածատէր լինելուց, թէև շարունակում էր կրել իր տոհմային տիտղոսը և այլևս Ֆիկաիւ դարձած արտօնութիւնները: Հեռանալով կալածատիր չակաիւ դերից ու կոչումից, վրաց բարձր դասի կազմալուծւող մասնիկները բնադանօրէն

հետդհետէ խորթանում և հեռանում էին կալածատէրերի առանձնայատուկ հոգեբանութիւնից—նրանց հասարակական պահպանողականութիւնից և քաղաքական ընկացիօնէր տնդենցնելից: Հէնց այդ է պատճառը, որ վրաց իրականութեան մէջ—շնորհիւ տոհմային ազնւականութեան մեծաթիւ հատւածի պրօլետարականացման և կազմալուծւող մասնիկների — երբէք մասսայական յաջողութիւն չունեցաւ շիշտակի արտայայտւած որևէ պահպանողական և ընկացիօնէր կուսակցութիւն:

Այլ կերպով էին դասաւորւած յարաբերութիւնները թուրքական ընկութեան շարքերում և թուրք իրականութեան մէջ:

Վրաց և հայ*) ազնւականութեան

*) Թէ կալածատիրական յարաբերութիւններով և թէ թւով ու ազդեցութեամբ հայ տոհմային ազնւականութիւնը (ընկութիւն և մեխրութիւն) ոչ մի կերպ չի կարելի համեմատել վրաց և թուրք ազնւականութեան հետ, ինչպէս մենք տեսանք մասամբ տոկոսական թւերի համեմատութիւններից: Հայերի մէջ տիրապետող դասակարգը կալածատէր ազնւականութիւնը չէ, այլ քաղաքային բուրժուազիան. իսկ վերջինս վրայ երկար ծանրանալ չենք կարող. դա դուրս է մեր թեմայի ծրագրից:

շարքերում նկատուող վերոյիշեալ երկու կարգի տենդենցները—պրօլետարականացման պրօցեսը ստորին խաւերում և կազմալուծման երևոյթը վերին շերտերում—գոյութիւն չունեն նոյն չափով կամ շատ թոյլ արտայայտութիւն ունեն թուրք տոհմային ազնուականութեան (խանութեան, բէկութեան, աղալարութեան) շարքերում:

Ամենից առաջ պէտք է նկատել, որ Հոգային ունեցւածքով, արտօնութիւններով և տիտղոսներով իրարից շեշտակի գատուող այնպիսի խաւեր՝ այսպէս կոչւած դասային-իրաւական շերտաւորում, որ տիրապետող երևոյթ է կազմում վրաց ազնուականութեան կեանքում (մի կողմից սովորական ազնուականներ, միւս կողմից պատկառելի թւով բարձր իշխանական դաս) գոյութիւն չունի թուրք իրականութեան մէջ: Այստեղ ամենաբարձր դասը խանութիւնն է, իսկ խաների թիւը մատնորով կարելի է համարել մեր ծայրերկրում*): Նշանակում է իրաւա-

*) Այսպէս օրինակ ըստ Գովհասի կառավարչապետի խորհրդի անդամ Պրիբիլի գեղացման (1888 թ. տեւախներով), Բագլի նահանգի թուրք ազնական դասի մէջ եղել է միայն 3 խանական տոհմ, մինչդեռ ժառանգական կամ տոհմային բէկութիւնը կազմել է

կան արտօնութիւններով և աստիճանով թուրք տոհմային ազնուականութիւնը կանգնած է (շատ չնչին բացառութեամբ) միևնոյն մակարդակի վրայ:

Դա առաջին տարբերութիւնը:

Այդ փաստից հետևում է երկրորդ տարբերութիւնը: Թուրք իրականութեան մէջ բացակայում է մանր կամ սահաւատէր ազնուականների (բէկերի ու աղալարների) այն ստաւր շերտը, որ այնպիսի մեծ քանակով յատուկ է վրաց հասարակական կազմին: Հետևապէս մասսայական պրօլետարականացման այն աննահանջ պրօցեսը, որ սովորական երևոյթ է կազմում վրաց ազնուականութեան շարքերում, չենք գտնում թրքութեան մէջ նոյն չափերով. անանկացող և պրօլետարականացող թուրք բէկական տոհմեր կան անշուշտ, բայց մասսայական երևոյթ չէ դա:

Այդ էլ երկրորդ տարբերութիւնը:

Վերջապէս երրորդ տարբերութիւնը կայանում է նրանում, որ կազմալուծման և անկման այն արտայայտիչ

850 տոհմ (ըստ բէկական յանձնաժողովների նոյն իսկ 1014 տահմ): Տես մանրամասն В. Линденъ „Высшіе классы коренного населения кавказскаго края...“, Тифлисъ, 1917 г.

տենդենցը, որ վաղուց սկսել է աւելի ու աւելի ուժեղ չափերով առաջ էր ընթանում վրաց ազրարային արիստոկրատիայի կամ բարձր իշխանական դասի շարքերում, գոյութիւն չունի նոյն սուր յարաբերութեամբ թուրք բէկութեան կեանքում: Այդ երևոյթը ևս թոյլ ու սակաւ արասայտութիւն ունի թուրք իրականութեան մէջ: Նախ և առաջ պէտք է նկատել, որ թուրք բէկութիւնը աւելի բազմակողմանիօքէն է կապւած գիւղատնտեսութեան հետ, քան վրաց ազնւականութիւնը: Բացի հողագործութիւնից, թուրք բէկերը սովորաբար զբաղւում են նաև անասնաբուծութեամբ, պահում են կաթնատու անասուններից շատ տեսակներ անագին քանակով (կովեր, գոմէշներ, ոչխարներ, ձիաներ և այլն)՝ օգտուելով իրանց բաժին ընկած հսկայատարած արօտատեղիներին: Թէև այգեգործութեամբ չեն զբաղւում թուրքերը, ինչպէս վրացիներն են (իժա հախեթեան), բայց նրանք պահում են ընդարձակ այգիներ, մանաւանդ խաղողի, և օգտագործելու համար վաճառում են իրանց հարեաններին (սովորաբար հայերին):

Ի՞նչ է հետևում այդ բոլորից: Այն, որ թուրք բէկութեան նիւթական բա-

րեկեցութիւնը ապահովւած են մի քանի ազբիւրներով. եթէ պրիմիալ հողագործութիւնը չի հայթհայթում պահանջւած եկամուտը, անասնապահութիւնը տալիս է ապրուստի հարկաւոր միջոցները՝ հողագործութեան ճգնաժամի տարիներին: Երկրագործական բերքերի և անասնապահութեան յաջող տարիներին թուրք բէկութիւնը շատ աւելի մեծ եկամուտ ունի և հարստանալու ազբիւրներ են նրան ստորադրւած, քան վրաց ազնւականութիւնն ունի:

Դրա վրայ աւելացրէք հետեւեալ կարևոր հանգամանքը: Բանը նրանումն է, որ փողային տնտեսութեան բարդացած պահանջները չեն ստեղծել թուրք բէկութեան համար այն տընտեսական տազնապը, ինչ նկատեցինք մինք վրաց ազնւականութեան նկատմամբ: Թուրքութիւնը առհասարակ, մանաւանդ զաւառներում, և թուրք վերին դասը մասնաւորապէս, իրանց ընդհանուր կենցաղավարութեամբ շատ են հեռու նորագոյն կուլտուրական նիւտ ու կացից: Թուրք բէկութիւնը ազատ է բաւականութիւնների և հաճոյքների շոյլ ծախքերից, որոնք այնքան յատուկ են վրաց իշխանական դասին, որը իր պարագ կեանքը

սիրում է մաշել քաղաքներում և հա-
ղորդակից լինել քաղաքային կուլտու-
րայի հրապուրիչ էջերին: Թուրք բե-
կութիւնը, ընդհանուր առմամբ վեր-
ցրած, պահպանել է տակաւին իր ա-
սիական-յետամնաց կեանքի նահապե-
տական ձևերը, իր սակաւապետու-
թիւնը, հետևապէս նա չունի կան-
խիկ դրամի այն կարիքը, իսկ ա-
նաջողութեան տարիներին չունի նա
այն տնտեսական տաղանապը, դրամա-
կան կրիզիսը, ինչ յատուկ է վրաց
ազնւականութեան: Իսկ դա նշանա-
կում է, իր հերթին, որ Թուրք բեկու-
թիւնը ազատ է այն կալածատիրա-
կան կրիզիսից և դասային կազմալուծ-
ման ու անկման այն տեղեկանցից, որ
գտնում ենք վրաց ազնւականութեան
շարքերում:

Սակայն նոյն իսկ այն ժամանակ,
երբ Թուրք բեկութեան շարքերում
պատահում են սնանկութեան դէպքեր
և հողերի վաճառքի առիթներ, Թուր-
քերը աշխատում են մեծ ժառանգ, որ
սնանկ Թուրք բեկի ձեռքից կալած-
ները անցնեն նորից Թուրքի ձեռքը:
Վերջինս լինում է կամ Թուրք կալա-
ծատէր և կամ Թուրք կապիտալիստ:
Ահա այս վերջինն է, որ պահասում է
վրացիների մէջ: Թուրք խոշոր դրա-

ժառանգներ՝ բեկեթից կամ ոչ բեկերից,
բաւական շատ են Թուրքերի մէջ, մա-
նուանդ Բագրի շրջանում: Թուրք կա-
պիտալիստները զննելով սնանկացող
բեկերի կալածները, դառնում են միա-
ժամանակ կալածատէրեր, միացնե-
լով իրանց մէջ տնտեսական տիրա-
պետութեան երկու յատկութիւններ՝ և՛
դրամատիրական և՛ հողատիրական:
Հետևապէս դասային կազմալուծման
այն տեղեկանցը, որ հեռագնեռէ նւագեց-
նում էր վրաց խոշոր կալածատէրերի
թիւը, չէր կարող տեղի ունենալ Թուրք
իրականութեան մէջ, երբ մեծ մա-
սամբ Թուրքն էր գնում Թուրքի ու-
նեցածքը: Ընկնում էր Թուրք կալ-
ածատէրը, նրան փոխարինում էր
Թուրք դրամատէրը, տարբերութիւնը
միայն այն է, որ սնանկացող տոհմա-
յին կալածատիրոջ միշտ չի փոխարի-
նում տոհմային ազնւական դրամա-
տէրը, այլ նաև ուրիշ դասի պատկա-
նող Թուրք կապիտալիստը քաղաքա-
յին բուրժուազիայից:

Ահա հէնց այդ վերջին տարրերն են,
որ պահասում են վոացիների մէջ:
Թուրք խոշոր կալածատէրերի կողքին
կան նաև պատկառելի Թուրք Թուրք
խոշոր կապիտալիստներ՝ բեկական և
ոչ բեկական դասերից: Մինչդեռ վրա-

ցիւների մէջ հազաւազում է և մատերով միայն կարելի է թուել խոշոր դրամատէրերի քանակը: Գաւառական կաւածատիրութեան հետ միասին թուրքական էլեմենտը դիզած ունի նիւթական հարստութիւն խոշոր կենտրոններում՝ թէ սոսկ դրամով, թէ արգիւնարեութեան, առևտրի միջոցով և թէ անշարժ ունեցւածքով (հողեր, տըներ և այլն):

Այդ տեսակէտից ուշադրութեան արժանի է Բագու քաղաքը: Ճիշտ է, տեղական արգիւնարեութեան մէջ առանձին յաջողութիւն չունեցան թուրքերը և տեղի աւին իրանց դիրքերը աւելի ուժեղ մրցակիցներին՝ բազկացած հարևաններից և օտարներից: Մակայն դրամական ֆինանսական հարստութիւնը, խոշոր ու միջին առևտրի խիստ պատկառելի մասը, անշարժ գոյքերի, յատկապէս տների մեծագոյն մասը կենտրոնացած է թրքութեան ձեռքը մի քաղաքում, ուր նա վաղուց է դադարել ազգաբնակչութեան մեծամասնութիւնը կազմելուց: Եւ այդ նոյն քաղաքում՝ անբաւ հարստութիւնների կենտրոն Բագում, խմբւած է թուրք տոնմային բէկութիւնից և ազալարութիւնից մի բաւական մեծ թիւ: Հատ աւելի մեծ քանակով, քան որևէ ու-

րիշ թուրքաշատ քաղաքում, քան օրինակ Գանձակում*): Եւ յիշածս թուրքական հարստութիւններից պատկառելի մի մասը կենտրոնացած է Բագւարնակ թուրք բէկերի և ազալարների ձեռքը:

*) Հատ 1897 թ. ընդհանուր ժողովրդագրութեան աւելումների «Первая всеобщая перепись населения Российской имперіи 1897 г.», տես Կովկասի նահանգների վերաբերեալ հատորները) թուրք տոնմային ազնւականների (բէկերի, ազալարների, վեքիլների) թիւը Բագւարի նահանգում եղել է 12286 հոգի (ընտանիքի անդամներով հանդերձ), դա կազմել է նահանգի տոնմային ազնւականութեան ընդհանուր թուի (17211 հոգի) 71,40 տոկ., մինչդեռ նահանգական թուրք (թաթար) ազգաբնակչութիւնը կազմել է նահանգի ողջ ազգաբնակչութեան ընդհանուր թուի միայն 58,68 տոկոսը: Գանձակի նահանգում արդէն թուրք տոնմային ազնւականների թիւը եղել է 23530 հոգի, որ կազմել է նահանգի ողջ տոնմ. ազնւակ. 80,50 տոկ., մինչդեռ նահանգական թուրք ազգաբն. կազմել է ողջ նահանգի ընդհ. ազգաբն. 60,80 տոկոսը: Այսպէս ուրեմն երկու նահանգներում էլ թուրք տոնմ. ազնւականութեան տոկոսը՝ ընդհանուր թուից, աւելի բարձր է, քան թուրք ազգաբնակչութեան տոկոսը՝ նահանգական ազգաբնակչութեան ամբողջութիւնից: Ինչ վերաբերում է քաղաքներին, Բագում թուրք տոնմ. ազնւականների թիւը եղել է 751 հոգի, ասել է նահանգի ողջ թուրք ազնւականութեան 6,11 տոկ., կամ քաղաքային (Բագւի) ողջ թուրք ազգաբնակչու-

Ի՞նչ է հետևում մեր այս բոլոր դիտողութիւններից: Այն, որ մեր ծայրերի տոհմային կալածատէր ազնւականութեան երկու տիրապետող հատածները՝ վրացական և թուրքական իրականութիւնների մէջ,—որքան էլ ընդհանուր լինեն նրանց տնտեսական տիրապետութեան շահերը և սօցիալ-քաղաքական ձգտումները,—այնուչամենայնիւ նրանք տարբեր պայմաններում են գտնուում՝ թէ տնտեսական և թէ սօցիալական-գոսային յարաբերութիւնների տեսակէտից: Եթէ այդ տարբերութիւնները ամփոփենք մի քանի կէտերի մէջ, կստանանք հետևեալը.

1. Վրաց տոհմային կալածատէր ազնւականութեան ստորին կամ սակաւատէր շերտերում տեղի ունեցող մասսայական պրօլետարականացման պրօցեսը, իբրև տիրապետող երևոյթ, չենք գտնում թուրք տոհմային կալ-

թեան 1,88 տոկոսը: Իսկ Գանձակ քաղաքում թուրք տոհմային ազնւականների թիւը եղել է 550 հոգի (201 հոգով պակաս Բագրի թուրք ազնւականների թւից), որ կազմել է Գանձակի նահանգի սղջ թուրք ազնւականութեան միայն 2,34 տոկոսը, իսկ քաղաքային (Գանձակի) սղջ թուրք ազգաբնակչութեան 3,15 տոկոսը:

ւածատէր բեկութեան ու ազալարութեան շարքերում:

2. Խոշոր կալածատիրական կրիզիսը և դասային սնանկութեան, կազմալուծման ու անկման տենդենցը, որ այնքան յատուկ է վրաց ազնւականութեան վերին շերտերին, նոյն սուր յարաբերութեամբ գոյութիւն չունի թուրք բէկութեան կեանքում:

3. Իբրև կուլտուրապէս յետամնաց և սակաւապիտ մի տարր, թուրք բէկութիւնը համեմատաբար ազատ է այն տնտեսական տափնապից և վրամական ճգնաժամից, որին ենթակայ է պարսպ ու շոալլասէր թաւաղների դասը վրացիների մէջ:

4. Թուրք կալածատէր բէկութեան թիկունքում վեր է ցցել թուրք դրամատէր բուրժուազիան (բաղկացած քաղքենիներից, բէկերից ու ազալարներից) քաղաքներում, որի շնորհիւ սնանկացող թուրք կալածատիրոջ հողերը գլխաւորապէս անցնում էին թուրք կապիտալիստների ձեռքը. մինչդեռ վրացական կեանքում չկայ դրամատիրական այդ ոյժը և սնանկացող ազնւականի կալածները անցնում էին գլխաւորապէս ոչ վրացիների ձեռքը:

5. Թուրք բէկութիւնը շատ աւելի բազմակողմանիօրէն է կապւած գիւ-

զատնտեսական զբաղմունքների հետ, քան վրաց ազնւականութիւնը: Թուրք բէկութիւնը ամուր հաստատուած է իր հողերի վրայ, սերտ կապւած է գիւղական-գաւառական կեանքի հետ, շատ աւելի քիչ է գաղթի ենթակայ դէպի քաղաքները, քան վրաց ազնւականութիւնը*): Իսկ զբանով թուրք բէկութիւնը անմիջապէս և շատ աւելի շօշափելի ձևերով է իր ոյժն ու հեղինակութիւնը անխալտ պահում գաւառական կեանքում, գիւղացիական մըթնոլորդում, քան վրաց ազնւականութիւնը:

*) Իրաձքիս II մասում ցոյց տւինք, որ թուրք տոհմ. ազնւականութ. աւելի նւազ թւով է ապրում քաղաքներում, քան հայ ազնւակ.: նոյն յարաբերութիւնը գտնում ենք նաև վրաց ազնւակ. նկատմամբ: Քուսթայիսի նահանգը նոյնպիսի մի որրան ու օջախ է վրաց ազնւականութեան համար, ինչպէս Քանձակի նահանգն է թուրք բէկութեան համար: Մինչդեռ Քուսթայիսի նահանգի քաղաքներում կենտրոնացած է նահանգի ողջ վրաց ազնւականութեան 13,00 տոկոսը, Քանձակի նահ. քաղաքներում գտնում ենք միայն 9,80 տոկոս թուրք բէկութիւն (հայերից 32,53 տոկ.): Թիֆլիսի նահանգում կան թւով համարեա (շատ սակաւ առաւելութեամբ) նոյնքան վրացի ազնւականներ (13901 հոգի): որքան Բագւի նահանգում կան թուրք բէկեր (12286 հոգի): Սալայն մինչդեռ Թիֆլիսի նահանգի վրաց ազ-

6. Կարևոր տարբերութիւնների շարքին է պատկանում և հետևեալը: Շնորհիւ Վրաստանում զես շատ վաղուց գոյութիւն ունեցող ագրարային շարժման և հողազուրկ ու սակաւահող գիւղացիութեան ակտիւ կազմակերպման՝

նւականների 41,40 տոկ. կենտրոնացած են նահանգի քաղաքներում, Բագւի նահ. թուրք ազնւականներից միայն 29,88 տոկոսն է (հայերից 79,10 տոկ.) ապրում նահանգի քաղաքներում: Նշանակում է ամենամեծ տոկոսով քաղաքներում կենտրոնացած է հայ, ապա վրացի և այնուհետև միայն թուրք, ամենալին ազնւականութիւնը: Այդ փաստը ունի իր մեծ նշանակութիւնը, որ գալիս է աւելի ամբապնդելու մեր վերոյիշեալ դիտողութիւնները: Ովքեր են գալիս քաղաքները, ամենից առաջ ազնւականութեան պրօլետարականացած մասնիկները, որոնք հաստատուելով քաղաքներում, փաստօրէն խզում են իրանց կապը հողից ու հողագործութիւնից. այնուհետև վերին դասի անանկացած ու կազմալուծւած մասերը, որոնք ապրուստի միջոցներ գտնելու վերջին կայանը որոնում են քաղաքներում. ապա ազնւականութեան կրթւած սերունդը՝ պրօֆեսիօնալ ինտելիգենցիան, որը զանազան պաշտօններով և ծառայութիւններով հաստատուում է քաղաքներում. վերջապէս նրանք, որոնք իրանց հողային ըէնտիէն վայելում են քաղաքներում՝ հիմնելով իրանց բարեկեցութիւնը քաղաքային կուլտուրայի ծոցում: Այս յիշեալ հատւածներէ, մասնաւոր առաջին երեքի մէջ թուրք բէկութիւնը ամենաքիչ մասնակցութիւնն ունի:

առաջաւոր դեմօկրատիայի դրօշակի տակ, վրաց ազրարային արխտօկրատիայի սօցիալական տիրապետութիւնը միշտ ենթակայ է եղել վտանգի: Եւ եթէ այդ վտանգը շօշափելի է հարւածներ չի հասցրել խոշոր կալւածատիրութեան, ապա դա շնորհիւ հին ստիկանական բէժիմի արթուն հրակողութեան, որը բնի մէջ խեղդել է միշտ թոյլերի շարժումը՝ ուղղած ուժեղների դէմ: Թուրք կալւածատէր բէկութիւնը, ընդհակառակը, ազատ է եղել այդպիսի վտանգից: Ամուր ու անասան է եղել նրա սօցիալական տիրապետութիւնը գաւառական կեանքում, յարգի ու վճռական է եղել նրա հեղինակութիւնը գիւղացիութեան շարքերում: Քիչ շատ կազմակերպած ազրարային շարժում չեն ճանաչում թուրք գիւղացիական մասսաները, բէկը տէր ու իշխան, հրամայող ու տնօրինող է եղել միշտ նրանց աչքում, հովանաւորւած ու իրաւագօր օրէնքի առջ:

Ահա այսպիսի նպաստաւոր պայմաններով է թուրք բէկութիւնը տարբերել վրաց ազնւականութիւնից:

Բնական է, որ տնտեսական և սօցիալական տիրապետութեան այդքան ապահով հիմքեր ունեցող դասը պիտի

ունենար համապատասխան հոգեբանական և գաղափարային աշխարհ: Հասարակականօրէն այնքան կօնսերվատիւ և քաղաքականօրէն այնքան բէկացիօնէր մի դաս, ինչպիսին հանդիսանում են թուրք կալւածատէր բէկութիւնն ու աղալարութիւնը, — նմանը գոյութիւն չունի մեր ծայրերկրում: Այդ դասի կօնսերվատիզմն ու բէկացիօնէրութիւնը էլ աւելի է խտանում, շնորհիւ նրա կրթական-կուլտուրական յետամնացութեան և կրօնական նախապաշարմունքներին: Թուրք տոհմային բէկութիւնը, որպէս այդպիսին, ՚ի բնէ թշնամի է ոչ միայն հասարակական բարեփոխութիւնների, քաղաքացիական ազատութեան և քաղաքական բէֆօրմների, այլև կուլտուրական առաջագիմութեան և մասսայական լուսաւորութեան: Այդ իմաստով թուրք բէկ աղալարութիւնը ոչ միայն հակաազատագրական կամ հակայեղափոխական մի տարր է, այլև հակակուլտուրական: Այդ դասը կարող էր ամենաապահով պատւանդանը ծառայել ամեն մի բռնապետական բէժիմի, ամեն մի ան բէկացիայի:

Եւ իբրև, նա խաղում էր հաւատարմութեամբ այդ դերը հին ցարական բէժիմի օրով:

Առաջ, նախապատերազմական շրջանում, թուրք կալածատէր դասը իր մտաւորականութեամբ, ոչ միայն պետական լոյալ մի տարր էր, այլև հաւատարիմ գործիքը բիւրօկրատական այս կամ այն բէակցիօնէր քաղաքականութեան, որից վերջին հաշուով օգտուում էր և ինքը, իրքև բէակցիօնէր մի դաս: Թուրք բէկութիւնը ոչ միայն դժգոհ լինելու կամ թշնամանալու առիթ չունէր չին կառավարութեան դէմ, այլև ունէր շատ առիթներ երախտապարտ լինելու նրան: Իր դասսային արտօնութիւնների, կալածատիրական և գիւղատիրական իրաւունքների մէջ ամբաստանել է այդ դասը միայն ուս բիւրօկրատական կառավարութեան միջոցով: Նշանակում է վերջինիս բէժիմի ուժեղութեան, ամուր ուհատու կուրսի և յարատեւութեան մէջ կենսապէս շահագրգուած էր ինչպէս համայն Ռուսիայի կալածատէր ազնւականութիւնը, այնպէս էլ թուրք բէկութիւնն ու աղաւարութիւնը մեր ծայրերկրում: Եւ հասարակական ոյժերի ամեն մի փորձ, քաղաքական խմբակցութիւնների ամեն մի շարժում, որ կյանդգնեն ըմբոստանալ և վտանգ սպառնալ «պատմականօրէն սրբագործւած կարգերին», կարող են

միայն ամենաուժեղ հակահարածի հանդիպել ամենից առաջ վերոյիշեալ դասի կողմից:

Ասածներես ամենահամոզեցուցիչ ապացոյցը կարող է ծառայել 1905—1906 թ. յեղափոխութեան օրով ուս կառավարութեան վարած քաղաքականութիւնը բէակցիօնէր տարրերի միջոցով: Հակայեղափոխութեան բնական գործօնները և միապետութեան հաւատարիմ նեցուկները կարող էին միայն Ֆէօդալական ոյժերը՝ կալածատէր ազնւականները լինել, որոնց միջոցով ոստիկանական կառավարութիւնը մի կողմից ջարդերի քաղաքականութիւն մղեց Ռուսիայում՝ կազմակերպւած սև հարիւրեակների միջոցով, իսկ միւս կողմից հայ-թրքական ընդհարումներ առաջ կոչեց մեր ծայրերկրում, հիմնւելով երկուստեք լաւած տրամադրութիւնների վրայ: Յեղափոխութեան վիժման մէջ շահագրգուած էին անխտիր Ռուսիայի բոլոր ժողովուրդների բէակցիօնէր տարրերը: Իսկ բոլոր բէակցիօնէր տարրերի աննահանջ աւանդաբղ կազմում է տոհմային կալածատէր ազնւականութիւնը: Ինչ երկրամասում և որ իրականութեան մէջ տիրապետում է այդ դասը, այնտեղ կարող էր միա-

պետութիւնը յուսալ ապահով նեցուկների վրայ և իր հակայեղափոխական արիւնաներկ ձեռնարկի գործիքներ դարձնել նրանց:

Հայ-թրքական ընդհարումների օրով այդ նեցուկների դերը ստանձնեց թուրք տիրող ու ղեկցիօնէր դասը, որ իր հերթին պանիսլամիզմի անուշով առաջ հրեց և գործիք դարձրեց թուրք անդիտակից և ֆանատիկ մասսաներին:

Այն ժամանակ թուրք արտօնեալ դասը իր հակայեղափոխական ձգտումներով և շարժումով պետական էլիմենտի դեր էր խաղում. պետական այն չափով, որ չափով նրա դերը համապատասխանում էր ժամանակի պետական իշխանութեան—այն է՝ ցարական կառավարութեան—ցանկութիւններին և պահանջներին:

Ուրեմն, լաւ յիշեցէք ընթերցող, առևտական առաջին յեղափոխութեան օրով թուրք տիրապետող և ղեկցիօնէր բէկութեան ու աղալարութեան (դրանց հետ միասին նաև թուրք սակաւութիւ խոշոր բուրժուազիայի) վարած քաղաքականութիւնը եղել է նաև կայնղափոխական, բայց պետական. իսկ հայ-թրքական ընդհարումները (ինչպէս և հրէական պոզրոմները կենտրոնում) չեն եղել ինքնանպատակ

երևոյթներ՝ իրանց ազգային տենդենցներով ու ներքին բնոյթով. ո՛չ, նրանք եղել են միայն պետական իշխանութեան վարած հակայեղափոխական քաղաքականութեան ուղղեցրոյց միջոցներից մէկը: Մի տեղ այդ քաղաքականութեան նեցուկ ու գործիք է ծառայել ուս Ֆանատիկ մութիկութիւնն ու լուսպին պրօլետարիատը, իսկ միւս տեղ՝ թուրք ֆանատիկ մասսաները՝ բէկական իդէօլօգիների հրահրումներով: Մի տեղ ոստիկանական սլրօվօկացիաներին զո՛հ է բերել հրէութիւնը, միւս տեղ՝ հայութիւնը:

Յար և նման երևոյթներ:

Միանգամայն տարբեր էին թուրք տիրապետող դասի հակայեղափոխական ձգտումներն ու շարժումը մեր օրերին:

IV

Պատերազմը եւ պանիսլամիզմը.

Պատերազմի շրջանում թուրք տիրապետող դասակարգը — տոնմային կալաժատէր բէկութիւնը և դրամատէր բուրժուազիան — բնականաբար փոխեց իր դիրքը դէպի ուս իշխանութիւնը: Պատերազմը արաաքին քաղաքականութեան հարց է. բայց մի

հարց, որ ներկայ դէպքում վերաբերում է այն դրսի պետութեան, որի նկատմամբ կովկասաթրքութիւնը անտարբեր չէ եղել երբէք և չէր էլ կարող լինել:

Ոչ ոքի համար դադանիք չէ, որ թուրք տիրապետող դասակարգի հասարակական ինտելիգենցիան վաղուց ՚ի վեր փայփայում էր քաղաքական քարձրաթուիչ իդէալներ, որոնց իրականացման գործօնները որոնում էր նա իր բնակավայրի սահմաններից դուրս: Թուրք իրականութեան մէջ հասունացած այն յայտնի իդէական հոսանքը, որ ձգտում էր քաղաքական վերածնութեան մի ընդհանուր դրօշակի տակ համախմբել արևելքի բոլոր իսլամական տարրերին, անւանում ենք պանիսլամիզմ (կամ համախլամականութիւն): ՚ի հարկէ, այդ հոսանքը՝ իր առաջագրած նպատակներով, կարող է նոյնքան ծիծաղելի թուալ, որքան պանսլավիզմը (համաւրաւոնականութիւն), պանգերմանիզմը (համագերմանականութիւն), կամ մանր ժողովուրդներից՝ պանպոլօնիզմը (համալեհականութիւն) և պանարմենիզմը (համաճայկականութիւն): Կարևորը դա չէր, այլ այն, որ յիշածս հոսանքները կային և կան իրենց ար-

տայայտիչ տենդենցներով, իրենց տիրապետութեան հասած իդէօլօգիայով:

Վերածնութեան, ցրած հասուածների համախմբան և օտար տիրապետութիւց ու ազդեցութիւնից ազատագրման դուռ քաղաքական իդէալներ էին արծարծում այդ հոսանքները: Մի տեղ, պարզած դրօշակը փողփողում էր ցեղային պատկանելիութեան զաղափարի անունով (պանսլաւիզմն ու պանգերմանիզմը), միւս տեղ՝ կրօնական պատկանելիութեան զաղափարի անունով (պանիսլամիզմը): Մէկ թէ միւս դէպքում սոսկ արտաքին հմայիչ շղարշի տեղ են ծառայեցնում ցեղն ու կրօնը. էականը, կրկնում ենք, շարժման հիմքում ընկած քաղաքական իդէալներն են:

Եւ ինչպէս որ պանսլաւոնական հոսանքը իր իդէալների իրականացման յաջողութիւնը կապում էր սլաւոն ցեղի ամենամեծ ու հզօր ներկայացուցչի՝ Ռուսիայի՝ յաղթական քաղաքականութեան հետ. պանգերմանական հոսանքը նոյն յոյսերը տաժում ու դնում էր Գերմանիայի վրայ. ճիշտ նոյն կերպ էլ պանիսլամական հոսանքը՝ արևելքի որ անկիւնում էլ ուզում է թող լինի, քաղաքական վերածնութեան և համախմբման բոլոր սպասելիքները կարող

էր ունենալ մի պետութիւնից, որը թէև ինքնին վերցրած մի առանձին պատկառելի տեղ չի բռնում արդի կապիտալիստական-միլիտարիստական խոշոր ոյժերի շարքում, բայց այնուամենայնիւ առաջինն է ողջ իսլամական աշխարհում, որը, իբրև զինւորական պետութիւն (militärstaat), կարող է այս կամ այն յաջող պայմաններում իրականացնել գէթ մինիմումը պանիսլամական ծրագրի քաղաքական ձգտումներին:

Այդ պետութիւնը Թիւրքիան է օտոմանիան կայսրութիւնը: Եւ որովհետև պանիսլամական հոսանքի քաղաքական մերձաւոր սպանելիքները կայանում էին Թիւրքիայի տիրապետութեան կամ ազդեցութեան տարածման մէջ՝ մահմեդական ցրած հատուածների վրայ, և այդ ակնկալութիւնները կապուած էին բացառապէս զինւորական Թիւրքիայի զէնքի յաջողութեան հետ, ուստի պանիսլամիզմը՝ աւելի սահմանափակ իմաստով, կարող ենք անւանել պանիթիւրքիզմ: Վերջինս առաջին ստորադաս զաղափարն է: Պանիսլամիզմը աւելի լայն է, վերացական ու համապարփակ, ամփոփուած է իր մէջ քաղաքական իդէալի մաքսիմումը: Պանիթիւրքիզմը աւելի

լի սահմանափակ է ու շօշափելի և ամփոփուած է քաղաքական մերձաւոր ձգտումները (մինիմումը): Նշանակուած է պանիսլամիզմն ու պանիթիւրքիզմը ոչ միայն մէկը միւսին չեն խանգարում ու չեն հակասում, այլ ընդհակառակը, նրանք միմեանց լրացնում և ամբողջացնում են: Կարճ՝ նրանք, էապէս վերցրած, միեւնոյն հոսանքի տարրեր արտայայտութիւններն են:

Ահա այդ հոսանքը փայփայող զասակարգը և այդ հոսանքի զաղափարները արծարծող իդէօլոգները չէին կարող ոչ մի կերպ անտարբեր լինել մեր օրերի ուսութիւրքական պատերազմի շրջանում: Նրանք եղել են ուսուցիչսանտութեան հաւատարիմ հպատակները և հարկ եղած դէպքում նոյն իսկ ցարական ըէակցիայի ապահով նեցուկները միայն այն չափով, որ չափով դա վերաբերել է պետական ներքին քաղաքականութեան հարցերին: Իսկ արտաքին քաղաքականութեան սահմանում, ուր հարւածը ուղղւած է այն ոյժի դէմ, որից այնքան սպասելիքներ ունի պանիսլամիզմը, կասկած չկայ, որ մեր ծայրերկրի թուրք տիրապետող դասակարգը՝ իր ինտելիգենցիայով, ոչ միայն չէր կարող անտարբեր լինել, այլև պիտի զաղարէք

ուս պետութեան «լոյսը քաղաքացի-
ները» լինելուց: Միանգամայն ընական
է, որ թուրք-թաթար պանիսլամիստ-
ները պէտք է պատերազմի հարցում
փայտաշէին և պաշտպանէին թիւրքա-
կան օրիննտացիան: Իա ուրիշ բան
չի նշանակում, բայց եթէ այն, որ պա-
նիսլամիստների համար յոյժ փափա-
գելի էր տեսնել թիւրքիայի յաղթու-
թիւնը Ռուսիայի դէմ: Չէ որ միայն
այդ դէպքում հնարաւոր էր սպասել
համիսլամական հոսանքի քաղաքական
ձգտումների դէմ մասամբ իրականա-
ցումը:

Սակայն պատերազմի վտանգաւոր
մօմենտին պաշտպանել արտաքին թըշ-
նամու օրիննտացիան, այսինքն ցան-
կանալ և սպասել նրա նուաճողական
յաղթանակները սեփական երկրի պե-
տական իշխանութեան դէմ, դա նշա-
նակում է, միւս կողմից, դադարել
պետական էլեմենտ լինելուց, ուրիշ
խօսքով դառնալ հակապետական էլե-
մենտ սեփական երկրում: Ճիշտ այն-
պէս, ինչպէս ուսական օրիննտացիա
պաշտպանող թիւրքաճայութիւնը հա-
մարուեց հակապետական և իլլոյսլ մի
տարր թիւրքիայի կողմից, այնպէս էլ
թիւրքական օրիննտացիա պաշտպանող
կովկասաթրքութիւնը առանց այլ և

այլի դարձաւ հակապետական և իլ-
լոյսլ տարր Ռուսիայի պետական շա-
հերի տեսակէտից:

Ռուս բիւրօկրատիան շատ լաւ գի-
տէր այդ հանգամանքը, բայց կարիք
չէր զգում ճնշումների դիմելու, որով-
հետեւ թուրք ընկերներին ոչ մի-
այն խուսափում էին ամեն մի թշնա-
մական աւելորդ ցոյցերից, — եթէ չհա-
շուենք աջարացիների սոսկ տեղական
ընաւորութիւն ունեցող սահմանադը-
խային ապստամբութիւնը, — այլ և ար-
տաքին քաղաքավարութեան սահման-
ներում արտայայտում էին լոյսլ քա-
ղաքացիների խորին հպատակութեան
զգացմունքները և հարկ եղած
դէպքում յատուկ պատգամաւորու-
թեամբ արեւաշատութիւնը մաղթում
ուս պետերի (կայսրի կամ փոխար-
քայի առաջ):

Կովկասեան պանիսլամիստների հա-
կապետական տենդենցները առանձնա-
պէս աչքի էին դառնում այն դէպքե-
րում, երբ ուս զօրքը անաշտողութիւն
էր ունենում և պարտութիւն էր կրում
ուս-թիւրքական և ուս-գերմանա-
կան ճակատներում: Յիշեցէք Սարի-
ղամիշի ճակատամարտի հաւուր վայրկ-
եանները, այնուհետեւ ուսական զօր-
քի մեծ նահանջը Կարպատներից և

կրած խոշոր պարտութիւնները Լեհաստանում: Պանիսլամիտները միաժամանակ և բնականօրէն առաջին կարգի գերմանօֆիլներ էին, որովհետև նրանք իրանց պանթիւրքական ձգրաունմների իրականացումը վերջին հաշուով սպասում էին առհասարակ գերմանական զէնքի յաջողութիւնից:

Սակայն հակապետական տենդենցներով տոգորուած և թիւրքական օրինատացիայով ոգևորուած էր ոչ միայն թուրք տիրապետող գասակարգը՝ կալուածատէր բէկութիւնն ու դրամատէր բուրժուազիան, այլև մուսուլման ազգաբնակչութեան լայն խաւերը: Ոչ որի համար գաղտնիք չէ, որ մանձեղական իրականութեան մէջ գոյութիւն չունի տակաւին գաղափարային խմորումներ և քաղաքական հոսանքների այն նորագոյն շերտաւորումը կամ պիֆերենցիացիան, որ յատուկ է ամեն մի կուլտուրապէս բիչ թէ շատ դարգացած ժողովրդի հասարակական կեանքին և որ գոյութիւն ունի այս կամ այն չափով Անդրկովկասի հայութեան և վրացիութեան կեանքում: Թուրք-թաթարական ժողովրդական տարրերը, տարբարխտաբար, ներկայացնում են իրանցից դեռևս կրօնական ու նահապետական նախապաշարմունքներով

կաշկանդուած, հօտային բնազդներով ընդարմացած մի գորշ զանգուած, որ շարունակում էր տակաւին, մանաւանդ հին ռէժիմի օրով, հլու ու անքննադատ գլուխ խոնարհեցրել ազգայնկրօնական հեղինակութիւնների առաջ և անգիտակից գործիք ծառայել վերին դասի ներկայացուցիչների վարած քաղաքականութեան ցանցերում:

Թուրքական մասսաները,—քաղաքային և գիւղական դեմօկրատիան,—ինչպէս և ամեն մի մանր ժողովուրդի մասսաներ ուստի կերկնակամարի տակ, ճնշուած էին բիւրօկրատական կառավարութեան դրագոնական քաղաքականութիւնից: Ուրեմն պանթիւրքիտա իդէօլօգիները իրանց հակապետական կենտրոնախոյս տենդենցների համար ունէին գործնէութեան և մասսայական յաջողութեան նպաստաւոր հող թուրքական իրականութեան մէջ: Առաջին հայեցքից չափազանց հրապուրիչ է հասարակ մասսաների համար հետևեալ հեռանկարը. ազատագրուել ցարական ըէակցիայի ազգային-կրօնական և կուլտուրական-կրթական ճնշումներից, ուրիշ խօսքով թօթափել ռուս պետութեան օտար լուծը և միանալ համակրօնակից և համացեղակից թիւրքիային, այսինքն

լինել պետականօրէն իշխող ազգի մասնիկը:

Ահա այս գրաւիչ հեռանկարներով էին պանթիւրքիստները արբեցնում և դիւթում իրանց մասսաներին, և այդ փափազած ապագայի զարուստը նրանք սերտ շողկապում էին թիւրք-զերմանական զէ՛քի յաղթական նուաճումների հետ:

Ի՞նչ ընթացք ընդունեց պանխաւմական հոսանքը յեղափոխութեան շրջանում՝ հին բիւրօկրատական ըէ՛ծիմը տապալելուց յետոյ:

V

Յեղափոխութիւնը եւ թուրքական նացիօնալիզմը

Յեղափոխութիւնը «դիւթական գաւազանի» հարւածով արթնացրեց հսկայ երկրի բազմաժիլիօն ազգաբնակչութեան՝ իր լեատրդիական խոր քնից: Մի թեթև հարւածով, առանց խոր ու տևական ցնցումների, միայն երկու օրոյայ մէջ և «անարիւն ճանապարհով» տրամագծօրէն ծայրահեղ հակառակ գրութիւնները տեղի տւին մէկը միւսին: Անօրինակ բնութեան բէժիմի և անլուր ճնշումների ու հալածանքների քաղաքականութիւնը տեղի տեց ա-

նօրինակ ազատութեան՝ մինչ սանձարձակութեան և անարխիայի աստիճան:

Այդ անբնական և հակապատմական «թռիչքը» կազմեց ուսական յեղափոխութեան հետզհետէ աճող ու խորացող ողբերգութեան ամենամեծ պատճառը:

Հին բէժիմի օրով ինչպէս ազգաբնակչութեան ամեն մի իրաւագուրկ խաւ, շահագործող գասակարգ և ճընշած պրօֆեսիա, այնպէս էլ ամեն մի հալածւած մանր ժողովուրդ, ազգ, ցեղ, կրօնական համայնք և այլն, — բոլորն էլ անխտիր ստքի կանգնեցին, որպէս «ապստամբ ստրուկներ»: Բոլորն էլ աղմկում, պահանջում, բողոքում, ըստպանում էին: Բոլորն էլ իրաւագործելու, աւելի շատ իւզեցու, աւելի մեծ բաժին ստանալու, պատառ կլանելու զրգուած ախորժակով էին նայում ազատութեան և նոր կարգերին: Կարծես «նոր Ռուսիան» միապետութիւնից մնացած մի լեշ է՝ ժառանգութիւն թողած «ապստամբ ստրուկներին»՝ պատառ-պատառ և բաժին-բաժին անելու համար:

Այդ երևոյթը կազմեց ուսական յեղափոխութեան ուղեկից մօմենտների

մէջ մի անջնջելի սև գիծ, մի բարոյական ցաւալի մինուս:

Նման ուրիշ ենթակայ և ճնշած ժողովուրդների (Ֆինլանդացիների, ուկրայինցիների, լիտովցիների, բելո-րուսների, վրացիների, հայերի և այլն) սիւթեց և «ազգային իրաւունքների» հարց բարձրացրեց նաև մուսուլմանական տարրը Ռուսիայում: Միւսների նման վերջինը ևս, որպէս համառուս քաղաքացիութեան մի առանձին միաւոր, մի ուրոյն կաթեզօրիա, իրաւունք ունէր իր ձայնը հնչեցնելու, իր կարիքները լսեցնել տալու, իր անող որոշելու, իր «բաժինը ստանալու»: Ազգութիւնների վերածնութեան ընդհանուր շարժման հունի մէջ մտաւ և՛ մուսուլմանութիւնը:

Ամենուրեք կազմակերպուեցին սիւթեցային կոլլեկտիւններ: Բոլոր երկրամասերում և բոլոր ժողովուրդների մէջ դրոխ բարձրացրեց մի պահանջկոտ, մի անզուսպ նացիօնալիզմ, որ մինչև այդ, հին րէժիմի օրով, ահաբեկած էր և պատին սեղմեւած, հարկաւոր պարագաներին ստրկական պատրաստակամութեամբ փորսող էր տալիս ցարական «երեկելիների» ոտքերի տակ: Իսկ այժմ նացիօնալիզմը ըմբոստանում, ապստամբում էր, շանթեր էր թափում

«ազգային քաղաքականութեան» գիծ էր մշակում և «ազգային ծրագրներ» առաջադրում «կարմիր դրօշակ» պարզած՝ ի չարը օգտագործելով ուսական յեղափոխութեան վարկը: Դարեր շարունակ լուսկեաց ու ստրկացած նացիօնալիզմը չէր ուզում համբերել նոյն իսկ մինչև Հիմնադիր ժողովը, այնքան յախուռն ու սանձարձակ էր նա իր պահանջներով:

Նացիօնալիստական քաղաքականութեան այդ նոր կուրսի մէջ առանձնապէս փայլեցին Ֆինլանդիան և Ուկրայինը:

Ամենամեծ գէնքը, օր մատակարարեց յեղափոխութիւնը մանր ժողովուրդներին, դա ժողովուրդների և ազգերի ինքնորոշման սկզբունքըն էր: Յեղափոխութեան հեղինակաւոր մարմինները (Բան. և Ջին. Պատգ. Խորհուրդները) և ինքը ժամանակաւոր կառավարութիւնը դրել էին այդ սկզբունքը իրանց ներքին և արտաքին քաղաքականութեան հիմքում: Եւ լայնածաւալ պետութեան փեշերում ապրող բազմացեղ և բազմակրօն ժողովուրդներից ամեն մէկը՝ ուկրայինցիներից սկսած մինչև բուրեաթներն ու կիրգիզները, իրաւունք համարեցին կենտրոնական իշխանու-

Թեան հասցէին ուղղելու հազար ու մի պահանջներ: Բաղաքացիական, ազգային և գաւառական տարբերութիւնների և խարութիւնների վերացումով նոր կառավարութիւնը լուծելու հարթել էր արդէն ազգային հարցի սուր կրիտիկական վիճակը մուսիայում: Բայց դրանով չէին բաւականանում ցորակային օրերի «ստրուկները»: Ամեն մի ժողովուրդ իւրօրինակօրէն էր «ինքնորոշւել» ցանկանում: Բոլորի բերնում շատ բարձր և շատ քաղցր էր հնչում *աւտօնօմեա խօսքը՝* եղաւ դա տերրիտօրիական-քաղաքական թէ ազգային-կուլտուրական: Շատերը ֆեդերացիայի պահանջն էին հրապարակ նետել: Եւ այդ բոլոր պահանջների իրականացումը սպասում էին ժամանակաւոր կառավարութիւնից, որի լիազօրութիւնից, սակայն, վեր էր նման հիմնական հարցերի արմատական լուծումը: Կրկնում ենք՝ ցարական օրերի ստրուկ ժողովուրդները տարբերայնօրէն դարձել էին անարխիստ ժողովուրդներ: Ըստ երևոյթին ստրկութիւնից մինչև անարխիզմը մի ցատկում է հարկաւոր միայն, եթէ բոլոր յեղափոխութիւնները «զարգանային» և «խորանային» առւսականի նման...

Պէտք է արդարութիւնը տալ Անդրկովկասին: Յեղափոխութեան առաջին շրջանում, մինչև ամառը (1917 թ.), մեր ծայրերկրի ժողովուրդները համեմատաբար «հանգիստ» էին պահում իրանց, եթէ չհաշւենք վրաց ֆեդերալիստների անախորժ աղմուկները՝ վրաց ազգային Հիմնադիր ժողով հրբաւիրելու և մի շարք ուրիշ պայքարում հարցերի շուրջը:

Թուրքական նացիօնալիզմը*) բաւական «համեստ» էր պահում իրան յեղափոխութեան սկզբնական շրջանում: Հրապարակի վրայ նղած թուրք կազմակերպութիւնների գործունէութեան ծրագիրը ամփոփում էր մի-

*) Այստեղ, ըստ մեր թեմայի ծաւալի, կարող է խօսք լինել մեր ծայրերկրի տեղական ժողովուրդներից միայն թուրքերի և թուրքական նացիօնալիզմի մասին: Վերջինս տակ հասկանում ենք մենք մուսուլմանութեան կամ մահմեդականութեան մէջ իր ազդեցութեամբ իշխող թուրքական (թաթարական) տարրի տիրապետող դասակարգերի իլէօլօգիան՝ ընդհանրացած և ազգային գոյն ստացած, Բաղաքներում գործող հասարակական ինտելիգենցիան՝ մուսուլմանական կուլտուրաբեզդները և գաղափարախօսները (ինչպէս և քաղաքներում կենտրոնացած բեկութիւնը, առևտրական և արդիւնաբերական բուրժուազիան, քաղքենիութիւնը) բացարձակ մեծամասնութեամբ թուրքեր (թաթարներ) են:

այն ազգային-քաղաքացիական իրաւունքների և կուլտուր - բարենորոգչական ընթացիկների պահանջներ (ազգային-կրօնական, ազգային-կրթական և կուլտուրական անկաշկանդ ու ինքնուրոյն զարգացման ազատ պայմաններ ու երաշխիքներ). պահանջներ, որոնց լի ու լի բաւարարութիւնը տալիս էր Փետրեարեան Յեղափոխութեան խոշոր նւաճումների նշանաւոր դեկլարացիան: Թուրքական նացիօնալիզմը սկզբում չէր առջադրել որևէ անկարելի պահանջ, որ տարածայնութեան և կօնֆլիկտի առիթ տար նրա և ժամանակաւոր Կառավարութեան միջև, այնպէս, ինչպէս ուկրայնական և ֆինլանդական նացիօնալիզմըն էր առիթ տւել և կօնֆլիկտ ըստեղծել:

Թուրքական նացիօնալիզմը գտնուում էր տակաւին մուսուլմանական ոյժերի հաւարման շրջանում: Ազգային վերածնութեան նոր դարադուրի էր ըսկըւել մուսուլմանական աշխարհի համար ուսւ պետութեան սահմաններում: Նա չէր ուզում յետ մնալ միւս ենթացակայ (կամ հպատակ) ժողովուրդներէցնա ևս շարժում ու կազմակերպւում էր՝ համախմբւելով իր ուրոյն դրօշակի տակ. նա ևս նախագծում ու մշա-

կում էր իր կուլտուրական կարիքների և ձգտումների ծրագիրը, իր քաղաքական տենչանքների և իդէերի պլատֆորմը: Տենչային թափով ու եռանդով էր սկսել մուսուլմանութիւնը իր հաւաքման ու կազմակերպման գործը: Մուսուլմանութեան կենտրոնները ծաւալել էին կուլտուրական եռուն շարժման ու բազմակողմանի գործունէութեան մինչ այդ անօրինակ մի շարջան*):

Տիրապետող իդէօլօգիան կրօնական պատկանելիութեան ընդհանուրին օղակող կապը՝ ծառայեցրեց որպէս կազմակերպական խոշոր ֆակտոր և իր՝ «Մեծ Իսլամի հարազատ որդիք» — կոչւելով համախմբեց հսկայ պետութեան շահագան ծայրերում ցրւած մօտ 30 միլլիոն մահմեդական ազգաբնակչութիւնը շարժման ու վերածնութեան ժխնոյն դրօշակի տակ: Եւ անցեալ տարւայ (1917 թիւ) մայիսի 1—11

*) Նրանք, որոնք կրկամեան տւիլի մօտ գաղափար կազմել այդ շարժման ելիէշների և մուսուլման կազմակերպութիւնների գործնէութեան մասին, կըյանձնարարէինք ծանօթանալ «Извѣстія комитета бакинскихъ мусульманскихъ общественныхъ организацій» թերթի հետ, որ լոյս էր տեսնում պաշտօնակարպէս յաւելած «Какпій» թերթի:

Մասկուայում կայացած առաջին համամուսուլմանական համագումարը բաղկացած էր Գովկասի, Տուրկեստանի Ղրիմի, Սիբիրի, Վոլգայի ափերի և այլ մասերի մուսուլմանութեան ներկայացուցիչներից, որոնց թիւը հասնում էր մօտ 1000 հոգու: Համագումարը ընտրում է մի բարձր կենտրոնական մարմին՝ «Համառուսական մուսուլմանական խորհուրդ» անունով՝ իսկ վերջինս ընտրում է իր միջից 12 հոգուց բաղկացած մի գործադիր կոմիտէ: Խորհուրդը հաստատում է Պետրոգրադում և ստանձնում մուսուլմանական ընդհանուր գործերի ղեկավարութիւնը: Խորհուրդը պիտի հրահանգներ տար ծայրերի մուսուլմանական տեղական մարմիններին և իրականացնէր կեանքի մէջ համագումարի որոշումները:

«Համառուսական մուսուլմանական խորհուրդը, — դա Ռուսիայում ապրող մուսուլման ժողովուրդների միակ քաղաքական ղեկավար կենտրոնն է հանդիսանում, որը հենւում է ծայրերում եղած տեղական հարիւրաւոր բաժանմունքների վրայ»^{*)}: Այսպէս էր բնորոշում իր դիրքն ու դերը Պետրոգրադում

^{*)} Տես «Известия ком. бак. мус. общ. орг.» № 143, յունիսի 29-ին, 1917 թ.:

դում հաստատւած մուսուլմանական համազգային խորհուրդը:

Որո՞նք են արդեօք այդ համամուսուլմանական վերածնութեան և շարժման տենդենցները՝ իրանց ընդհանուր պետական և ազգային կուլտուրական ու քաղաքական ընդլիճով:

Համագումարի քննութեան տրւած մի շարք հիմնական հարցեր ցոյց են տալիս, թէ ինչպիսի կենդանի հետաքրքրութիւն ունեն մուսուլման ժողովուրդները դէպի սուսական յեղափոխութեան արաջադրած հրատապ լուզումներն ու կարգինալ խնդիրները: Համամուսուլմանական համագումարի օրակարգի հարցերը եղել են պետական վարչութեան ձևը, ապրարային, բանւորական և կանանց հարցերը, կուլտուրական լուսաւորական կարիքները, հոգևոր կրօնական կազմակերպութիւնները, զինւորական ոյժերի կազմակերպութիւնների և ծարերկրների հարցերը և այլ տակախկական ու կազմակերպական հարցեր: Օրակարգի նոյն ծրագիրը, աւելի ճօխացրած, քննութեան է տրւում համամուսուլմանական երկրորդ համագումարում, որ տեղի է ունենում Կազանում յունիսի 20-ից մինչև 31-ը (1917 թ.):

Մանօթանալով համագումարի որո-

շումներին, ապա մուսուլմանական կենտրոնական մարմինների և օրգանների կոչներին, արժարժած մտքերին, դուք ստանում էք, ընդհանուր առմամբ, այն տպաւորութիւնը, որ յեզափոխութեան առաջին շրջանում մուսուլման տարրերի մէջ վերացել կամ գոնէ շատ թուլացել է աւանդական թշնամական վերաբերմունքը դէպի ոռու պետականութիւնը: Դուք գալիս էք ըստ երևոյթին այն կորակացութեան, որ ցարական կառավարութեան օրով գոյութիւն ունեցող թուրք-մուսուլմանական կենտրոնախոյս նացիօնալիզմը՝ իր պանխալաւիտական և պանթիւրքական տենդենցներով (մանաւանդ մեր ծայրերկրում), տեղի է տւել կուլտուր-լուսաւորական և քաղաքական-վերածնական մի դեմօկրատիկ իդէօլոգիայի, որ ձգտում էր ազատագրւած միւս բազմաթիւ ժողովուրդների հետ միասին միապետութեան փլատակների վրայ կառուցանել իր ազգային գոյութեան ազատ ու պայծառ շէնքը ոռու պետութեան փեշերի մէջ:

Այդ տպաւորութիւնները թուածողական չեն, այլ ունեն փաստական հիմքեր: Եւ նախ քան թուրքական նացիօնալիզմի այդ «մետամօրֆօզը»

հասկանալը, նրա ներքին պատճառները վերլուծելն ու հիմնաւորելը, մենք պարտք ենք համարում մի քանի փաստական նմուշներ բերելու այստեղ մուսուլման մարմինների և գործիչների յայտարարութիւններից:

Ի՞նչպէս էին վերաբերում մուսուլման ժողովուրդների ղեկավար տարրերը դէպի ազատութիւնը, դեմօկրատիան և յեզափոխութեան նուաճումների պահպանութեան ու պաշտպանութեան գործը:

Ահա ինչ կոչեր էր ուղղում համայն Ռուսիայի մուսուլմանների ազգային կենտրոնական խորհրդի գործադիր կոմիտէն Պետրոգրադից ողջ մուսուլման քաղաքացիներին. «Մուսուլման քաղաքացիներ! Նոր կեանքի շինարար աշխատանքի մեծ խնդիրներ են դրուած մեր առաջ: Ռուսական դեմօկրատիայի հետ միասին մենք պիտի կառուցանենք պետական հոյակապ շէնքը, որի ճակատին պիտի դրօշմուած լինի. «Ազատ ժողովուրդների ազատ Ռուսիա»: Ժողովուրդների լինընորոշման իրաւունք, — ահա այն սրբազան իրաւունքը, որ հրապարակ են նետել յեզափոխութեան փոթորկալից ալիքները: Ռուսիայի բոլոր ժողովուրդները տենդով շարժւում են, կազմակերպում

իրանց ոյժերը և դարձնում համաժողովրդական լոզունգներ: Միայն Ռուսիայի բազմամիլիոն մուսուլմանների ձայնն է, որ թոյլ է հնչում... Ամուր հաւատ ունենալով դէպի աղատ Ռուսիայի պայծառ ապագան և նրա մէջ ապրող ժողովուրդների բարեկեցութիւնն ու բազդաւորութիւնը, հաժառուսական մուսուլմանական խորհրդի գործադիր կոմիտէն նուիրում է իւր աշխատանքին»*):

Իսկ ինչպէս վերաբերեց նոյն համամուսուլմանական կենտրոնական խորհուրդը, երբ թիկունքից ու ձակատից հարուածներ տեղացին (իմա յուլիսի 3—5 ապստամբութիւնը Պետրոգրադում և մի քանի օր անցած ճակատի կատասարօֆը Տարնօպոլում) ազատութեան և յեղափոխութեան գէմ:

Խորհուրդը ղիմում է բոլոր մուսուլմաններին հետևեալ կոչով. «Ազատութիւնը վտանգուած է! Մուսուլման քաղաքացիներ! Յեղափոխութեան յաղթանակը կտայ բոլորին ազատութիւն, կամբապնդէ ամենքի և իւրաքանչիւրի

*) Տես համառուսական մուսուլմանական խորհրդի [Պետրոգրադում] կոչերը՝ «Къ всѣмъ мусульманамъ Россіи», յուլիսի 20 և 27-ի համարները [М№ 135 և 141] «Извѣст. ком. бак. мусульм. общ. орг.»:

քարեկեցութիւնը, իսկ նրա կործանուածը կ'ըջուառացնէ բոլորին, որովհետեւ երկրի մէջ տեւպէս կ'գործէ բէակցիտայի և անարխիայի տերրօրը: Մեր տենչանքները Ռուսիայի ժողովուրդների ազատ ինքնորոշման մասին— կգառնան ստրկական գոյութեան դառն ճշմարտութիւն... Մեր վիճակը անքակտելիօրէն կապուած է երկրի յեղափոխական դեմոկրատիայի հետ և մեր գիտակցութիւնը թելագրում է, որ մենք բոլորս պարտաւոր ենք ամուր ոյժերով խմբուել Յեղափոխութեան Ազատագրար կառավարութեան շուրջը... Թող մուսուլմանները հեռու լինեն ամեն մի անարխիայից և բոլոր ջանքերով աջակցեն յեղափոխական կառավարութեան, միայն այն ժամանակ կստանանք մենք ամեն բան, իսկ եթէ ընկնէ կառավարութիւնը՝ կզըրկուենք ամեն բանից... Թող կորչէ անարխիան, կեցցէ՛ ժողովրդական ազատութեան կառավարութիւնը»*):

Նոյն կենդանի արձագանքն են տալիս մուսուլմանական պատասխանատու օրգանները, երբ օգոստոս ամսին մի այլ հարուած է ապառնում ոռուս յեղա-

*) «Къ мусульманамъ Россіи» տես «Изв. ком. бак. мусульм. общ. орг. № 164» յուլիսի 25-ի 1917 թ.

փոխութեան: Իս գններալ Կօրնիլովի աւանտիւրան էր: Այդ զէպքի առիթով անդրկովկասեան մուսուլմանութեան կենտրոնական մարմինը հետեւեալ հեռագիրն է յղում ժամ. Կառավ. նախագահ Կերենսկոն: «Բազուի մուսուլմանութեան հասարակական և քաղաքական կազմակերպութիւնների կոմիտէն, որ կատարում է անդրկովկասեան կենտրոնական կոմիտէի ֆունկցիաները, որոշել է ամեն կերպ աջակցել ժամ. Կառավարութեան՝ յեղափոխմոհրատիայի գլխաւորութեամբ, որ այնքան անձնուիրաբար պաշտպանում և պահպանում է ուսւ մեծ յեղափոխութեան նուաճումները: Ըստ մօմենտի պահանջի հսկելով հանգստութեան և կարգի վրայ, մուսուլմ. կոմիտէն լիալոյս է, որ ժամ. Կառավարութիւնը ձեր գլխաւորութեամբ կը կարողանայ հակահարուածել ազատութեան թշնամիներին հակայեղափոխական փորձերի դէմ, ինչպէս օրինակ ապստամբ գններալ Կօրնիլովին է: Կեցցէ յեղափոխական կառավարութիւնը: Կոմիտէի նախագահ Թոփչիբաշև: **)

Նոյնպիսի մի որոշում կայացնում է (օգոստ. 29-ին 1917 թ.) մուսուլմանական գիւղացիական միութիւնը:

** Նոյն տեղը, № 105, 1-ին սեպտեմբ.

ըստ ամենայնի դատապարտելով գնն. Կօրնիլովի աւանտիւրան և ցաւ յայտնելով, որ իրանց արիւնակից զօրագունը (дикая дивизия-ն) խարուած դործիք է դարձել ապստամբ գններալի ձեռքին:

Օգոստոս ամսին Մոսկուայում կայացած պետական խորհրդակցութեան ժամանակ (Տարնօպուլի կատաստրօֆից յետոյ) Ռուսիայի համայն մուսուլմանունից խօսում է Ալի Մարգան բէկ Թոփչիբաշևը (Բազուի պաշտպանը), որը իր ձառի մէջ ասում է ի միջի այլոց հետեւալը. «Հէնց որ շողոզաց Ռուսիայի վրայ ազատութեան արեգակը, մուսուլման ժողովուրդները դէն ձգելով իրանց վրայից բռնակալութեան ատելի շրթաները, ցնծութեամբ ընդգրկեցին ազատութեան ճառագայթները, մտան դեմօկրատական հիմքերի վրայ կառուցուած նոր կարգերի շերտ կողմնակիցների շարքերը և դարձան պաշտպաններ այդ կարգերը մարմնացնող ժամ. Կառավարութեան, վրձնելով ամեն կերպ աջակցել ժողովրդական գերագոյն իշխանութեան բոլոր ձեռնարկած աշխատանքներին և զնալ ազատութեան ճանապարհով յեղափոխական դեմօկրատիայի հետ միասին... Պետական շէնքի նոր ձևի հիմքում

մուսուլմանները զնուժ են ժողովուրդների ինքնորոշման լոզունգը, թողնելով նրա լուծումը Հիմնադիր ժողովին ուր նրանք պիտի պաշտպանեն ծայրերի համար Ֆեղերաւտիւ կազմը: Իսկ այժմ յանուն յեղափոխական պետութեան շահերի մուսուլմանները անհրաժեշտ են գտնում ազգային կուլտուրական աստօնօմիայի իրականացումը, ինչպիսին յայտարարուել է համառուսական մուսուլմ. համագումարում»*):

Նման կոչեր ու յայտարարութիւններ բազմաթիւ են, որոնք գալիս են վիլայիլու մի շատ հասարակ բան. մուսուլման ազգաբնակութիւնը, en masse վերցրած, որպէս ազգային մի ենթակայ կամ հպատակ միաւոր, եղել է հին ըէթիմի օրով նոյնքան ճնշուած ու քաղաքացիականօրէն շատ կողմերից իրաւազուրկ, որքան և միւս ազգերն ու ժողովուրդները լայնածաւալ երկրի: Տարօրինակ ոչինչ չկայ, եթէ միւսների նման մուսուլման տարրը; թօթափելով հին բռնակալի լուծը, ցնծապէն ողջունում էր ազատութեան լուսաճաճանչ արեւը: Եւ որովհետեւ այդ համատարած և համարարիք ազատութեան աւետա-

*) Նոյն տեղը, № 190, 25-ին գրաստ.

բերը հանդիսանում է Մեծ Յեղափոխութիւնը, նրա ճարագայթներ տարածողն ու արմատացնողը համարում է յեղափոխ. դեմոկրատիան, իսկ յեղափոխ. նուաճումների արթուն պահպանը՝ Ժամ. կառավարութիւնը, ուստի բնական է միանգամայն, երբ մուսուլմանութեան հաւաքական մարմիններն ու ղեկավար օրգանները իրանց ջերմ աջակցութիւնն էին խոստանում ողւս դեմօկրատիային և յեղափոխական կարգի կառավարութեան՝ ազատութիւնը և յեղափ. մեծ նուաճումները պաշտպանելու գործում:

Աւելին կասենք: Մուսուլմանութեան և մանաւանդ անդրկովկասեան թրքութեան հասարակական գործիչներին լաւ յայտնի է, որ առհասարակ ողւս հասարակութեան աչքում և մանաւորապէս դեմօկրատիկ շրջաններում մուսուլման տարրը առանձին վստահութիւն չէր վայելում ինչ-ինչ արագիցեաների հիման վրայ, մանաւանդ պատերազմի շրջանում:

Անվստահութեան պատճառներից մէկը կազմում էր այն համատարած և ամրապնդուած կարծիքը, որ մուսուլման ազգաբնակութիւնը, ընդհանրապէս վերցրած, մի հակակուլտուրական և հակայեղափոխական տարր է, և

հետեւապէս նոր ազատ կարգերի պաշտպան ու նեցուկ լինելու փոխարէն, կաբող է, հարկ եղած դէպքում, ճիշտ հակառակ դերը խաղալ: Այդ է պատճառը, որ մուսուլման կազմակերպութիւններն ու գործիչները իրանց որոշումներով, կոչներով, հեռագրներով ու ճառերով ամեն կերպ աշխատում էին գրութեան նոր տէրերից վստահութեան ատեստացիա ստանալ: Ոչ միայն այդ, նրանք աշխատում էին իրանց ազգային-հասարակական գործերը վարել լայն դեմօկրատական հիմքերի վրայ, ժամանակի պահանջների համաձայն, իսկ պետական և սօցիալական կարևոր հարցերը լուծել յեղափոխական լողունքների ոգով: Այդ նոր «քաղաքական գիծը» պէտք է շօշափելի փաստ ծառայէր ոուս դեմօկրատիայի մէջ մուսուլմանութեան մասին կազմուած աննպաստ կարծիքը փոխելու համար:

Այսպէս օրինակ համառուսական մուսուլմանութեան երկրորդ համագումարում (Կազանում, յուլիսի 20—31-ը) ընդունուած բեզօլիացիաները պետական ազրարային և բանւորական կնճռոտ հարցերի վերաբերեալ, չնչին տարբերութիւն ունեն ոուս դեմօկրատական կուսակցութիւնների կայացրած որո-

շումներից (ծրագրային մինիմումի շըր-Ջանակներում) նոյն հարցերի վերաբերմամբ: Այնուհետև անդրկովկասեան մուսուլմանութեան ազգային խորհուրդը, որի կենդրոնը հաստատել էր Բագուում, հիմնւել էր դեմօկրատական լայն սկզբունքների վրայ. հասարակութեան բոլոր խաւերի (գիւղացիութիւն, բանւորութիւն, վաճառականութիւն, ինտելիգենտ պրօֆեսիաների ներկայացուցիչներ և այլն), կազմակերպութիւնների (կօօպերատիւներ, պրօֆեսիօնալ միութիւններ, ծխական համայնքներ, ուսուցչական միութիւններ և այլն) և կուսակցութիւնների նախորդած թւով ներկայացուցիչներից էր բաղկացած մուսուլմանների ազգային խորհուրդը: Բնորոշ է, որ բոլոր կարգի կուսակցութիւններին թոյլատրուած է ներկայացուցիչներ ունենալ խորհրդում, բացի մօնարխիստներից և անարխիստներից. այսինքն բացի այն հոսանքներից, որոնք անընդունելի են նաև ոուս դեմօկրատիայի տեսակէտից: Մուսուլմանների ազգ. խորհրդի նպատակն է ոչ միայն «ղեկավար դեր ստանձնել՝ ազգային-քաղաքական իդէալների վերաբերեալ կայացրած որոշումները իրականացնելու համար կեանքի մէջ», այլև մի մեծ իդէական ծառա-

յութիւն կատարել՝ համաձայն համակովկասեան մուսուլմանական համագումարի որոշման. այն է՝ «տարածել մուսուլման ժողովրդի մէջ ազատութեան, հանրապետութեան (քեսպուրիկանիզմի), դեմոկրատիզմի (ռամկավաժարականութեան) և ֆեդերացիայի իդէաները»: Իսկապէս մի գաղափարային ծառայութիւն, որ ոչ միայն ընդունելի, այլև խրախուսանքի արժանի է ուսու դեմոկրատիայի տիրող հոսանքների կողմից:

Եւ «յեղափոխականասէր» ու «դեմոկրատականասէր» բազմաթիւ կոչերով ու յայտարարութիւններով, ինքնադործնէութեան տենդային թափով հանդերձ՝ մուսուլման գործիչները աշխատում էին ամեն կերպ, որ իրանց ժողովրդի մասին աւանդաբար անցած աննպատակ արժիքը չքանայ իսպառուս հասարակութեան և նրա նորագոյն ներկայացուցիչների շարքերից: Նրանք առիթ չեն բաց թողնում, իրանց դասը գանգատն ու արտունջը արտայայտելու դեմոկրատական շրջանների ղէմ, որոնք շարունակում են հին քիտոկրատների «վերևից նայելու» արհամարհական սովորութիւնը պահպանել ղէպի մուսուլմանութիւնը:

«Կազմակերպութիւնների մէջ գոր-

ծող ուսու դեմոկրատական տարրերը— գրում է մուսուլման աղգ. խորհրդի պաշտօնական օրգանը իր առաջնորդում— իրանց կուսակցական յարաբերութիւնների ժամանակ ղէպի մուսուլման մասսաները՝ արտայայտուեն տակաւին գոյութիւն ունեցող հին հայեացքները: Ռուս հասարակութիւնը առհասարակ չի ընտելացիլ արժանի չափերով հաշուի առնելու մուսուլմաններին... Միշտ նոյն անհաւատ, տատանող և անվստահ վերաբերմունքը...» *):

«Կարծես մենք գոյութիւն չունենք,— գանգատում է մուսուլմանների ազգային կենտրոնական խորհրդի գործադիր կոմիտէն (Գետրօգրադում) իր ընդհանուր կոչի մէջ ուսու հասարակութեան անտարբերութեան մասին,— կամ դուցէ մեզ չեն ուզում ճանաչել... կամ երևի գիտաւորմը են լուծ մեր մասին: Բայց պէտք է, վերջապէս, մեր ձայնը հնչեցնել: Ժամանակ է. ժամանակ է միջոցների ձեռնարկել և ստիպել, սր մեզ հաշուի առնեն: Ժամանակ է, որ մենք ևս, Ռուսիայի բազմաթիւ մահմեդականներս, դնենք պատմական կշեռքի

*) «Мусульмане и русское общество», «Изв. ком. бак. мусульм. общ. орг.», № 172, огагит. 3-ին, 1917 թ.:

վրայ մեր քանակն ու ձայնը*):

Եւ մուսուլմ. ազգ. խորհուրդը այն-
քան հրամայական էր դանում իր ցոյց
առեած ուղղութեամբ գործելու կարի-
քը, որ վճռում է Պետրօզրադում հրա-
տարակիւ մի ազգային օրգան ուսե-
րէն լեզուով: Նա կարծում է, որ «Միայն
այդ միջոցով կարելի է վերացնել փո-
խադարձ անհասկացողութիւններն ու
վիրաւորանքները: Միայն այն ժամա-
նակ մուսուլման ղեմօկրատիայի իդ-
ձերը կստանան, վերջապէս, հնարաւո-
րութիւն՝ հասնելու ի գիտութիւն ոուս
եզբայր ժողովրդի»:

Ի՞նչ է հետեւում այդ բոլորից ըն-
թերցող: Մի շատ հասարակ բան: Այդ
բոլորից հետեւում է այն, որ ոուս Մեծ
Յեղափոխութեան առաջին՝ կարող ենք
ասել՝ կուսակաւն եւ մեղրային շրջա-
նում, մուսուլման բեկութիւնը (յառ-
կապէս թուրք բեկութիւնը Անդրկով-
կասում) իր բեկական իդէօլօգիայով
նոյնքան էր պատին սեղմուել, որքան
համառուս ազնուական—խոշոր կալուա-
ծատիրական դասը իր ֆէօդալական
իդէօլօգիայով մատնուել էր նոյն վիճա-
կին: Իսկ դա ուրիշ բան չի նշանա-
կում, բայց եթէ այն, որ ոուս յեղա-

*) Նոյնը, № 135, յունիսի 20-ին:

փոխութեան գոռ ալիքների սրարշաւ
յորձանքների անմիջական ազդեցու-
թեան տակ ոչ միայն բեկանուել էին
թուրքական նացիօնալիզմի վաղեմի
հակապետական ծայրերը, այլև «փոխ-
ուել էր ժամանակաւորապէս» նրա պահ-
պանողական և բէակցիօն բնոյթը:

Այդ երևոյթի մէջ զարմանալու ո-
չինչ չկայ:

Եթէ խոշոր կալուածատէր և խոշոր
կալուածատիրական քաղաքագէտ Բո-
ձեանկօն դուխ է խոնարհել Փետրուա-
րեան Յեղափոխութեան կարմիր դրօ-
շակի առաջ. եթէ խոշոր կապիտալիստ-
ներ և բուրժուական քաղաքագէտներ
Գուչկովը, Տերեչէնկօն, Կօնովալովը
մտել են յեղափոխական ղեմօկրատիա-
յի ցանկութեամբ և մշակած դեկա-
րացիով կեանքի կոչած ժամ. հառա-
վարութեան մէջ. եթէ խոշոր արդիւ-
նաբերօգների և առևտրականների ըն-
տրիալ գործիչների ու իդէօլօգները
(Բեաբուշինսկի և ընկ.) առաջին հա-
մադումարը Մոսկւայում, (յեղափոխու-
թեան երկրորդ ամսում) ընդունում է
ղեմօկրատական հասարակապետու-
թեան սկզբունքը. եթէ ախլիք աջա-
կողմեան և արտայայտուած մօնար-
խիստ Պուրիշկինիչը բարձրաձայն յայ-
տարարում է (Պետական Իււմայի ան-

դամների յատուկ խորհրդակցութեան
 ժամանակ ապրիլ ամսին), որ նա
 պարաստ է խոնարհուելու ոչ միայն
 Կերենսկու, Մերեթելիի առաջ, այլև
 «վերջին էս-գեկի և էս-էրի առաջ,
 միայն թէ նրանք փրկեն երկիրը կոր-
 ծանուսից»։ Եթէ անգամ Միխայիլ
 Բոմանովը (Նիկոլայ Ու-ի եղբայրը) իր
 դահ բարձրանալու հրաժարականի մէջ
 յայտարարում է, որ նա ոուս երկրի
 օրինաւոր լիազօրը համարում է համա-
 ժողովրդական կամքը՝ արտայայտուած
 զեմոկրատ. սիստիմով ընտրուած Հիմ-
 նադիր ժողովի միջոցով, և այլն, և
 այլն, — այդ բոլորից յետոյ ինչո՞ւ պի-
 տի զարմանալ, երբ մուսուլման բէ-
 կուսիան, աղալարութեան և բուր-
 ժուազիայի քաղաքագէտներն ու իդէօ-
 լոգները (Յալիկովները, Թոփչիբաշեվ-
 ները, Ջիվանչիւրները, Թան խոյսկի-
 ները, Ջաֆարովները և Ընկ.) կենդա-
 նի արձագանք էին տալիս ոուս յեղա-
 փոխութեան լոզունգներին և առաջա-
 ւոր զեմոկրատիայի կոչերին։ Ինչո՞ւ
 պիտի զարմանալ, կրկնում ենք, եթէ
 թուրքական նացիօնալիզմը ենթար-
 կւել է ժամանակի կաթեզօրիկ պա-
 հանջներով պայմանաւորուած «մետա-
 մօրֆօզի»։

Մենք միշտ եղել ենք այն կարծի-

քին, որ ենթակայ (հպատակ) ազգա-
 յին միաւորի տիրապետող դասակար-
 գի իդէօլօգիան կամ նացիօնալիզմը
 պետական շատ հիմնական հարցերում,
 (օր. պետական կազմի, ծայրերկրային
 և ազգային հարցերում, քաղաքացիա-
 կան և զաւանական իրաւահաւասարու-
 թեան խնդրում) աւելի արժատական
 ու ձախակողմեան է, քան քաղաքական-
 օրէն իշխող ազգի տիրապետող դասա-
 կարգի իդէօլօգիան։ Որքան պետու-
 թիւնը ապակենտրոնացած լինի, ծայր-
 երկրները աւտօնօմ, ժողովուրդները,
 ազատ ու ինքնուրոյն՝ իրանց ազգա-
 յին իրաւունքների և ձգտումների
 մէջ, այնքան ձեռնաուու է դա մանց
 ու ենթակայ ժողովուրդներին։ Ընդ-
 հակառակը, այդ դրո՞թիւնը և այդ
 դրութեան ձգտող քաղաքականութիւ-
 նը չի համապատասխանում իշխող ազ-
 գի տիրապետող դասակարգի շահերին.
 վերջինս պետական կուռ կենտրոնաց-
 ման մէջ է որոնում իր քաղաքական
 և սօցիալական ամուր տիրապետու-
 թեան հեղեմօմիան։ Այդ է պատճառը,
 որ յիշածս հարցերի նկատմամբ թուրք
 բէկական իդէօլօգիան աւելի արժատա-
 կան ու ձախակողմեան էր ոչ միայն
 ոուս երկտեմբերեաններին, այլև ոուս

կազմաների կուսակցական ծրագրային տեսակէտներէց *):

Սակայն, միւս կողմից, թուրք բէկական իդէօլոգները վերև յիշած «յեզափոխականասէր» և «դեմօկրատականասէր» այնքան յաճախ արտայայտող բաղիկալիզմը ուրիշ բան չէր, քայց եթէ մոմենտի տակտիկա, գործնական նպատակայարմարութեան և համակերպման քաղաքականութիւն դրութեան նոր տէրերի հանդէպ: Ճիշտ այնպէս, ինչպէս ոռոս խոշոր կալուածատիրական, բուրժուական, առևարարդիւնաբերական և միապետական քաղաքագէտներն ու իդէօլոգները (Րօձեանկօ, Գուչկով, Տերեշչենկօ, Կոնովալով, Պուրիշկեվիչ, Միխայիլ Բօմանով և ընկ.) իրանց մօմենտի տակտիկայով և համակերպման քաղաքականութեամբ չեն փոխել (և չէին կարող փոխել) իրանց դասակարգային էութիւնը և չեն ուրացել ու բացասել իրանց պահպանողական-հակայեզափոխական մտածելակերպը, այնպէս էլ

*) Հայ կազմական ֆրակցիան (Հայ ժող. Գուս.) ևս, որ իր քաղաքական ամբողջ պլատֆորմով կանգնած է համապետական կազմակերպի տեսակէտի վրայ, ազգային հարցում, տնտեսամենայնիւ, տարբերում է նրանից, առաջադրելով աւելի արմատական պահանջներ:

թուրք բէկական իդէօլոգները իրանց յեզափոխական և դեմօկրատական էօկետութիւններով ոչ թէ ընդ միշտ հրաժարել են իրանց բէկացիօնէր դասի սպեցիֆիկ նացիօնալիզմի կենտրոնախոյս տենդենցներէց, այլ ժամանակաւորապէս սքողել և յետ են մղել այդ տենդենցները:

Այդպէս էր պահանջում մօմենտի շրջանկատ քաղաքականութիւնը:

Ուշադրութիւն դարձրէք մուսուլման հաւաքական մարմինների (ազգ. խորհրդի և կօմիտէի) և գործիչների կոչերից և ճառերից վերև բերած նմուշների վրայ: Ամեն տեղ յիշում է ժողովուրդների ազատ ինքնորոշման սկզբունքը. այսինքն յեզափոխութեան խոշոր նուաճումներից միայն և յատկապէս այն լօղունգը, որով ամենից շատ շահագրգռուած է ինչպէս ամեն մի ազգային ենթակայ միաւոր, այնպէս էլ համառու. մուսուլմանութիւնը: Մուսուլմանական պատասխանատու կօլլեկտիււների և օրգանների գրեթէ բոլոր որոշումների և կոչերի մէջ առանձնապէս շիշուում է այդ լօղունգը: Կարծես մոտաւորութեան աչքում յեզափոխութիւնը արժէք ունի միայն նրա համար, որովհետև նա աւետել է ժողովուրդների ինքնորոշման սկզբ-

բունքը: Եւ կարծես յիդափ. դեմօկրատիան ու ժամ. կառավարութիւնը իրանց գործունէութեամբ գնահատելի են և իրախուսանքի արժանի թուրք գործիչների կողմից միայն այն չափով, որ չափով նրանք կը կիրառեն կեանքի մէջ ինքնորոշման սկզբունքը կամ դէմ ոչինչ չեն ունենայ, եթէ ժողովուրդները ինքնազուխ որոշեն իրանց բողոքը, ասել է՝ իրանք կիրառեն ինքնորոշման սկզբունքը:

Մենք առանձնապէս մատնանշում ենք այդ կէտի վրայ, որովհետեւ հէնց ինքնորոշման սկզբունքի շուրջն է, որ հետզհետէ յուզում ու բորբոքում էր մանր ու ենթակայ ժողովուրդների նացիօնալիզմը, հեազհետէ սուր ու ազրեսիւ բնոյթ են ստանում նրանց անվերջ պահանջները:

Այդ պահանջների հողի վրայ գորգանում է այսպէս կոչւած ազգային էգօիզմը: Դա կենսարոնական իշխանութեան և նրա ծայրերկրային օրգանների դէմ ուղղած անվերջ դժգոհութիւնների, տրտունջների և քննադատութիւնների մի աղմկող հոսանք է, որը այս կամ այն չափով յատուկ է եղել բոլոր ենթակայ ժողովուրդների նացիօնալիստական իդէօլօգիային յեղափոխութեան շրջանում:

Այդ ազգային էգօիզմը՝ իր հետը հետէ զարգացող, ծաւալող և տարամերձ չափերով, ունեցան նաև մուսուլմանութիւնը, իսկ ամենամեծ չափով՝ անդրկովկասեան թուրքութիւնը:

Ազգային էգօիզմը, ինքն իրան վերցրած, նոյնքան անախորժ ու քայքայիչ է համապետական շահերի և համայնդափոխական ձգտումների տեսակէտից, որքան անախորժ ու կործանարար է ամեն մի այսպէս կոչւած զրրուպայական էգօիզմ, եղաւ այն բանւորութեան, գիւղացիութեան, դրքի թէ ծառայող պերսոնալի կողմից, այդ միևնոյն է: Կործանարար է այդ խաւերի գրուպայական էգօիզմը, եթէ նրանք իրանց դասակարգային պատմական ձգտումները և յեղափոխութեան բարձր իդէաները ըմբռնում ու գնահատում են իրանց սոսկ ակընթարթային շօշափելի շահերի տեսակէտից:

Եթէ ազգային էգօիզմը ձգտում էր որքան կարելի է շատ իրաւունքներ ձանկել ու ստանալ կենսարոնական իշխանութիւնից, թուլացնելով դրանով պետութեան կենսարոնաձիղ ոյժը, ապա գրուպայական էգօիզմը ձգտում էր որքան կարելի է նիւթականի և ըստացւածքի, վարձատրութեան և թո-

չակնների աւելի ու աւելի պահանջներ դնել և բաւարարութիւն ստանալ անմիջապէս, տեղն ու տեղը, ուշադրուչ դարձնելով պիտութեան և երկրի ֆինանսական-արդիւնարերական քայքայումներին:

Այդ տեսակէտից ժողովուրդներին պահանջները մենք կարող ենք անուանել աղգային իրաւապաշտ էգօրիզմ, իսկ զանազան խաւերի և գրուպպաների պահանջները կարող ենք անուանել գրուպպայական նիւթապաշտ էգօրիզմ:

Երկուսն էլ՝ աղգային իրաւապաշտ և գրուպպայական նիւթապաշտ էգօրիզմը—դարձան հասարակաշար ախտաւոր երևոյթներ ուսական յեղափոխութեան զարգացման ընթացքում:

Այդ նացօնալիստական և գրուպպայական բացասական հոսանքները ամենամեծ չափով ողջունեցին և համակրեցին ուս յեղափոխական դեմօկրատիայի այն թևին, որը իր գործելակերպով (քանի օպօզիցիայի մէջ էր նա) ամեն կերպ քաջալերում և պաշտպանում էր ենթակայ ժողովուրդների և գրուպպաների անվերջ պահանջները, ուրիշ խօսքով խրախուսում էր աղգային իրաւապաշտ և գրուպպայական

նիւթապաշտ աւանց այն էլ բորբոքւած էգօրիզմը:

Ռուս դեմօկրատիայի այդ թևը բօլշևիզմն էր:

Թուրքական նացիօնալիզմը պատկանում էր աղգային իրաւապաշտ էգօրիզմի այն տիպին, որը ողջունում և աջակցում էր բօլշևիզմին, որովհետև վերջինիս գործելակերպի յաջողութեանից սպասում էր նա իր յոյսերի և իղձերի իրականացումը, ասել է՝ իր սեփական գործելակերպի յաջողութիւնը:

VI

Թուրքական նացիօնալիզմի ազրեսիւ ընդթը.

Մուսուլմանական նացիօնալիզմը առհասարակ և մանաւանդ թուրքականը Անդրկովկասում, քանի գնում, այնքան աւելի ու աւելի պահանջկոտ և ազրեսիւ ընդթ էր ընդունում: Մուսուլման նացիօնալիստները աւելի անհամբեր, համարձակ և կրքոտ տոնով էին խօսում իրանց ցանկութիւնների և պահանջներե մասին: Առաջ յեղափոխութեան «մեղրային ամիսներին» նրանք ընդհանուր դեկլարատիւ ձևով էին արտայայտում իրանց պահանջ-

ները՝ «ազգային իղձերը», ինչպէս տեսանք մենք մի քանի փաստական նմուշներով: Յետոյ, արդէն, առանձին կօնկրետ հարցերի ու զէպերի նկատմամբ նրանք աւելի կաթեզօրիկ տոնով էին խօսում՝ պահանջներ կամ բողոքներ ուղղելով կառավարական և յեղափոխական օրգանների հասցէին:

Մուսուլման հաւարական մարմինները աշխատեցին մուտք գործել աշխարհի ներկայացուցչական-յեղափոխական օրգանների մէջ, ուր նրանք տեղ ու ձայն ունենալ չէին կարող՝ ըստ իրանց դասակարգային կազմի, հասարակական աշխարհայեացքի և քաղաքական ֆիզիօնօմիայի: Միւս կողմից նրանք պահանջկոտ և բողոքող տոնով խառնուցին այնպիսի գործերի մէջ և արտայայտեցին այնպիսի զէպերի և պետական կարգադրութիւնների նկատմամբ, որոնք վեր էին իրանց իրաւասութիւնից, զուրս էին իրանց կօմպետենցիայի սահմաններից:

Իերենք մի քանի փաստական նմուշներ՝ ասածներս համոզեցուցիչ դարձնելու համար:

1917 թ. յունիսին Պետրօգրադում կայանում է Բան. և Զին. Պատգ. Սորհուրդների համաուսական համագումարը: Համաուսական մուսուլմա-

նական խորհրդի գործադիր կօմիտէն (Պետրօգրադում) ուզում է անպատճառ իր մարդիկն ունենալ այդ համագումարում և ուղարկում է այդ նպատակով երեք ներկայացուցիչներ: Համագումարը բնականօրէն մերժում է, առարկելով, որ միայն սօցիալիստական կուսակցութիւնները կարող են համագումարին մասնակցել: Մուսուլմ. ազգային կօմիտէն բողոքում է այդ մերժման դէմ Պետրօգր. Բան. և Զին. Պատգ. Սորհրդի առաջ, սպառնալով մամուլի միջոցով զուրս գալ մի վարձուձեղի դէմ, որով, իբր թէ, «արհամարում է մուսուլմանական դեմօկրատիայի շահերը»: Համագումարը ինքիդեմտից խուսափելու համար ընդունում է մուսուլմ. կօմիտէի երեք ներկայացուցիչներին (Յալիկով, Սուլթան. քէկ Մամլէեվ և Սօլայեվ), բայց միայն խորհրդակցական ձայնով:

Բայց մուսուլմանական համագոյն խորհուրդը չի բաւականանում իր այդ «յաջողութեամբ»: Նա կամենում է մի քայլ էլ հեռուն գնալ: Նոյն յունիսեան համագումարը որոշում է հիմնել Պետրօգրադում համայն Ռուսիայի դեմօկրատիայի—բանւորների, ղինւորների և զիւղացիների—ներկայացուցիչներից մի յատուկ կենտրոնական

օրգան (Центральный Исполн. Ком.), Այդ կենտր. օրգանի կազմը պիտի բաղկացած լինէր 250 հոգի գիւղացւատգամ. խորհրդի ներկայացուցիչներէց, 200 հոգի բան. և զին. պատգ. խորհուրդների համագումարից, 50 հոգի Պետրօզը. բան. և զին. պատ. խորհրդի ներկայաց. և 1-2 ներկայացուցիչներ ազգային սօցիալիստական կուսակցութիւններէց:

Համառուսակ. մուսուլմանակ. խորհուրդը ցանկանում է այդ կենտրոն. ու ղեկավար օրգանի մէջ ևս իր ներկայացուցիչները ունենալ: Նա գիմում է համագումարին և առաջարկում, որ նոր կազմուելիք օրգանի մէջ ընդունուի նաև մուսուլմ. խորհրդի վործագիր կոմիտէն իր ամբողջ կազմով (12 անդամներով):

Այդպիսի մի գիմում, անշուշտ, չէր կարող յարգուել մի օրգանի կողմից, որի կազմը զուտ դեմօկրատական էր, գործելակերպը՝ յեղափոխական, իսկ աշխարհայեացքը՝ սօցիալիստական: Իսկ ճիշդ էր մուսուլմ. ազգային խորհուրդը՝ իր վործագիր կոմիտէով: Դա համայն Ռուսիայի մուսուլմանական ազգաբնակչութեան տիրապետող դասակարգերի քաղաքական օրգանն էր, որ կրօնական պատկանելիութիւնը արտա-

քին օղակող շիրմա ծառայեցնելով, համախմբել է նացիօնալիստական դրօշակի տակ ոչ միայն ողջ պետութեան բոլոր ծայրերի համայն մուսուլման ազգաբնակչութեան (30 միլիօն քանակով), այլև համայն մուսուլմանական բոլոր դասակարգերին ու խաւերին անխտիր: Բէզական և ըուրժուական սերնդից ու իղէօլօգիայից է բաղկացած մուսուլմանակ. վործագիր կոմիտէն *) Պետրօզրագում և, իբրև այդպիսին, հասարակական գիտակցութեան զարգացման տեսակէտից մի ընկացիօնէր զեր է խաղում նա, երբ նա իր համամուսուլմանական քաղաքականութեան խարուսիկ քղանցքի տակ մուսուլման ժողովրդի ստուար շերտերին—գիւղացիութեանն ու բանւորութեան—ենթարկում է լէկական ու բուրժուական իղէօլօգիային, խանգարելով կամ դան-

*) Նիւթական աշակցութեան համար մուսուլման ազգաբնակչութեան ուղղած իր կողմէ մէջ վործագիր կոմիտէն աւելացնում է, որ դրամ պէտք է ազգային կարիքների համար և ոչ թէ կոմիտէի անդամներին թողակ տալու համար, որովհետև նրանք բոլորն էլ ապահովուած մարդիկ են: Դրանից երևում է, որ մուսուլմ. ազգ. կոմիտէի անդամները ոչ միայն տիրապետող հարուստ դասակարգի իղէօլօգներ են, այլև ծագումով պատկանում են նրա սերնդին:

դադեցնելով հասարակական շերտա-
ւորման աճման պրօցեսը մուսուլման
իրականութեան մէջ: Մուսուլմանակ-
ապգ. խորհրդի գործադիր կոմիտէն
ցանկանում էր մասնակցել համառուս-
դեմօկրատիայի յեղափոխական օրդա-
նին ոչ այն պատճառով, որովհետեւ
ինքը ևս յեղափ. է և սոցիալիստական,
այլ այն նախահաշիւներով, որպէսզի
դրանով աւելի ամուր կապէ համամու-
սուլմանական ստորին մասսաներին—
զիւղական և քաղաքային դեմօսին—
համամուսուլմանական տիրապետող
դասակարգերի տոն աւող իդէօլազիայի
հետ. որպէսզի յեղափոխական ցնցում-
ների այրող ու զտող շրջանում գասա-
կարգային անտագոնիզմի ու պայքարի
կայծեր չընկնեն թուրք մասսաների
շարքերը. որպէսզի մուսուլման բէկու-
թիւնն ու բուրժուազիան պահեն ի-
րանց տրամադրութեան տակ այդ մաս-
սաների կաշկանդուած կամքը:

Ճիշտ նոյն ճարպիկ քաղաքականու-
թեան է դիմում անդրկովկասեան մու-
սուլմունակ. կենտրոնական կոմիտէն
(Բագուում): Երբ սեպտեմբերին (1917
թ.) հիմնուում է Թիֆլիսում ժամանա-
կաւոր կովկասեան յեղափ. կոմիտէ
(Օզակոմի փոխարէն), բաղկացած մի-
այն էս-դեկներից և էս-էր-ներից,

մուսուլմանակ. կենտր. կոմիտէն Բա-
գուից բուռն կերպով բողոքում է, հե-
ռազրնէր առաքելով թէ այդ յեղա-
փոխական կոմիտէի և թէ ժամ. կա-
ւալ. անունով: «Անդրկովկասեան մու-
սուլ. կոմիտէն—ասուած է ի միջի այ-
լոց այդ հեռագրի մէջ—կաթեգորիկ
կերպով բողոքում է նոր կազմուելիք
յեղափոխ. կոմիտէի դէմ՝ բաղկացած
բացառապէս էսդեկ-ներից և էսեր-նե-
րից և պահանջում է, որ մուսուլման-
ներից և՛ ոչ պակաս քան երեք հոգի,
մտցնել յեղափ. կոմիտէի մէջ, նրանց
ընտրութիւնը թողնելով անդրկով. մու-
սուլմ. հասարակական կազմակերպու-
թիւնների կոմիտէներին»: *)

Շատ ընտրող է այն հանգամանքը,
որ նոյն բողոքող հեռագրի մէջ Բա-
գուի մուսուլմ. կոմիտէն սպառնում
է կովկասեան յեղ. կոմիտէին, որ ե-
թէ մուսուլման ներկայացուցիչներ չը
հրաւիրուեն, «մուսուլման մասսաների
մէջ կառաջանայ վտանգաւոր յուզում
ու անբաւականութիւն, որ կարող է
առաջ կոչել էքսցեսներ՝ յղի կործանա-
րար հետեանքներով»:

Այդպիսի սպառնալիք լսում է ան-
դրկովկասեան յեղափ. դեմօկրատիան

*) Տես «Изв. ком. мусул. общ. орг.»
№ 207, 17 սեպտ. 1917 թ.

դեռ սեպտեմբեր ամսին՝ Ալի Մարդան բէկ Թոփչիբաշեվի գլխաւորութեամբ գործող մուսուլմ. հասարակական և և քաղաքական օրդանի կողմից...

Բայց նոյն հարցը իրաւունք ունենք ուղղելու նաև այդ պարոնների հասցէին. ով է անդրկողկասեան մուսուլմ. կենտրոնակ. կոմիտէի ֆունկցիաները կատարող Բագուի այդ կօլլեգիան, որ այնքան հպարտ ու խրոխտ տոնով խօսում է մուսուլման դեմօկրատիկ մասսաների շահերի անունից: Այդ կոմիտէն ևս իր աշխարհահայեացքով, իր սօցիալական credo-ով և իր ծագումով նոյնքան բէկական-ազալարական և բուրժուական է, *) որքան համամու-

*) 1917 թ. յուլիսի 12-ին, Բագում, մուսուլմանական նորակազմ խորհուրդը ընտրում է 33 հոգուց բաղկացած ազգային կոմիտէ հետևեալ անհատներից. 1) Վասիմով Կասիմ. 2) Ջեմանշիր Բէբուի-խան. 3) Ասադուլլաեվ Միրզա. 4) Թոփչիբաշեվ Ալի Մարդան բէկ. 5) Թաղիեվ Մուսա բէկ. 6) ՊանՆախիկ ֆատալի-խան. 7) Հաջինսիի Մամեդ Հասան. 8) Ամիրջանով Աբդուլ Ալի բէկ. 9) Ալիեվ Իւսուֆ Ալի. 10) Թաղիեվ Աղա Հուսէյն. 11) Հուսէյնով Միրզա-Իւզուզ. 12) Աջալով Սամեդ-բէկ. 13) Աշուրով Աղա. 14) Սալայեվ Մամեդ Ալի. 15) Քեդաղիմ Չաղէ Աբաս Կուլի. 16) Ախունդով Հաջի բէկ. 17) Բաղալբէկով Բաղալ բէկ. 18) Բասուլ Չաղէ Մամեդ Էմին. 19) Միր Կասրեմով Միր Ասադուլլա. 20) Հաջիբեկով Ջեյ-

սուլման. ազգ. կոմիտէն է Պետրոգրադում: Եւ մասսանների դասակարգային գիտակցութիւնը կաշկանդող և քաղաքական գիֆերենցիացիայի պրօցեսը դանդաղեցնող այն բէակցիօնէր զերբ, որ խաղում է Ռուսիայի համայն մուսուլմանութեան կեանքում Պետրոգրադի ազգ. կոմիտէն, ճիշտ նոյն դեքը, աւելի ինտենսիվ չափերով խաղում է Բագուի մուսուլմ. ազգային կոմիտէն Անդրկողկասի համայն թուրքութեան կեանքում:

Բագուի մուսուլմ. ազգ. խորհուրդը՝ իր գործադիր կոմիտէով, տոն էր տա-

լուծն բէկ. 21) Կազի Մօլլա Աբդուրախիմ. 22) Վեդիրով Միր Հասան. 23) Օրուջեվ Օրուջ. 24) Շարիֆով Գուլամ Բզա. 25) Չաֆարով Ալի Իսկենդեր. 26) Հուսէյն Չաղէ Ալի փաշա. 27) Մամեդով Ա. ադուլլա. 28) Մէյիով Ալի. 29) Աբդուլլայեվ Մուլեյման. 30) Բաբայեվ Ալի Հէյդար. 31) Թամբիեվ Մամեդ Գիրէյ, 32) Աբուեվ Օմար բէկ, 33) Պան-Պոսխիկ Բուսահեմ: —Մբանք գրեթէ բոլորը սեղական բէկ-ազալարական դասի և թուրք բուրժուազիտայի յայտանի ներկայացուցիչներն են, որոնք երբէք ոչ մի անշուքիւն չեն ունեցել դեմօկրատիայի և յեղափ. գործունէութեան հետ: Գրանց մէջ կան ականաւոր գէմքեր պանիօլամիտական հոսանքին պատկանող: Բացի վերև թուածներէից կոմիտէի մէջ միայն վեց տեղ յատկացրուած է թուրք գիւղացիութեան և բանաստեղծութեան ներկայացուցիչներին:

լիս մուսուլման տարրի քաղաքակա-
նութեան առհասարակ ամբողջ կովկա-
սում: Նա «արթուն հսկիչի» նման հե-
տևում էր ուսս դեմօկրատիայի և կա-
ռավարութեան բոլոր քայլերին և մու-
սուլմանական կամ կովկասեան կեան-
քին վերաբերող կարգադրութիւններէ-
մէջ խառնուում էր նա ինքնալու խ՝ խօ-
սելով բողոքողի և սպանացողի լեզ-
ւով:

Ժամանակաւոր կառավարութիւնը,
ինչպէս յայտնի է, հարկ էր համարել
Պետրոգրադում կովկասի գործերին
վերաբերեալ հիմնելու մի առանձին
կոմիտարիատ Նաբօկովի և նրա օգնա-
կան Սեանգուլովի գլխաւորութեամբ:
Այդ փաստը դուր չի գալիս Բագուի
մուսուլմ. կոմիտէին, և ահա նա հե-
ռագիր է ուղարկում կառավարութեան
(պատճէնը ուղարկում է Կերենսկուն),
Սկոբելևիին, Չխէիձէին, Մերեթելիին,
Ներկրասովին, համառուս, մուսուլմ.
խորհրդին և Անդրկովկասի յատուկ
կոմիտէին), որ նա «ամենայն վճռա-
կանութեամբ բողոքում է Պետրոգրա-
դում կովկասի գործերի վերաբերեալ
կոմիտարիատ հիմնելու գէմ»: *)

Փաստը ինքն իրեն վերցրած շատ

*) «Изв. ком. бак. мус. общ. орг.» № 154,
յուլիսի 13, 1917 թ.

ժողով է, բայց և վերին աստիճանին
քննորոշ է: Հետաքրքրական են այն շար-
ժառիթները, որոնք հիմք են ծառայել
մի այդպիսի բողոքի: Պետական-ժայր-
երկրային շահերի տեսակէտից է թուր-
քական կոմիտէն աւելորդ համարում
վերոյիշեալ կոմիտարիատի գոյութիւ-
նը, թէ ուրիշ փորացաւ ունի նա:
Արգեօք կրողըէր նա և այն դէպքում,
եթէ նշանակուած անձնաւորութիւնը
մուսուլման լինէր կամ գոնէ հայ չլի-
նէր և կամ, վերջապէս, երեք հոգի լի-
նէին՝ հայ, մուսուլման և վրացի:

Այս ենթադրութիւններէց և ոչ մէ-
կի համար որևէ ակնարկ չի անում
յիշեալ բողոքող հեռագիրը թուրքա-
կան կոմիտէի: Բայց նոյն կոմիտէի
պաշտօնական օրգանը չի քաշում իր
առաջնորդողի մէջ իսկական փորացա-
ւը յայտնելուց. «Զէ որ կովկասը քաղ-
կացած չէ միայն հայերից, որոնք մի-
այն փոքրամասնութիւն են կազմում
նրա մէջ, ի՞նչպէս կարող են սեծա-
մանութիւն կազմող ժողովուրդները
համաձայնուել, որ ժայրերկրի գործերի
անօրինոզը լինի փոքրամասնութեան
ներկայացուցիչը՝ արհամարհելով մե-
ծամասնութեան իրաւունքները» *):

*) «Изв. ком. бак. мус. общ. орг.» № 158,
18-ին յուլիսի 1917 թ.—նոյն համարում սի-

Անա որտեղ պիտի որոնել մուսուլ-
կոմիտէի բողոքի շարժառիթները:
Պարզ է, որ այդ կոմիտէն զուտ նա-
ցիօնալիստական տեսակէտից է նայել
հարցին և ոչ պետական ծայրերկրային
շահերի տեսակէտից: Այդ բաւական
չէ: Բազուի մուսուլմանական կոմիտէի
օրգանը դեմոկրատական սկզբունքը
շահագործել է դեմագոգիական պրիօժ-
ներով: Ժողովուրդների լինչ „մեծա-
մասնութեան“ և „փոքրամասնութեան
իրաւունքների“ մասին խօսք կարող է
լինել մի զուտ վարչական ֆունկցիայի
մէջ, ուր չի պահպանուում և չի կիր-
առուում ժողովրդական և ազգային
ներկայացուցչութեան ընտրական ըս-
կզբունքը: Ժամանակաւոր կառավա-
րութիւնը նշանակել է եվանգելիստիկ
ոչ թէ նրա համար, որ նա հայ է, ոչ
թէ իբրև ներկայացուցիչ (փոքրա-
մասնութեան կողմից) հայ ժողովրդի,
այլ որպէս յարմար և համապատասխան
բով ու տանձին յանձնարարութեամբ արտա-
պուծ է վրաց ֆեդերալիստների „Возрож-
дение“ թերթից (յայտնի հայաստեաց «Закавк.
Рѣч»-ի յաջորդը) մի յօդուած, ուր խտ-
ցրած և տենդենցիօզ գոյներով նկարագրուած
ճանգուղովի բաղաբական անցեալը և արտա-
յայտուում է բողոք, որ շնայ նացիօնալիստը
նշանակուած է հովկասեան գործերի կոմի-
տարիտար անդամ:

անձնաւորութիւն տուեալ ֆունկցիայի
համար, ով ուզուում է թող լինի նա իր
ծագումով: Հօ չի կարելի պահանջել,
որ հովկասին վերաբերող ամեն մի պաշ-
տօնի համար անպատճառ նշանակուեն
3—4 հոգի (մուսուլման, հայ, վրացի և
ռուս), եթէ կարիք կայ մի կամ երկու
հոգու, որոնց ազգային ծագումը մի
յեղափոխական կառավարութեան հա-
մար միանգամայն զուրկ է որևէ նը-
շանակութիւնից. նրանք կարող են լի-
նել կամ կովկասեան ժողովուրդներից
և կամ պետական կենտրոնից (սուս
կամ ոչ սուս):

Այսպէս ուրեմն տեսնում ենք, որ
նացիօնալիստների լօգիկան բայում է
միայն մի ստի վրայ: Նրանց արգու-
մենտները չեն բղխում դեմոկրատա-
կան կամ միջազգայնութեան առողջ
սկզբունքից, այլ աղճատում են այդ
սկզբունքը և մոլորեցնում անգիտակ
մասսաներին:

Նոյն կազ է կազ լօգիկայով են վե-
րաբերուել մեր հարեանները դէպի մի
այլ նոյնքան ընորոշ փաստ:

Ժամ. կառավարութիւնը թիւրքիա-
յից նուաճած հայկական զաւառների
համար գլխաւոր կոմիտար էր նշանա-
կել գեներալ Ալիբեանովին, իսկ նրան
օգնականներ Իվանիցկիին և Չավրեա-

ներն: Այս փառքը ևս չկարողացան հանգստութեամբ տանել մուսուլման նացիօնալիստները: Եւ ան անդրկովմուսուլմ. կօմիտէն նորից հարկ է համարում գիմել (յունիսի 1-ին 1917 թ.) մինիստր-նախագահ իշխ. Լվովին, զինմինիստր Կերենսկուն և Անդրկովկասի օգակոմի նախագահ Սարլամովին և պահանջել, որ մի մուսուլման ևս նըշանակուի գրաւուած մասերի կօմիսարի օգնական, փաստաբանելով, որ այդ մասերի բնակչութեան $\frac{2}{3}$ մասը մուսուլմաններ են:

Իս դեռ ոչինչ: Ետտ աւելի համարձակ լեզուով և կաթեգորիկ տոնով է վերաբերուել զէպի այդ փաստը համառուսակ. մուսուլմանակ. համագումարը կազանում: Նա ուղղակի պահանջել է. «Հեռացնել թիւրքիայից գրաւուած մասերի գիներալ-կոմիսարներին (Ավերեանովին և Զավրեանին) և նրանց փոխարէն նշանակել երեք կօմիսարներ՝ մէկ ռուսի, մէկ մուսուլմանի և մէկ հայի: Վերջինս չլինի «Իաշնակցութիւն» կուսակցութիւնից, այլ լինի սոց.-յեղ. կամ սոց.-դեմ. կուսակցութիւններից»*):

Մարդ պաշոււմ է ուղղակի այդ յան-

*) „Изв. ком. бак. мус. общ. орг.“ № 177, օգոստ. 17, 1917 թ.

դուքն տօնի վրայ: Ո՞վ է վերապահել մի ժողովրդի նացիօնալիստ դեկավարներին իրաւունք՝ ընդհանուր պետական գործերին ու կարգադրութիւններին այդքան աններելի ձևով խառնուելու. «հեռացնել», «նշանակել», հեռացնել այս ինչ կուսակցութեան մարդուն, նշանակել այն ինչ կուսակցութիւնից և այլն»):

Ասացէք ինչդիմ, յարգելի հարեաններ, հաշիւ տալիս էք ձեզ, թէ ինչ հետեանք կստացուի, եթէ բոլոր ենթակայ ժողովուրդների «ազգային» օրգանները նման կաթեգորիկ լեզուով և յանդուգն տոնով պահանջներ ուղղեն կենտրոնական իշխանութեան: Ի՞նչ մթնոլորտ կստեղծուի, եթէ միմի-

*) Նման բազմաթիւ պահանջներով յաճախ է դիմել Բագուի մուսուլմանական կօմիտէն թէ կենտրոնական և թէ ժայերկբային իշխանութեան: Պահանջում ենք անմիջապէս ազատել բանտից այս ինչ մուֆտիին կամ այս ինչ մուսուլմանին: պահանջում ենք իսկոյն քննութիւն նշանակել այս ինչ գործի համար և այլն և այլն:—Եղաւ դէպքը Անդրկովկասի անկիւններում, Տուրկեստանում թէ Ղրիմում, զեռնականների, բաշկիրների, կիրգիզները թէ Անասօլիայի քրդերը կեանքում, այդ միևնոյն է. ոչինչ չէր վերստի պանխալմիստ Թոփիքաշեֆները հայեացքից, ամենուրեք թափանցում էր նրանց սուր աչքը:

հանց դէմ մրցութեամբ լարուած այդ օրգանները իրաւագորուած զգան և բաւարարութիւն ակնկալեն իրանց բազմաթիւ պահանջների համար: Չէ որ նացիօնալիստական կապրիզներին խաղալիք դարձնելով պետական իշխանութիւնը, դուք կարող էիք միայն խանգարել պետական ամեն մի շինարար գործ և օրգանական աշխատանք ծայրերում, խորացնել երկրում ստեղծուած և տեքուսներ գործող անարխիան և անուղղակի հարուածել յեղափոխութեան և գեմոկրատային թիկունքից, որոնց առաջ դուք այնքան ոգևորուած խուսկ էիք ծխում սկզբնական ամիսներին:

Ի հարկէ, թուրքական կամ մուսուլմանական նացիօնալիզմի հետզհետէ ազրեսիւ բնոյթ ստանալը հետեւանքներից մէկն է պետական ընդհանուր քայքայման երևոյթի, երկրի իշխանութեան ոյժի և հեղինակութեան անկման: Մի ինչ որ Քրօնշտադի մատրոսներէ խորհուրդ՝ Բոլաշելի և Բասկոնիկոյների գլխաւորութեամբ, խաղալիք էր դարձրել Պետրօգրադի կառավարութեան՝ իր ապստամբ պահանջներով և որոշումներով: Կատաղի օձի նման փշշացող ուկրայնական նացիօնալիզմը ահագին, երկարատև կրի-

զիս էր ստեղծրլ իր կենտրոնախոյս պահանջների շուրջը: Ո՞վ էր սանձահարում և ինչից էին քաշուում մուսուլման նացիօնալիստները. ինչո՞ւ չօգտուել «յարմար առիթից»...

Քանի գնում, այնքան աւելի ու աւելի էր ուժեղանում մուսուլման նացիօնալիստների վարած քաղաքակաճութեան ազրեսիւ բնոյթը. աւելի ու աւելի էր խորթանում նրանց աչքում ռուս «նոր» պետականութեան գաղափարը, այսինքն նրանք աւելի ու աւելի էին մօտենում իրանց «հին» հազարամեակային պետականութեան տեսակէտին:

VII

Մուսուլմանութիւնը և գինտրական քաղաքականութիւնը

Մուսուլման կազմակերպութիւնների «ազգային - հասարակական» գործունէութեան ամենակարևոր բնագաւառներից մէկը կազմեց գինտրական քաղաքակաճութիւնը:

Ինչպէս կրթական - լուսաւորական, կուլտուրական և քաղաքացիական բարաւունքների նկատմամբ զլուխ բարձրացրին մանր ժողովուրդները և իւրօրինակօրէն հասկացած ինքնորոշման պահանջներ զրին պետական իշ-

խանութեան առաջ, այնպէս էլ ազգային-զինւորական հարցի նկատմամբ մի ընդհանուր շարժում առաջացաւ ամենուրեք: Բոլորն էլ անխնայ ձգտում էին ազգային-զինական ոյժերը հաւաքել, համախմբել ազգային դրօշակի տակ, կազմակերպել և օժտել նրանց ազգային - աւտօնօմ իրաւունքներով: Այդ շարժումից ոչ միայն յետ չմնացին մուսուլմանները, այլև զիմեցին գործի լարած և ինտենզիւ էներգիայով:

Ինչի՞ մէջ էր կայանում մուսուլմանների պահանջը այդ վերին աստիճանին փափուկ ու պատասխանատու հարցում:

Մուսուլման զինւորների կազմակերպման հարցը ծագել է զեռ յեղափոխութեան առաջին ամիսներին: Նախաձեռնութիւնը պատկանում է 12-րդ զօրաբանակի (армия) մէջ գտնուող մուսուլման զինւորներին, ուր սրանք եղել են աւելի բազմաթիւ, քան որևէ այլ զօրաբանակում: Այդ զինւորների առաջին համագումարը եղել է ապրիլի 26-ին (1917 թ.), Ապա կրկնւել է նոյնը մայիս և յունիս ամիսներին: Յուլիսին արդէն (20—31-ը) կայանում է Կազանում համայն մուսուլմանութեան զինւորութեան առաջին ընդհանուր

համագումարը 200 պատգամ. մասնակցութեամբ*): Իսկ նոյեմբերի 5-ին տեղի է ունենում Գանձակում կովկասեան մուսուլմանական առաջին զինւորական համագումարը 45 պատգամաւորների մասնակցութեամբ:

Թէ այդ համագումարներում, թէ մուսուլման հասարակական կազմակերպութիւնների և քաղաքական կուսակցութիւնների խորհրդակցութիւնների մէջ և թէ պաշտօնական պատգամաւորութիւնների պահանջների մէջ շեղում էր և որոշել է միևնոյն իրձը՝ մուսուլմանութեան համար շատ նշանակալից ու թանկարժէք մի ցանկութիւն:— Համախմբել ազգային դրօշակի տակ մուսուլման զինւորութիւնը, ուրիշ խօսքով ազգայնացնել մէկ և կէս միլիոնի հասնող մուսուլման զօրքը:

*) Թնարտ է այն հանգամանքը, որ մուսուլման զինւորութեան առաջին ընդհանուր համագումարը կայացել է իշխանութեան կամքին հակառակ: Մուսուլմ. զին. խորհուրդը ուշադրութիւն չդարձնելով Կերենսկու մերժման հեռագրի վրայ, հրաւիրել է համագումարը: Կերենսկու կառավարութիւնը, կանգնելով փաստի առաջ, ստիպւած տալիս է իր համաձայնութիւնը: Կարող էր խաղալիք դարձած այդ թոյլ իշխանութիւնը պատկառանք և յարգանք վայելել առհասարակ զօրքի աջում:

Ահա մուսուլման նացիօնալիստները
Չերմ փափազը:

Հետաքրքրական են համառուսական
մուսուլման զինւորութեան առաջին
ընդհանուր համազումարի այդ ուղ-
ղութեամբ ընդունած որոշումները.

1. Մշտապէս ունենալ Թիփլիսում
մուսուլման զինւորական պատգամա-
ւորութիւն (զեկեզացիա):

2. Կովկասում կազմակերպել տեղա-
կան զիվիզիայից (дикая дивизія) նոր
պահեստի մասեր և այդ նպատակով
արևմտեան ճակատից հայրենիք տե-
ղափոխել այդ զիվիզիայի պատրաստ
մասերը:

3. Պահանջել, որ անարգել ստեղծեն
մուսուլմանակ զինւորական կօմիտե-
ներ կովկասեան զինւորական շրջա-
նում (военный округъ) և Կովկասեան
Ֆրօնտի զօրաբանակում:

4. Այժմ և եթ կազմակերպել (сфор-
мировать) առանձին թաթարական
(թուրքական) գնդեր և զիվիզիաներ:

5. Այժմ և եթ առանձնացնել ճա-
կատ ուղարկող մուսուլման զինւորնե-
րին և կազմակերպել նրանցից յատուկ
ազգային թաթարական գնդեր:

6. Պէտք է վերացնել բոլոր խոչըն-
դոտները Կովկասում առանձին մու-
սուլմանական կամաւորական խմբեր

(дружины) ստեղծելու համար:

7. Ազգային զօրական մասեր կազ-
մակերպելու նախազօծի մշակումը յանձ-
նել յատուկ յանձնաժողովի, որ պիտի
կազմակերպել մուսուլման կենտրո-
նական զինւորական խորհրդին կից:

8. Դիմել այդ խնդրի իրականացման
առանց այլևայլի, հազորդելով միայն
այդ մասին ժամանակ. կառավարու-
թեան:

Իշխանութիւնը արգելքներ է յարու-
ցանում մուսուլմանների զինւորական
յատուկ քաղաքականութեան դէմ:
Մուսուլման օրգաններն ու գործիչնե-
րը բողոքում են ժամ. կառավարութ.
դէմ, քննադատելով և մեղադրելով նը-
րան իր աչառ վերաբերմունքի մէջ:
Ինչո՞ւ միւս ժողովուրդներին (օր. վրա-
ցիներին, հայերին և այլն) ներելի է
ազգային գնդեր կազմակերպելը, իսկ
մուսուլմաններին՝ ոչ: Այսպիսի առար-
կութիւններ էին անում մուսուլմա-
նութեան ղեկավար մարմինները:

Օգոստոսի 8-ին ներկայանում է Կե-
րենսկու կառավարութեան մուսուլ-
մանական մի քաղմամարդ պատգա-
մաւորութիւն և մատուցանում նրան
երեք ղեկուցադրեր, որոնցից առաջի-
նը վերաբերում է մուսուլմանների
ազգային զինւորական մասեր կազ-

մակերպելու պահանջներին: Այդ պահանջները պատճառաբանելի են զինուորական, քաղաքական, կրօնական և վարչական մօտիւններով *):

Երկար վարանումներից յետոյ ժամհառավարութիւնը տալիս է իր համաձայնութիւնը հոկտեմբերի սկզբներին: Թէ ինչպիսի տօնական տրամադրութիւն և ցնծութիւն է պատճառում այդ պաշտօնական թոյլադրութիւնը մուսուլմանութեան ղեկավար շրջաններում, դա ցոյց է տալիս նրանց պաշտօնական օրգանի հետեւել յաղթական յայտարարութիւնը. «Մեզ համար այժմեանից սկսում է մի նոր դարագլուխ և մեր ազգային տօներին պէտք է աւելացնենք երկու տօն օրեր ևս. մէկը ցարական լծից ազատելու օրը, միւսը ազգային զօրք կազմակերպելու համար բաց թողած դեկրետի օրը: Քաղաքական տեսակէտից մուսուլմանակ. ազգ. զօրք կազմակեր-

*) Աւելի մանրամասն գաղափար կաղմելու համար, թէ ինչ աղմուկներ են բարձրացրել մուսուլմանները՝ իրանց պատգամաւորութիւններով ու ղեմումներով, ազգային զօրք կազմելու ձգտումների շուրջը, յանձնարարում ենք ընթերցողին Բագի կօմիտէի պաշտօնական օրգ. հետեւել համարները. «ИЗВ. Ком. Бак. мус. общ. орг.» №№ 135, 161, 164, 172, 176, 177, 179, 137, 138, 181, 189 և ուրիշ շատերը:

պելու դեկրետը ունի աւելի մեծ նշանակութիւն, քան ուրա ժողովրդի ձեռք բերած ազատութիւնը...»*):

Ուշադրութիւն դարձրէք մուսուլման օրգանի այդ տօնական յայտարարութեան, մանաւանդ նրա վերջին իւրօրինակ գնահատական խօսքերի վրայ: Ի՞նչ է պատահել, ինչո՞ւ է այդ հարսանիքը «նրանց տանը»...

Մուսուլմանութիւնը, ինչպէս և ամեն մի նման հնթակայ ժողովուրդ կամ ազգ մեր երկրում, ստացել էր ուրա յեղափոխական իշխանութիւնից այն ամենը, ինչ կարող էլ տալ մի ժամանակաւոր կառավարութիւն՝ իր ժամանակաւոր լիազօրութեամբ և սահմանափակ իրաւունքներով: Բայց մանր ժողովուրդների, ինչպէս և մուսուլմանութեան անզուսպ նաղիծալիզմը հեռուն գնաց իր կաթիզօրիկ պահանջների մէջ. զօրքի ազգայնացման կամ ազգային զօրք ունենալու իղձը յայտարարեց և ստացաւ բաւարարութիւն:

Ռուս յեղափ. դեմօկրատիան և նրա կամատարտայայտիչ ժամ. կառավ. մի աւելորդ անգամ գործեցին բազմաթիւ ճակատապրական սխալներից մէկը: Աւելորդ անգամ մասնեցին նրանք պետականութեան շահերի իրանց թոյլ

*) Նոյն տեղը № 224, 7-ին հոկտ. 1917 թ.

ու մակերեսային ըմբռնողութիւնը: Աւելորդ անգամ ցոյց տուեց ոռու դեմօկրատեան, թէ որ որպիսի անճարակ խաղալիք էր դարձել նա «ինքնորոշման» առաձգական, այնքան անգթօրէն շահագործող ֆորմուլայի՝ սրա ընկացիօն և հակայեղափոխական կօմենտատօրների ձեռքին:

Ի՞նչ բան է «ազգային առանձին գնդեր», «ազգային յատուկ գօրք» ասածը: Ուրիշ ոչինչ, բայց եթէ ազգային յատուկ քաղաքականութեան սեփական յենարաններ: Անգօր է և պալիատիւ ամեն մի քաղաքականութիւն, առանց ֆիզիքական ոյժի: Ազգի ռազմիկ կարողութիւնը հիմքն է և տաղձը ազգային քաղաքական իդէալների իրականացման համար: Այդպէս է սիգնատուրը այն ժամանակի, որ ապրում է ժամանակակից հասարակութիւնը:

Ազգաբնակչօրէն խայտապղէտ, հետերօգին Ռուսիայի մագմաթիւ ժողովուրդները ունեն իրանց ազգային յատուկ ձգտումները, իդձերը, «ազգային իդէալը», հետևապէս նաև «ազգային յատուկ քաղաքականութիւնը»: Ոչ բոլոր դէպքերում ժողովուրդների ազգային ձգտումներն ու քաղաքականութիւնը համերաշխօւմ ու գաշնակցօւմ

են իրար հետ: Ինչպէս և ոչ բոլոր դէպքերում ենթակայ ժողովուրդների ձգտումներն ու քաղաքականութիւնը համակերպօւմ են պետականօրէն իշխող ժողովրդի ազգային ձգտումների և քաղաքականութեան հետ: Չէ որ ազգային ձգտումներն ու քաղաքականութիւնը այլ բան չէ, բայց եթէ տիրապետող դասակարգերի ձգտումներ ու քաղաքականութիւն՝ ընդհանրացած և ազգային բնոյթ ստացած: Եւ չէ որ տիրապետող դասակարգերը՝ թէ իշխող և թէ ենթակայ ժողովուրդների մէջ, մրցութեամբ ու պայքարով լարուած են իրար դէմ:

Սակայն զինել և օժտել այդ բազմաթիւ ժողովուրդներին ազգային գօրազնդերով, նշանակում է զէնք տալ նրանց յատուկ քաղաքականութեան ձեռքը և դրանով աւելի բարձրացնել հակամարտ դասակարգերի մրցութեան ու պայքարի աստիճանը տարբեր իրականութիւնների մէջ: Յաւը նրանումն է, որ այդ գօրազնները ազգային են ոչ միայն իրանց կազմով, այլև նրանք ենթարկւում են ազգային ղեկավար մարմինների հեղինակութեան և հսկողութեան: Այնպէս որ ազգային մարմինները կարող են վարել ազգային քաղականութիւն հենուելով ազ-

գային գնդերի Ֆիդիկական ոյժերի վրայ: Իսկ դա նշանակում է՝ միևնույն երկրի սահմաններում ստեղծել պայմաններ ոչ միայն միջազգեան կամ միջցեղեան քաղաքական պայքարի համար, այլև զինական արիւնահեղ ընդհարումների համար:

Ճաւ ի սիրտ պիտի խոստովանենք, որ ժամանակաւոր հառավարութիւնը իր քաղաքական ասիկար կուրսով ահամայ և անգիտակցօրէն ստեղծեց երկրի և յեղափոխութեան համար այլքան կործանարար նշանակութիւն ունեցող պայմաններ:

Ուրեմն մեր դերքը դէպի ազգային գնդերը՝ սկզբունքային տեսակէտից, միանգամայն բացասական է:

Սակայն կայ մի խոշոր ու կարևոր անարբերութիւն այս խնդրում, որ չը պէտք է մոռացութեան տալ:

Կան ժողովրդական տարրեր, որոնք իրանց ազգային շահերով ու ձգտումներով վարում են պետական և կենտրոնածիզ քաղաքականութիւն: Ուրիշ խօսքով նրանց վարած ազգային քաղաքականութիւնը գալիս ու համերաշխում է իշխող ազգի պետական քաղաքականութեան հետ: Հետևապէս այդ ժողովուրդների ազգային գնդերը կարող են միայն նեցուկ ու յննարան

ծառայել իշխանութեան վարած պետական քաղաքականութեան համար ծայրերկրներում:

Ընդհակառակը կան այնպիսի ժողովրդական տարրեր, որոնք իրանց ազգային մերձաւոր սպասելիքների և «իդէալի» անունով վարում են տրամագծօրէն հակապետական և կենտրոնախոյս քաղաքականութիւն: Ուրիշ խօսքով նրանց վարած ազգային քաղաքականութիւնը ուղղակի հակասում է իշխող ազգի պետական քաղաքականութեան: Նշանակում է այդ ժողովուրդների ազգային զօրագնդերը ոչ միայն նեցուկ լինել չեն կարող, այլև կփոփոքեն պետական իշխանութեան տիրապետութեան հիմքերը ծայրերկրներում:

Ամենքին յայտնի է, որ Անդրկովկասում տեղական ժողովրդներից առաջին հերթին հայերը և վրացիները պատկանում են վերև շեշտած ժողովրդական տարրերից առաջին տեսակին: Ոչ ոքի համար զաղանիք չէ նաև այն, որ մեր ծայրերկրի մուսուլմանները պատկանում են ժողովուրդներից երկրորդ տեսակին:

Իրութիւնը այնքան պարզ է և փաստերը ակնյայտնի, որ երկար բացատրութեան հարկ չկայ:

Հայերն ու վրացիները տուել են ուսու իշխանութեան կանոնաւոր դորամասեր, որոնք պետական հիմնական (ուսական) զօրքը քայքայուելուց, ցրուելուց և ուղղական ճակատը մերկացնելուց յետոյ, պէտք է կազմակերպուէին իբրև պատրաստի դորագնդեր ցրուածներին փոխարինելու և ճակատը պաշտպանելու համար արտաքին թըշնամու դէմ:

Անդրկովկասեան մուսուլմանութիւնը, ընդհակառակը, չի տուել մի զինուոր անգամ պարտադիր և կանոնաւոր զինուորական ծառայութեան համար: Մեր խնդիրը չէ քննել այստեղ հին րէժիմի կողմից մտցրած այդ քաղաքացիական խորթութեան պատճառները: Մենք շեշտում ենք միայն փաստը: Հարց է ծագում, ինչով բացատրել մուսուլման ղեկավար շըջանների տենդային գործնէութիւնը՝ մասաներ զինելու և ազգային գնդեր կազմակերպելու շուրջը: Ի՞նչ պետական և ծայրերկրային ընդհանուր շահերից կարող էր բղխել նրանց զինուորական քաղաքականութեան անհրաժեշտութիւնը:

Եւ ոչ մի,—կարող ենք պատասխանել ամենայն հանգստութեամբ և անաչառութեամբ:

Կազմակերպուած զօրք ունենալու

կարիքը ամենամեծ չափով զգացում է պատերազմի ժամանակ՝ հայրենիքի սահմանները արտաքին թշնամուց պաշտպանելու համար: Անդրկովկասը դժբախտութիւն ունի սահմանակից լիւնելու մի այնպիսի արտաքին թշնամու— Թիւրքիային— որի դէմ պաշտպանուելու համար մեր հարեան մուսուլմանները չեն, որ պիտի պատերազմի դաշտ ելնեն: Սա փաստ է, դառն իրողութիւն, որ պիտի շեշտուի ամենայն վճռականութեամբ: Մեր ծայրերկրի թուրք - թաթարները ոչ միայն չեն կոռել և չեն կռուի «օտար» Թիւրքիայի դէմ, այլև երկար ժամանակ տարուած պանիսլամիստական հովերով, բացառապէս Թիւրքիայից են սպարիւ իրանց երազական ձգտումների և տենչանքների իրականացման հնարաւորութիւնը, ինչպէս տեսանք մենք մի յատուկ գլխում (IV գլ., եր. 53):

Ի հարկէ, մուսուլման ղեկավար շըջանները աշխատում էին փարատել ամեն մի կասկած, լաւ իմանալով, որ իրանց զինուորական հապճեպ պատրաստութիւնների շուրջը ծագած կասկածները միանգամայն բնական են և բանական:

—Ինչպէս ուրիշ ժողովուրդներ, այն-

պէս էլ մենք՝ մուսուլմաններս, ցանկանում ենք ունենալ զինական պատրաստի ոյժեր՝ ձեռք բերած ազատութիւնը և յեղափոխութեան նուաճումները պաշտպանելու համար հակայեղափոխութեան դէմ: Մութ ոյժերի պրովոկացիայի արդիւնք է այն կասկածն ու անվստահութիւնը, որ իբր մուսուլմանները զինուում են և կազմակերպւում են ուրիշ ժողովուրդների, ուսական ազատութեան և պետականութեան դէմ:—

Այսպիսի հաւաստիացումներ շատ են եղել թուրք կազմակերպութիւնների, օրգանների և գործիչների կողմից՝ կոչերի, ճառերի, հետազոտների և պատգամաւորութիւնների միջոցով, մանաւանդ թրքութեան հրկու կարևոր կենտրոններում՝ Բաղուում և Գանձակում: Եւ որքան կասկածները ուժեղանում էին, այնքան հաւաստիացումները յաճախ էին կրկնւում, նոյն իսկ պաշտօնական օրգանների միջոցով: Այսպէս օրինակ յունիս ամսին (1917 թ.) Գանձակ եկած մուսուլման զինւորական պատգամաւորութիւնը պահանջել է սեղական զին. և բան. խորհրդի գործադիր կոմիտէից, որ սա «կոչերի և թուրքիչների միջոցով դատապարտէ մուսուլմանների դէմ ուղղուած մեղա-

դրանքը, որոնք իբր զինուում են ուրիշ ազգութիւնների դէմ *): Եւ նման հաւաստիացումներով թուրքերին վստահութեան ատեստացիա էին տալիս երբեմն վրացի ֆեդերալիստները **):

Այդ բոլոր ինքնարդարացուցիչ հաւաստիացումները յիշեցնում են մեզ բարձրակոչ ճառերը այն միլիտարիստների՝ սկսած վերջին ազիտատօրից մինչև վիլհելմ 11-ը, որոնք անդադար սպառազինումները և պատերազմական պատրաստութիւնները արդարացնում էին նրանով, որ իբր այդ բոլորը անւում են ոչ թէ հարևան երկրների և ժողովուրդների դէմ, այլ բացառապէս

*) Տես. „Изв. ком. бак. общ. орг.“ № 136. 21-ին յունիսի, 1917 թ.

**) Մուսուլման զինւորակ. պատգամաւորութեան հանդիսաւոր ընդունելութեան ժամանակ Գանձակում վրացի ֆեդերալիստ բժ. Բուսիեվ-Նորչիբաշեվը (կուսակ. տեղական կոմիտէի նախագահ և նախնական գործադիր կոմիտէի անդամ) մի ընդարձակ ճառ է արտասանում, որտեղ մի շարք շողոքորթութիւններով արդարացնում է մուսուլմանների զինւորակ. բաղաբականութիւնը: Վրաց ազնուականութեան իդէօլոգը ուրիշ կերպ չէր կարող արտայայտել թուրք բեկութեան իդէօլոգներին մասին: Ի զուր չէ, որ նրա ճառը ամբողջապէս և առանձին յանձնարարութեամբ զետեղել է իր էջերում մուսուլմանական „Извѣстія“-ն (№ № 137, 138):

սեփական երկիրը և ազգային կուլտուրան պաշտպանելու համար:

Յաւելով պիտի ասենք, որ ինչպէս միլիտարիստների այդ հաւաստիացումներն են կեղծ ու ցինիկ, այնպէս էլ մուսուլման նացիօնալիստների յեղափոխական Ֆրազներով զարգարւած հաւաստիացումներն են նշմարտութիւնից նոսր: Մէկ թէ միւս դէպքում դերասանական վարպետութեամբ սարքած խաղեր են դրանք՝ միամիտ մասսաներ խաբելու և հարևաններին չը արթնացնելու և չը յուզելու համար:

Ռուսական ազատութիւնը կարող է պաշտպանել միայն ունս ժողովուրդը հակալեզափոխական բէակցիայի դէմ: Իր ձեռք բերած յեղափոխակ. խոշոր նուաճումների համար ունս կազմակերպուած դեմօկրատիան յամենայն դէպս հազիւ թէ կարիք ունենայ մուսուլման ժողովրդի այն խաւերի օգնութեան, որոնք ոչ միայն որևէ երախտեք չունեն ունս ազատագրական շարժման պատմութեան մէջ, այլև ամեն կերպ աշխատել են խաւար մասսաներ կազմակերպել այդ շարժման դէմ և աջակից հանդիսանալ յադթանակող բէակցիային:

Ասացէք ինչքեմ, մուսուլման նացիօնալիստներ, որքան անկեղծ կարող

են լինել և քանի՞ գրօշի արժէք ունեն խաների, բէկերի և աղալարների բերնով յայտարարած ձեր հաւաստիացումները *), որոնք եղել են, և միշտ կը մնան որպէս այդպիսիք, ամեն մի բէակցիայի նեցուկները, ամեն մի հակալեզափոխական շարժման բնական գործօնները: Որոնք լինելով անհաշտ թշնամիներ ունս ազատ պետականութեան զաղափարին, միաժամանակ երգուեալ թշնամիներ են հանդիսանում մուսուլման աշխատաւոր ժողովրդի տնտեսական, սօցիալական և քաղաքական ազատագրութեան:

Ոչ, մուսուլմանների զինւորական քաղաքականութեան տենդենցները պիտի ուրիշ տեղ որոնել:

Որքան երկրի ներսում ուժեղանում էր անաբխիան, որքայաչափ ու աւերումը, որքան կառավար. և յեղափոխական

*) Նման հաւաստիացումներ տուել է ի միջի այլոց, և Ղուբայի մուսուլմանական կօմիտէն՝ մուսուլմ. զին. խորհրդին ուղղած իր հեռագրի մէջ, որի ամի ստորագրուած են հետևեալ երևելիները. Ալի-բէկ Ջիզիլսկի, Միրզա Իւսուֆ բէկ Գերիմով, Ազիլ-խան Ջիաթխանով, Շիրին-բէկ Սաֆաբալիբէկով, Նան Բաբա Մանսեղբէկով, Մամեդ Գասան-բէկ Ալիբեկով, Մի շարք խաներ ու բէկեր, որոնք իրաւունք չունեն քաղաքական վստահութեան քուէ ստանալու:

օրգանները կորցնում էին իրանց ազ-
դեցութիւնն ու հեղինակութիւնը մաս-
սաների մէջ, որքան ֆրոնտի վիճակը
աւելի ու աւելի ողբերգական էր դառ-
նում և ապահովում էր արտաքին
թշնամու կատարեալ յաղթութիւնը.
ուրիշ խօսքով՝ որքան թուլանում էր
ուսս յեղափոխութիւնը՝ ներքին ու ար-
տաքին հարուածների տակ, որքան երկը-
ւում էին ուսս նոր, ազատ պետակա-
նութեան ընդ նեցուկները, այնքան
հետըզհետէ պիտի հրապարակ դային
այն յետադէմ ոյժերը, որոնք «մեղ-
րային ամիսներին» կամ թագնուել ու
պատին էին սեղմուել և կամ աւելի
շուտ զարգարել էին իրանց սիրժարգի-
խաբուսիկ փետուրներով:

Ռուսական յեղափոխութեան և դե-
մօկրատիայի ամենամեծ թերութիւն
— նրա պետականութեան զաղափարի
թուլութիւնն է: Իսկ յեղափոխութեան
այդ թոյլ կողմը յաջողութիւն ժպտաց-
րոյր կեարծնախոյս տարրերին՝ իրանց
հակապետական ձգտումների համար:
Մուսուլման տիրապետող դասը, իբրև
առաջին կարգի կենտրոնախոյս մի-
էլեմենտ, պիտի ամենից շատ յաջո-
ղութիւն սպասէր ուսական յեղափո-
խութեան թոյլ կողմից. յեղափոխու-
թեան թերութիւնը — բարիք էր անդր-

կովկասեան թուր բէկութեան համար:
Վերջնիս զինւորական քաղաքականու-
թիւնը՝ աւելի ուժեղացնելով նրա ազ-
րեսիւնացիօնալիզմը՝ իրական կուսան-
ներ պիտի ծառայէր բէկութեան հա-
կապետական և հակայեղափոխական
ձգտումների իրականացման համար:
Ուրիշ խօսքով մասսայական կազմա-
կերպուած զինուժը պիտի միջոց ծա-
ռայէր և դիւրութիւն տար մուսուլ-
ման նացիօնալիստներին՝ իրանց մեր-
ձաւոր սպասելիքները կամ պանթիւր-
քիզմի յաղթանակը իրականացած
տեսնել:

Ահա ինչու էին նրանք ցնծում և
ազգային տօն յայտարարում մուսուլ-
ման գնդեր կազմակերպելու համար
քաց թողած դեկրետի օրը. ահա ին-
չու էր հարսանիք նրանց տանը...

Այդ հակապետական սեպարատիս-
տական կամ պանթիւրքիստական
բուռն տենդենցների ամենացայտուն
արտայայտիչը անդրկովկասեան մու-
սուլմանութեան կեանքում հանդիսա-
ցաւ «Մուսաֆաթ» կուսակցութիւնը,

VIII

«Մուսաֆաթ» կուսակցութիւնը և
բոլշեւիկները.

Այսպէս կոչուած թուրք ազգային-
դեմօկրատական «Մուսաֆաթ» («Հա-

լասարութիւն») կուսակցութիւնը գոյութիւն ունէր դեռ հին ցարական բէժիմի օրով և գործում էր ստորերկրեայ պայմաններում: Յեղափոխութիւնից յետոյ ղիմագրւում է նահասարակական և քաղաքական լայն ասպարէզը և դառնում առաջին ուժեղ կուսակցութիւնը մեր ծայրերկրի մուսուլման իրականութեան մէջ: Անցեալ տարի յունիս ամսին «Մուսաֆաթ» կուսակցութեան հետ ձուլւում է յեղաշրջումից յետոյ հիմնուած մի նոր կուսակցութիւն՝ «Թիւրք ֆեզերալիստների կուսակցութիւնը» («Թիւրք էդեմ Մերքեզիաթ»): Այնուհետև նորահիմն կուսակցութեան անունը կոչւում է՝ Թիւրք ֆեզերալիստների (գեցնատրալիստների) կուսակցութիւն «Մուսաֆաթ» (կամ «Թիւրք էդեմ Մերքեզիաթ ֆիրգասի «Մուսաֆաթ»): Այդ կուսակցութեան թուրքատաօրգանը Բագուում համարւում էր «Աչըզ սեօզ»: լրագիրը, իսկ ուսատաօ բերանը կաղմում էր մուսուլմ. կազմակերպ. կօմիտէի „ИЗВЕСТИЯ“-ն, ուր մեծագոյն մասով մուսաֆաթիստ հրապարակախօսներն էին գործում:

Մի փոքր ծանօթանանք ա. դ կուսակցութեան ոյժի և ֆիզիօնօմիայի հետ փաստական տուեալներով:

Ֆեզերալիստական «Մուսաֆաթ»-ի ոյժի, ազդեցութեան և գործնէութեան կենտրոնը համարւում էր, ընականաբար, Բագուն՝ Աղերբէյջանի այդ հաւակնոտ մայրաքաղաքը: Այդ կենտրոնից փոել է կուսակցութիւնը իր բազմաթիւ ճիւղերը արևելեան Անդրկովկասի շատ վայրերում, սրտնց մէջ Գանձակի ճիւղը, ի հարկէ, բնում էր առաջին տեղը: Բացի իր զուտ կուսակցական կազմակերպութիւններից «Մուսաֆաթը» ունէր ամենապատկառելի մասնակցութիւնը մուսուլման ազգային և հասարակական կազմակերպութիւնների՝ ազգ. խորհուրդների և կօմիտէտների մէջ. մինչ այն աստիճան, որ նրան յաջողւում էր Քիր գիծն անցկացնել ազգային կեանքի վերաբերեալ բոլոր կարևոր որոշումների ժամանակ», — ինչպէս հպարտօրէն շեշտել է կուսակցութեան լիզերներից մէկը իր ղեկուցման մէջ: Ուրիշ խօսքով «Մուսաֆաթ» կուսակցութիւնը տոն և ուղղութիւն էր տալիս մուսուլմ. ազգային գործերին այնպէս, ինչպէս անում է «Գաշնակցութիւն» կուսակցութիւնը հայ կեանքում:

Թէ ծայրերկրային - կառավարական, թէ քաղաքային և թէ յեղափոխական

օրգանների մէջ ունէր նա իր պատկանելի մասնակցութիւնը. Անդրկովկասեան Սէյմում «Մուսաֆաթի» համախոհների թիւը հասնում էր 30 պատգամաւորների (ընդամէնը 30 մուսմ. պատգ.), Բագուի քաղաքային Դումայում մուսաֆաթիստ ձայնաւորների թիւը հաւասար էր 13. ի, իսկ Բագուի բան. և զին. պատգ. խորհրդում «Մուսաֆաթ» կուսակց. ունէր 16 պատգամաւորներ:

Այսպիսի ներկայացուցչութիւն չի ունեցել ոչ մի մուսուլմ. կուսակցութիւն որեւէ հաստատութեան մէջ:

Ոչ միայն այդ: Եղել են ղէպքեր, երբ Բագուի շրջանի բանւորական մասսաների մէջ, ընտրութիւնների ժամանակ, «Մուսաֆաթ» կուսակցութիւնը յաջողութեամբ մրցել է սօցիալիստական կուսակցութիւնների դէմ և յաղթութեամբ դուրս եկել պայքարի բովից: Բնորոշ է այդ տեսակէտից հոկտեմբերի 22-ի (1917 թ.) խորհրդի ընտրութիւնների փաստը: Չորս կարևոր ընտրութիւններում ընտրութիւնների հետևանքները տուել են հետևեալ պատկերը:

Բինազադիում ստացել են. «Մուսաֆաթ» կուս. 1520 ձայն, «Դաշնակցութիւն» կուս. 876 ձ., Բօլշեվիկներ

599 ձ., սօց.-յեղ կուս. 587 ձ., մենչեվիկներ 429 ձայն:

Բամանիում ստաց. [են. «Մուսաֆ»]. 1253 ձ., «Դաշնակց.» 959 ձ., բօլշեվ. 947 ձ., սօց.-յեղ 359 ձ., մենչեվիկներ 86 ձ.:

Բալախանիում. «Մուսաֆ.» 2076 ձ., «Դաշնակ.» 1100 ձ., սօց.-յեղ. 649 ձ., բօլշեվ. 571 ձ., մենչեվ. 66 ձայն:

Չարբատում: «Դաշնակց.» 1259 ձ., «Մուսաֆաթ» 831 ձ., սօց.-յեղ. 240 ձ., բօլշեվ. 212 ձ., մենչեվ. 68 ձայն*):

Յաղթութիւնը տարել են թիւք ֆեդեր. կուս. «Մուսաֆաթը» և Հ. Յ. Դաշնակցութիւնը. հրեք ըայոնում առաջին տեղը պատկանում է «Մուսաֆաթին», վերջին ըայոնում Դաշնակցութեան: Չորս ըայոններում միասին ստացել են. «Մուսաֆաթ» կուս. 5680 ձ., «Դաշնակցութիւն» կուս. 4194 ձ., բօլշեվիկներ 2329 ձ., սօց.-յեղ. կուս. 1835 ձ. և մենչեվիկներ 649 ձայն:

Սա մի փոքրիկ, բայց բնորոշ նրմուշ է այն երևոյթի, թէ ինչպէս զուտ բանւորական ըայոններում մեծ յաջողութիւն ունեն ոչ բանւորական կուսակցութիւնները: «Մուսաֆաթը» այդ կողմից ևս նման է Հ. Յ. Դաշնակցու-

*) Տես «Уав. Ком. Бах. Мус. общ. орг.» № 283, հոկտեմբ. 25-ին, 1917 թ.

թեան. ինչպէս վերջինս հայ իրակա-
նութեան մէջ, այնպէս էլ առաջինը
մուսուլման իրականութեան մէջ պահ-
պանում են տակաւին իրանց տիրա-
պետութիւնը:

Իր ո՞ր առաւելութիւնների համար է
թիւրք-ֆեդերալիստական «Մուսաֆա-
թը» մասնալական յաջողութիւն ունե-
նում մուսուլման բանւորութեան ու
գիւղացիութեան շարքերում. աւելի
շուտ՝ ունի՞ նա առաւելութիւններ՝ մաս-
նայական յաջողութիւն գտնելու հա-
մապատասխան չափերով:

Այս հարցերի բաւարարութիւնը կըս-
տանանք մենք միայն կուսակցութեան
ֆիզիօնօմիան, նրա ազգային-քաղաքա-
կան տենդենցների էութիւնը ճանա-
չելուց յետոյ:

«Մուսաֆաթը» յայտնի պատճառնե-
րով չի զարգարում իր դրօշակը սօ-
սիալիստական՝ մեր օրերում այնքան
էժանացած մակագրով. նա չի անուա-
նում իրան նոյն իսկ յեղափոխական:
Նա «ազգային - դեմօկրատական» մի
կուսակցութիւն է, որ աշխատել է շատ
հիմնական հարցերում իր քաղաքակա-
նութեան առօրեայ պլատֆօրմը մշա-
կել ուսս յեղափ. դեմօկրատիայի պար-
զած ցուցանակի ուղղութիւնով:
Անցեալ տարւայ սեպտ. վերջում և հոկտ.

սկզբներին Գանձակում տեղի ունեցած
մուսուլմ միջկուսակցական խորհրդակ-
ցութեան ժամանակ «Մուսաֆաթը»
ներկայացնում է իր մշակած համա-
ձայնական պլատֆօրմը Հիմնադիր Ժո-
ղովի ընտրութիւնների համար մու-
սուլմանական ընտրացուցակ կազմելու
համար: «Մուսաֆաթ»-ի դէմ մրցում
ու. պայքարում էր մուսուլմ. «սօցիա-
լիստական բլօկը»:

«Մուսաֆաթ» կուսակցութիւնը, հա-
կառակ իր հիմնադիրների (և զեկակար
շրջանների ղուտ բէկական և բուր-
ժուական կազմի, *) հետևապէս նաև

*) Անցեալ տարի հոկտեմբ. 26-ին, «Մուսա-
ֆաթ» կուսակցութեան համագումարին ներ-
կայ է լինում յայտնի Հ. Զ. Ա. Թաղիեվը: Մու-
սուլմ. «ՄՅՅ», հաղորդում է (№ 242), որ հա-
մագումարը զիմաւորում է Թաղիեվին «երկար,
բաւանդաւորութիւններով և օվացիաներով»:
Սովորաբար մի համագումար օվացիաներ է
մատուցանում կամ իր կուսակց. բազմերախտ,
վետերաններին և կամ քաղաքական այնպիսի
յայտնի գործիչներին, որոնց մէջ դադափարա-
յին հարազատ կապեր է գտնում կուսակցու-
թիւնը: Գեմօկրատիայի և յեղափոխութեան ա-
նունից խօսող և բանւորական մաստաների շա-
նք «պաշտպանող» «Մուսաֆաթը» ինչ կա-
պեր է գտել իր և ցարական շքանշաններով
օժտուած կապիտալիստ Թաղիեվի միջև: Մեծ,
խիսա մեծ կապեր: «Մուսաֆաթը» միլիտան-
տէր Թաղիեվների, Մուսա-Նաղիեվների, Ա-
սադուլլայիների և խոշոր կալուածատէր Զիւլ-

ընդդէմ իր նացիօնալիստական բէակ-
ցիօնէր իդէօլօգիայի և հակայեղափո-
խական տենդենցների, պէտք է առա-
ջադէր այնպիսի մի պլատֆօրմ, որով
զինաթափել կարողանար իր հանդէպ
ցցուած մրցակիցներին: Անհրաժեշտ
էր կուսակցական մի այդ օրինակ դիպ-
լօմաթիա մանաւանդ յեղափոխութեան
ալեկոծ շրջանում, սօցիալական պրօբ-
լեմների ետուն մօմենտին, երբ մաս-
սաներ գրաւելու ասպարիզում «Մու-
սաֆաթը» գործ ունէր ոչ միայն ազ-
գային-սօցիալիստական, այլև միջազ-
գային սօցիալիստական մրցակիցների
հետ: Այդպիսի մի դիպլօմատիա նուի-
րագործուած է ամենուրէք բոլոր ոչ
բանւորական-նացիօնալիստական կու-
սակցութիւնների կողմից:

Զարմանալու ոչինչ չկայ, հետևա-
պէս, երբ «Մուսաֆաթը» ընդգրկում է
իր պլատֆօրմի մէջ սօցիալիստական
կուսակցութիւնների ծրագրային մի-
գադարօնների, Ալիգէօզալոնների, Շախմալիեվ-
ների կուսադց. է. ուրիշ խօսքով Բազուի մու-
սուլմ. բուրժուազիայի և Գանձակի նահանգի
բէկութեան և աղալարութեան դասակարգային
իդէօլօգների կազմակերպութիւնն է: Բանւո-
րակ. մասսաները հարկաւոր են Մուսաֆաթին
իբրև «Viestimme» (ձայնատու անասուններ),
իբրև մասսայական ոյժ՝ նացիօնալիստական
քաղաքականութեան համար:

նիմումը բոլոր կարևորագոյն հարցերի
նկատմամբ՝ պետական կազմի, քաղա-
քական սիստեմի, քաղաքացիական ա-
ղատութիւնների, ազրալային, բանւո-
րական և այլ հարցերի մասին: Զար-
մանալու ոչինչ չկայ, կրկնում ենք, երբ
«Մուսաֆաթի» սէյմական Ֆրակցիան
առանց այլևայլի իր դրական բուէն է
տալիս առաջաւոր դեմօկրատիայի մշա-
կած հողային օրինագծին Սէյմում
(մարտի 7-ին 1917 թ.): Դրանք բոլորը
սոսկ իրաւական որոշումներ են, հրա-
պարակ նետած էժան լօզունգների
նման միայն սօցիալական պօստու-
լատներ են, որոնց համար խաների,
բէկերի և աղալարների դասը կարեք
չունէր ոչ անհանգստանալու և ոչ էլ
դժգոհելու իրանց շահերի հաւատար-
մատար և ձգտումների պաշտպան Բա-
սուլ-Զադէների, Բուստամբէկոնների,
Ախունդ-Զադէների, Ուսուրբէկոնների,
Իբրահիմօնների, Մելիք-Եգանօնների,
Օրոնջիօնների, Սուլթանօնների և ուրիշ
շատ մուսաֆաթիստ իդէօլօգների և
դործիչների դէմ:

Բէկ-աղալարական թիւրք «Մուսա-
ֆաթի» «դեմօկրատական բաղիկալիզ-
մը» պատմականօրէն նոյնքան «նե-
րելի» մի սօցիալական ֆալց է, որքան
ֆալց է վրաց ֆեդերալիստ պնուա-

կանները «սօցիալիզմը» կամ հայ մանր-բուրժուական Դաշնակցութեան «սօցիալիզմը» *):

Սօցիալական այդ շղարշուած ֆալշը, այն, հարկաւոր էր բէկական-բուրժուական «Մուսաֆաթին» Բաքուի նման մի բանւորաշատ քաղաքում իր ազդեցիկ դիրքը գրաւելու համար մուսուլման-ազգային իրականութեան մէջ և դեր խաղալու, քաղաքականութիւն վարելու համար միջազգային-պրօլետարական այնպիսի հեղինակաւոր օրդանի մէջ, ինչպէս Բան. և Զին. Պատգ. Խորհուրդն է: Այս հաստատութեան մէջ տեղ ու ձայն ունենալու համար մեծ զոհաբերութիւն չէր պահանջուում, բայց եթէ ունենալ բանւորական մասսաների քուէներ և հնչեցնել դեմօկրատական բաղիկալիզմի ֆրազէօլօգիան: «Մուսաֆաթը» չէր թերանում այդ «պարտականութիւնների» մէջ և հարկ

*) Ի հարկէ, Դաշնակցութիւնը չէնք դատում առանց այլևայլի ազնուական-բէկական էապէս բէկացիօնէր կուսակցութիւնների հետ միասին միևնոյն տախտակի վրայ: Դաշնակցութիւնը խարսխուած է մանր բուրժուական դեմօկրատիայի վրայ և իր այլատարր կամ հետերօգն կազմի մէջ ունի մի մեծ շերտ սօցիալիստական տենդենցներով օժտուած, բայց ինքը կուսակցութիւնը սօցիալիստական չէ իր վարած քաղաքականութեան էութեամբ:

եղած դէպքում, իր դեմօկրատականութեան մասին կասկածներ լինելուց, նա զինուում էր իր ստացած քուէների թուերով և յեղափոխական տրաֆարետ ֆրազիերով *):

«Մուսաֆաթի» կեանքում կայ գործնէութեան և տակտիկական դիրքի մի յատուկ սահման, որ արժանի է

*) Անցեալ տարի սեպտ. ամսին, երբ Կօրնիլովի դէպքի առիթով նոր յեղափ. մարմիններ են կեանքի կոչուում հակա-յեղափոխութեան դէմ կռուելու համար, «Մուսաֆաթի» կենտրոնակ. կոմիտ. բողոքով դիմում է թէ Բաքուի խորհրդի գործադիր կոմիտէին և թէ Անդրկովկասի էսդեկներին և էսէրներին կազմուած ժամ. յեղ. կոմիտէին: Այդ կոմիտէները «Մուսաֆաթին» տեղ չեն տուել, առարկելով նրա ոչ դեմօկրատական կազմի դէմ: «Մուսաֆաթը» բողոքում է դրա դէմ վճռականօրէն. «Մի կուսակցութիւն, որ խմբել է իր շարքերի մէջ Ադերբէյջանի դեմօկրատիայի հակայական մեծամասնութիւնը. մի կուսակցութիւն, որին պատկանում է յեղափոխութեան առաջին օրերից զեկալար դեր՝ Ադերբէյջանում եղած բոլոր համագումարների և ընտրութիւնների մէջ, — առանց այդ կուսակցութեան չի կարող իշխանութիւն կազմակերպուել Անդրկովկասում» (տես մուսուլմ. «ՄՅՅ» № 209): Դրանով «Մուսաֆաթը» — վկայում է միայն իր ոյժի և տիրական դիրքի մասին մուսուլմանութեան մէջ, բայց չի ասպնդուում իր դեմօկրատականութիւնը: Մուսուլմ. իրականութիւնը դեռ շատ հեռու է դեմօկրատիզմին պատկանելի տեղ տալու վիճակից:

առանձին ուշադրութեան և յատուկ քննութեան:

Իս «Մուսաֆաթի» այսպէս կոչուած СОВЕТЬ-ական գործնէութիւնն է և նրա դիրքը առհասարակ դէպի բօլշեւիկները: «Մուսաֆաթի» իսկական Ֆիզիօնօմիան կարող ենք ճանաչել միայն այդ կէտի հանգամանօրէն լուսաբանութեամբ: Ոչ միայն այդ: Մեզ համար աւելի կարգուի անդրկովկասեան մուսուլման նացիօնալիզմի գաղափարային էութիւնը, նրա քաղաքական թուիչքները, որոնց ամենատակտիւ ներներկայացուցիչները և ամենաազրիսիւ գրօշակակիրները եղել են «Մուսաֆաթի» իդէօլոգները:

Ով որ հետեւել է «Մուսաֆաթի» պրակտիկ գործիչներին և գաղափարախօսներին բռնած գիրքին ու յայտարարութիւններին՝ խորհրդի մէջ և նրա պատերից դուրս՝ մամուլի էջերում, նըրա համար առաջին հայեացքից անլուծելի առեղծուած է մնում այդ կուսակցութեան մշակած քաղաքական գիծը: Դուք ձեզ իրաւացիօրէն հարց էք տալիս. ինչո՞ւ արդեօք կազմով ու ձգտումներով փաստօրէն բէկ-աղալրական և բուրժուական մի կուսակցութիւն այդքան յաճախ պաշտպանում էր բօլշեւիկական որոշումները

(բեզօլիւցիաները) և սիրաշահումներ էր անում բօլշեւիկներին: Ի՞նչ կապ ու շահագրգռութիւն կարող էր ունենալ հիմնապէս հակայնդափոխական «Մուսաֆաթը» ուլտրա-յեղափոխական բօլշեւիզմի գործեւկերպի մէջ:

Նախ քան այդ հարցերի պատճառական բացատրութիւն տալը, հարկ է մեզ դէթ մի քանի փաստական նմուշներով համոզել ընթերցողին ասածնեբիս ճշմարտութեան մէջ:

Չէք կարող ցոյց տալ մի կարևոր հարց, որի նկատմամբ «Մուսաֆաթը» հակառակ եղած լինէր բօլշեւիկական տեսակէտին և պաշտպանած լինէր միւս ֆրակցիաներին: Բայց մենք ցոյց կը տանք մի շարք հիմնական հարցեր, որոնց նկատմամբ «Մուսաֆատի» ֆրակցիան պաշտպանել է միշտ բօլշեւիկներին և պայքարել միւս ֆրակցիաների (մենշեւիկներին, էս-էրներին և դաշնակցականներին) դէմ:

Յիշեցէք «Մուսաֆաթի» դիրքը դէպի «Հասարակական ապահովութեան յեղափոխական կօմիտէն» («Революц. ком. общ. безопасности»), երբ նա նոյնմբ. սկզբներին հրաժարուում է այդ կօմիտէին մասնակցելուց (կօմիտէն բաղկացած էր մենշեւիկներից, սօց.յեղափոխակ. և դաշնակցականներից),

համարելով նրա «գործելակերպը ֆլասակար դեմոկրատիայի հաշտութեան և համերաշխութեան համար»:

Յիշեցէք «Մուսաֆաթի» ընդօրինցիան յօգուտ բօլշևիկներին. «Բազուի դեմօկրատիայի շարքերում ծագած կօնֆլիկտի վերացումը բօլշևիկների ճնշման գնով համարուում է չափազանց ֆլասակար մի ակտ ընդհանուր դեմօկրատական նպատակների համար: Ճանաչել աննպատակայարմար տակտիկա դեմօկրատիայի մի մասի կողմից, որ ձգտում է կղզիացնել բօլշևիկներին» *):

Յիշեցէք նոյեմբերի 12-ի (1917 թ.) Բան. և Զին. ընդլայնուած խորհրդի (Расширенный Советъ) նիստում ընդունուած ընդօրինցիան **) (269 ձայնով ընդդէմ 105-ի) բօլշևիկների նախաձեռնութեամբ, որով կազմարուծուած է յայտարարուում «Հասարակ. ապահ. յեղ. կօմիտէն»: Ահա այդ բօլշևիկական ընդօրինցիային ևս մուսաֆաթիստները ջերմ մասնակցութիւն են ունենում:

Յիշեցէք յունուարի 21-ի (1918 թ.) Բ. և Զ. խորհրդի նիստում բօլշևիկ-

*) Տես բօլշևիկների Բազուի կազմակերպութեան պաշտօնական օրգան „Вакинский рабочий“, № 82, 14 նոյեմ. 1917 թ.:

**) Նախ տեղը:

ներին և ձախ էս-էր-ներին առաջարկած ընդօրինցիան, *) որով հաւանութիւն է արւում ժող. կօմիտարների խորհրդի քաղաքականութեան Հիմնադիր ժողովը ցրելու նկատմամբ: Այդ ընդօրինցիային ևս «Մուսաֆաթի» մարդիկը տալիս են իրանց զրական քուէները: Իսկ մենշևիկներին, աջ. էս-էրներին և դաշնակցականների բողոք արտայայտող ընդօրինցիան յօգուտ Հիմնադիր ժողովի — տապալուում է:

Յիշեցէք մարտի 1-ի Բ. և Զ. խորհրդի նիստում դարձեալ բօլշևիկներին և ձախ էս-էր-ներին առաջարկած ընդօրինցիան **) յօգուտ Բրեստ-Լիտովսկի հաշտութեան պայմանագրի և Լեւոնին-Տրոցկու կառավարութեան վարած քաղաքականութեան: Այդ ընդօրինցիային ևս, այո մանաւանդ այդ ընդօրինցիային, ամենաշերմ ցանկութեամբ տալիս են մուսաֆաթիստները իրանց ձայնը: Բեդօրինցիան անցնում է 115 ձայնով, ընդդէմ մենշևիկներին, աջ. էս-էր-ներին և դաշնակցականներին:

Այսպիսի «յիշեցէք»-ներ մենք շատ կարող էինք թուել՝ ցոյց տալու հա-

*) «Вак. Раб.» № 18, յունուարի 24-ին, 1918 թ.

**) «Вак. Раб.» № 39, մարտի 3-ին, 1918 թ.

համարելով նրա «գործելակերպը ֆեասակար դեմոկրատիայի հաշտութեան և համերաշխութեան համար»:

Յիշեցէք «Մուսաֆաթի» բեզօլիւցիան յօգուտ բօլշևիկների. «Բագուի դեմօկրատիայի շարքերում ծագած կօնֆլիկտի վերացումը բօլշևիկների ճնշման գնով համարուում է չափազանց ֆեասակար մի ակտ ընդհանուր դեմօկրատական նպատակների համար: Ծանաչել աննպատակայարմար տակտիկա դեմօկրատիայի մի մասի կողմից, որ ձգտում է կղզիացնել բօլշևիկներին» *):

Յիշեցէք նոյեմբերի 12-ի (1917 թ.) Բան. և Զին. ընդլայնուած խորհրդի (Расширенный Советъ) նիստում ընդունուած բեզօլիւցիան **) (269 ձայնով ընդդէմ 105-ի) բօլշևիկների նախաձեռնութեամբ, որով կազմալուծուած է յայտարարուում «Հասարակ. ապահ. յեղ. կօմիտէն»: Ահա այդ բօլշևիկական բեզօլիւցիային ևս մուսաֆաթիստները ջերմ մասնակցութիւն են ունենում:

Յիշեցէք յունուարի 21-ի (1918 թ.) Բ. և Զ. խորհրդի նիստում բօլշևիկ-

*) Տես բօլշևիկների Բագուի կազմակերպութեան պաշտօնական օրգան „Баккинский рабочий“, № 82, 14 նոյեմ. 1917 թ.:

**) Նոյն տեղը:

ների և ձախ էս-էր-ների առաջարկած բեզօլիւցիան, *) որով հաւանութիւն է տրուում ժող. կօմիսարների խորհրդի քաղաքականութեան Հիմնադիր ժողովը ցրելու նկատմամբ: Այդ բեզօլիւցիային ևս «Մուսաֆաթի» մարդիկը տալիս են իրանց զրական քուէները: Իսկ մենշևիկների, աջ. էս-էրների և դաշնակցականների բողոք արտայայտող բեզօլիւցիան յօգուտ Հիմնադիր ժողովի — տապալուում է:

Յիշեցէք մարտի 1-ի Բ. և Զ. խորհրդի նիստում դարձեալ բօլշևիկների և ձախ էս-էր-ների առաջարկած բեզօլիւցիան **) յօգուտ Բրեստ-Լիտովսկի հաշտութեան պայմանագրի և Լեւին-Տրոցկու կառավարութեան վարած քաղաքականութեան: Այդ բեզօլիւցիային ևս, այո մանաւանդ այդ բեզօլիւցիային, ամենաջերմ ցանկութեամբ տալիս են մուսաֆաթիստները իրանց ձայնը: Բեզօլիւցիան անցնում է 115 ձայնով, ընդդէմ մենշևիկների, աջ. էս-էր-ների և դաշնակցականների:

Այսպիսի «յիշեցէք»-ներ մենք շատ կարող էինք թուել՝ ցոյց տալու հա-

*) «Бак. Раб.» № 18, յունուարի 24-ին, 1918 թ.

**) «Бак. Раб.» № 39, մարտի 3-ին, 1918 թ.

մար «Մուսաֆաթի» ֆրակցիայի այն առաջին հայեացքից անհասկանալի վարքի գեծը, որ ունեցել է նա իր սովետական գործնէութեան ընթացքում: Բայց բերած նմուշներն էլ բաւական են, որպէսզի ամեն մի զիտակից ընթերցողի, նոյն իսկ բօլշևիկ ընթերցողի մէջ ինքնաբերաբար յղանայ միևնոյն անիծուած հարցը. ինչ ընդհանուր կապ կարող է ունենալ բէկ-աղալարական նացիօնալիզմը բօլշևիկների հասկացած պրօլետարական ինտերնացիօնալիզմի հետ: Ինչո՞ւ «Մուսաֆաթը», իբրև հակայիդափոխական կազմակերպութիւն, չի միացել չափաւոր մենշևիզմի և աջակ. էս-էր-ների (որոնք նոյնպէս «հակայիդափոխականներ» են ըստ բօլշևիկների հասկացողութեան) հետ ճնշելու և խեղտելու համար «ծայր աստիճան» յեղափոխական բօլշևիզմը, որ այն ժամանակ դեռ թոյլ էր և գործում էր տակաւին օպօզիցիայի մէջ: Ինչո՞ւ, ընդհակառակը, «Մուսաֆաթը» ամեն կերպ աջակցել է բօլշևիզմին և, ինչպէս կտեսնենք, բազմիցս արտայայտել է իր համակրանքը դէպի նա: Ո՞ւր որոնել փաստի գաղտնիքը:

Մրանք հարցիր են, որոնց համար միզնից բաւարարութիւն ստանալու

կատարեալ իրաւունք ունի ընթերցողը:

«Բօլշևիկների գործելակերպի յաջողութիւնից սպասում էին մուսուլման նացիօնալիստները իրանց յոյսերի և իղձերի իրականացումը, ասել է իրանց սեփական գործելակերպի յաջողութիւնը»:

Այս խօսքերով փակեցինք մենք գրուածքիս V գլուխ (եր. 93):

Մուսաֆաթի՝ որպէս մուսուլմ. նացիօնալիզմի ազրեսիւ թևի՝ համար, միանգամայն ընդունելի և ողջոյնի արժանի էր բօլշևիկների տակտիկը ազգային հարցում, քանի նրանք օպօզիցիայի մէջ էին:

Ինչպէս յայտնի է, բօլշևիկները պահանջում էին, որ հողային հարցի նման ազգային հարցը ևս լուծուէր նախ քան Հիմնադիր ժողովը և, համաձայն ինքնորոշման սկզբունքի, արուէր ամեն մի ժողովրդի կատարեալ իրաւունք՝ իր ազատ կամքով ինքնորոշուելու: Այդ հողի վրայ բօլշևիկները կատարի պայքար էին մղում ժամ. կառավ. դէմ և ամեն կերպ խրախուսում էին մանր ժողովուրդների բուրբոքում նացիօնալիզմը: Այդ «ապստամբ» ժողովրդներից ամենից մեծը և պատկառելին կազմում էին ուկրայնացիք, որոնք զեկավար ու գրօշակակիր հան-

դիսացան բոլոր ենթակայ ժողովուրդների ապակենդրոն եւ ֆեդերալիստական ձգտումների *): Ուկրայնի Բաղայի անհաշտ պայքարը և Ֆինլանդական սեպարատիզմը ամենաջերմ կերպով պաշտպանութիւն էին գտնում բօլշեիկների կողմից: Այն ժամանակ Բաղայի բուրժուականութեան մասին խօսք չկար, որովհետև բօլշեիկներին զբաղեցնում էր միայն մի հարց. ուժեղացնել բոլոր կենտրոնախոյս օպօզիցիօն ոյժերի հակօրինական ապստամբ ձգտումները ատելի ժամ. Կառավարութեան դէմ, սրա անկումը աբազացնելու համար:

*) Բոլոր ժողովրդների ապակենտրոն կամ ֆեդերալիստ հոսանքների առաջին ընդհանուր համագումարը հրաւիրել է Ուկրայնը Կիևում (սեպտեմբ. 1917 թ.), ուր մասնակցող 94 պատգամաւորներից 15-ը եղել են մուսուլմաններ Կովկասից և Ղրիմից: Այդտեղ որոշում է, որ բոլոր ենթակայ ժողովրդների ինքնորոշման հարցը կախուած է նրանց ամեն մէկի սղգային Հիմնադիր ժողովից, որ պիտի տեղի ունենայ նախքան համառու. ընդհ. Հիմ. ժողովի գումարումը, որը (վերջինս) «չի կարող կօմպետենա լինել ազգային հարցերի լուծման մէջ» (տես մուսաֆաթիստ Բուստամբէկովի գեկուցումը այդ համագումարի մասին մուսուլմ. «ՄՅՅ» № 244, 31 հոկտ. 1917 թ.): Նշանակում է ֆեդեր. համագումարում անցել է բօլշեիկների քարոզած տեսակէտը:

Բնական էր, որ բօլշեիկների այդ տակտիկը արժանանում էր բոլոր կենտրոնախոյս նացիօնալիստական էլեմենտների, ի թիւս դրանց և «Մուսաֆաթ» կուսակց. բուռն գովեստին ու խրախուսանքին: ՉԹ որ ենթակայ ժողովրդների նացիօնալիստների աչքում ուս յեղափոխութիւնը բարիք է և զնահատելի այն չափով, որ չափով նա կիրականացնէ ինքնորոշման սկզբբուռնքը իրանց ցանկութեան համաձայն և ոչ Հիմնադիր ժողովի որոշման համաձայն *): Իսկ ոչ մի կուսակցութիւն այնքան լայն, մինչ պետական ամբողջութիւնը անդամահատելու աստիճան չի մեկնարանում ինքնորոշման սկզբուռնքը, ինչպէս բօլշեիկները, մա-

*) Համաձայն Կիևի համառու ֆեդերալիստների համագումարի որոշման, մուսաֆաթիստների անդրկովկասեան Կօնֆերենցիան (Բաղում, նոյեմբերի 9—12-ին) որոշում է՝ «շուստափոյթ հրաւիրել անդրկովկասեան մուսուլմանների և կովկասեան միացեալ լեոնականների և կովկասեան միացեալ լեոնականների ազգային Հիմ. ժող. ազգային ինքնորոշման և յատկապէս Աղերբէյջանի հարցը լուծելու համար» («ՄՅՅ. ԿՕՄ». № 260, նոսե 244): Գարձեալ մի որոշում, որ լհուլի համապատասխանում է է բօլշեիկների յանձնարարած տեսակէտին ազգ. հարցում:

նաւանդ նրանց առաջին պարագլուխը^{*)};

Ի՞նչ է հետևում դրանից:

Ճիշտ այնպէս, ինչպէս բօլշեիկները յանձնարարելով հողային հարցի կանխօրէն լուծումը կամ САМОЗАХВАТЪ-ը մինչև Հիմ. Ժող. խրախուսում էին գիւղացիութեան գրուպայական ինդիվիդուալիզմն ու էգօիզմը, այնպէս էլ հրահրելով մանր ժողովուրդների աւտօնոմ կամ ինքնակախ ինքնորոշուելու ձգտումները (դարձեալ մինչև Հիմ. Ժող.), նրանք քաջալերում էին այդ ժողովրդների նացիօնալիստ տարրերի ազգային ինդիվիդուալիզմն ու էգօիզմը:

Ահա բօլշեիկները գործելակերպի մի կողմը, որ ըստ ամենայնի համապատասխանում էր մուսաֆաթիստների ձգտումներին՝ ազգային ինքնու-

*) Բօլշեիկների կուսակցական ընդօգոլիցիան (դեռ 1913 թ.) և յատկապէս Լեւնինի տեսակէտը ազգային հարցում դէմ է ոչ միայն պետական ընդհ. և պարտադիր լեզուին (ռուսերէնին), այլև ինքնորոշման տակ չբացառապէս հասկացում է պետութիւնից անջատման իրաւունք» («ՅԱԿ. ՔԱԾ». № 48, մարտի 2-ին, 1918 թ.): Ի՞նչպէս երես չառնէ մանր ազգերի, ի թիւս դրանց մուսուլմ. նացիօնալիզմը, երբ բօլշեիկները այդքան քաջալերում են նրանց սեպարատիզմը: (Տես դարձեալ բօլշեի. 1917 թ. մայիսի կօնֆեր. ընդօլիցիան):

րոշման հողի վրայ:

Այն չափով, որով Ժամ. Կառավարութիւնը չէր ընդառաջում մուսաֆաթիստների (կամ առհասարակ կենտրոնախոյս նացիօնալիստների) յիշեալ ձգտումներին, այդ չափով բացասական քննադատութեան արժանի էր նա մուսաֆաթիստների աչքում և զերծ չէր այն բոլոր թերութիւններից, ինչ վերաբրում էին նրան բօլշեիկները: Զարմանալի չէ, ուստի, թէ ինչպէս մուսուլման նացիօնալիստները բօլշեիկական ժարգոնով էին քննադատում Ժամ. Կառավ. և հակաբօլշեիկ սօցիալիստների գործութիւնը. թէ ինչպէս սիրով կրկնում էին նրանք բօլշեիկական տրաֆարետները կերհնսուկու անձնաւորութեան և քաղաքականութեան մասին: Ինչ հարց էք ուզում, որի նկատմամբ մուսաֆաթիստ գաղափարախօսները հաճութեամբ միացած չլինէին բօլշեիկների քննական տեսակէտին և կամ պաշտպանած չլինէին նրանց:

Յուլիսեան պատերազմական կատաստրօֆի առիթով²⁾ (Տարնօպօլ և այլն) բօլշեիկները դէմ ուղղուած մեղադրանքներից աշխատում է նրանց արդարացնել մուսուլման նացիօնալիս-

աը 1): Կօրնիլովի աւանտիւրայի պատասխանատուութիւնն ու մեզքը ընկնում են՝ մուսաֆաթիստի կարծիքով ժամ. Կառ. և «կոյր սօցիալիստներին» վրայ, որոնք շարունակում են իրանց «հաշտ ու համաձայնեցուցիչ СОГЛАШАТЕЛЬСКАЯ) քաղաքականութիւնը խարդախ և հակայեղափոխական բուրժուազիայի հետ» 2): «Թող կորչէ Կերենսկին», այսպէս են գոռում յուզուած ու զայրացած մուսուլման նացիօնալիստներին համագումարում (յուլիսի վերջում), երբ զեկուցանող Աբդուրախմանովը յայտնում է, որ Կերենսկին ընդունել է կաղետների պայմանները՝ կառավարական նոր կազմի մէջ մըտնելու համար: 3): Կամ յիշեցէք մուսաֆաթիստ իդէօլօգների գնահատումները ժամ. Կառ. մասին նրա անկու-

1) Տես «Ивв. ком. бак. мус. общорг.» № 160, յուլիսի 20-ին, «Къ прорывамъ нашихъ фронтовъ», Բ. Շախթախտինսկու առաջնորդող յօդուածը:

2) Նոյն թերթում (№ 196, սեպտ. 2-ի) «Кровавая корниловщина и туземная дивизия», յօդուած յայտնի մուսաֆաթիստ իդէօլօգ Մ. Իբրահիմովի. կուսակցութեան եռանդուն լեկտորներից և նշանաւոր հրապարակախօսներից մէկն է Իբրահիմովը:

3) Նոյնը, № 176, 11-ին օգոստ., «Всероссийский съездъ мусульманъ въ Казани», յօդուածում:

մից յետոյ: Այդ կառավ. «անընդունակ եղաւ. փառանեղ խոստումները և բարձր սկզբունքները (ամենից առաջ ի հարկէ ինքնորոշման սկզբունքը) կհանքի վերածել». նրա քաղաքականութեան մէջ «տիրում էր միշտ միլիտովչիւնան և Միլիտովի ոգին», նա «չհրաժարուեց Դարդանելը գրաւելու ախորժակից». «կօալիցիօնիզմի համաձայնական քաղաքականութիւնը ցնեղաւոր շրջանների հետ պահպանուեց մինչև վերջին օրերը». «Միջազգային գաղտնի պայմանագրեր հրատարակելու պահանջը՝ յեղափ. դեմօկրատիայի (կարգա՝ բօլշևիկներին) կողմից չիրականացուեց» 1): Իսկ Կերենսկին՝ ժամ. Կառ. գլուխը. ոհ, նա ոչ միայն «անպատրաստ և անընդունակ» էր պետական լուրջ գործերի համար, ոչ միայն «Ֆանֆարոն ու ֆանտազիօր էր» 2), այլև «աննօրմալ մի մարդ», «կաղետների. կապիտալիստների առաջ լակէյական ըէժիմունցիոյ կառավարութեան գլուխ» 3):

Եթէ ընթերցողին անյայտ լինէին

1) Նոյնը, № 244, հեկտեմբ. 31-ին, «Грозные дни», դարձեալ Մ. Իբրահիմովի առաջնորդող յօդ.:

2) Նոյնը, № 251, նոյեմբ. 16-ին, խմբագրական յօդ.:

3) Նոյնը, № 275, դեկտեմբ. 16-ին, յօդ. Իբրահիմովի:

այս խօսքերի տեղը և այդօրինակ դատելակերպի հեղինակը, նա կրկարծէր, որ նրանք վերցրած են բօլշևիկական «Правда»-ից և հեղինակը ամենաբարձր պրօբի բօլշևիկ է, այնքան հարազատ բօլշևիկական է լեզուի ժարդօնը և դատողութեան շարունը: Մուսաֆաթիստները այնքան հեռուն են գնացել իրանց «բօլշևիկասէր» կասկածելի յայտարարութիւններով և «բօլշևիկանման» տարօրինակ դատողութեամբ, որ հարկ են գտել «Баку» թերթի դէմ մղած պօլեմիկայի մէջ յայտնել ի միամտութիւն, որ իրանք «բօլշևիկումի իդէօլօգներ չեն»¹⁾:

Ի հարկէ դուք, մուսաֆաթիստներդ, բօլշևիկումի իդէօլօգներ չէք և չէիք էլ կարող լինել: Բայց հէնց ամբողջ տարօրինակութիւնն էլ նրանումն է, որ դուք՝ մի նահապետական իրականութեան ամենայնտաղէմ և բէակցիօնէր դասի (բէկութեան, խան-աղալարութեան) իդէօլօգներդ, սիրով ու փայփայանքով ընդօրինակում և կրքի-

¹⁾ Նոյնը, № 255, նոյնմբ. 2ր-ին, խմբագրական: Մուսուլման նացիօնալիստները հաճաքով են դիմաւորել հակամբերեան ապստամբութեան գէպքին: Կադետական «Баку»-ն մեղադրել է նրանց տենդենցիօզ վեհաբերմունքի մէջ. մուսուլման նացիօնալիստները արդարանալ էին աշխատում այդ մեղադրանքի առաջ:

նում էք այն բոլոր դատողութիւններն ու գնահատումները, որ տալիս են նորագոյն յեղափոխական դասակարգի՝ պրօլետարիատի անունով երդող բօլշևիկները ոուս իրականութեան և պետականութեան մասին: Դուք, մուսաֆաթիստներդ, ձեր հիմնական մտածելակերպով լինելով նոյնքան աջակողմեան և հակայեղափոխական, որքան աջակողմեան և հակայեղափոխական է խոշոր կալուածատիրական բէակցիօնէր դասի ամեն մի կուսակցութիւն, յանկարծ բօլշևիկական «թունդ» ժարգոնով քննադատում և պարսաւում էք ոչ միայն ոուս բուրժուական դեմօկրատիային և լիբերալ բաղիկալիզմը, յանձին կադետիզմի և առհասարակ ոուս առաջադէմ հասարակականութեան, այլ և համարձակում էք նոյն ժարգոնով քարնետել ոուս աշխատաւոր ժողովրդի պաղափարախօսներին՝ դեմօկրատական բլօկի (մենշևիկներին և էս-էրներին) դէմ, մեղադրելով նրանց չափաւորականութիւնը, ցինզաւոր տարրերի հետ վարած կօալիցիօն քաղաքականութիւնը և այլն:

Ծաղր է, երկինք աղաղակող ծաղր, թէ ով ում դէմ է պայքարում և ում հետ է դաշնակցում...

Դուք, մուսաֆաթիստներդ, գոհու-

նակութեամբ արտատպում էք բօլշևիկական թերթերից յօդուածներ, որոնք ուղղուած են վելիկօրուսական նացիօնալիզմի դէմ, ուր պաշտպանուում է մուսուլմանական նացիօնալիզմը *), ուր դատաւիեաւում է ուսու լիբերալների ձգտումները թիւրքաճայ գաւառներին, Դարդանիլի և Կ.-Պօլսի նկատմամբ **):

Ո՞րտեղից է, վերջապէս, այդ երկու բեռներին սրտառուչ դաւանակցութիւնը, իւր որոնել «Մուսաֆաթ» կուսակցութեան «բօլշևիկասիրահար» մօտիւնների գաղտնիքը:

Բօլշևիկներին գործելակերպը գալիս է մուսուլման ազրեսիւ նացիօնալիստ-

*) Մուս. «ԱՅՎ.» բերում է (№ 139, յունիսին, 1917) «Бак. раб.» թերթից մի պօլեմիկական յօդուած (ուղղուած մենշևիկներին և էս-էր-ների ձևքով խմբադրուող «ԱՅՎ. раб. и сол. деп.» դէմ.), ուր բօլշևիկ «մարքսիստը» յայտնում է մի այսպիսի վայրենի միտք. «Յարձակուել մուսուլման նացիօնալիզմի դէմ նշանակում է յարձակուել ողջ մուսուլման ազգաբնակչութեան դէմ»:

***) Մուս. «ԱՅՎ.» (№ 255, նոյեմբ. 21) սիրով և ամբողջապէս բերում է բօլշևիկական դարձած СОВѢТЬ-ի «ԱՅՎ.»-ից մի յօդուած ուղղած կադետների դէմ և յօդուած թիւրքիայի: Այդպէս է խենթերի «ինտերնացիօնալիզմը». կուսուլ սեփական երկրի իմպերիալիստների դէմ՝ օտարների իմպերիալիզմը պաշտպանելու համար:

ների ջրաղացին առատօրէն ջուր ածելու: Բօլշևիկներին ներքին (յեղափոխական) և արտաքին (պատերազմական) քաղաքականութիւնը՝ իր բոլոր յայտնի բացասական հետևանքներով և անդրադարձումներով, կատարելապէս ձեռնտու էր մուսաֆաթիստների ներքին (հակայեղափոխական) շարժման և արտաքին (պանթիւրքիստական և պանիսլամիստական) տենդենցների տեսակէտից:

Սրանով արդէն ասուում է ամեն բան՝ գիտակից և շրջանկատ ընթերցողի համար:

Որքան բօլշևիկներին անհաշտ օպօզիցիան, անխնայ պայքարը, անդադար գրգռումները պրուպայական և ազգային ինստիտուտների, քայքայիչ և կաղձալուծիչ գործնէութիւնը ուժեղացնում և ծաւալում էր ամենուրեք տարերային անարխիան, թուլացնում էր երկրի կենտրոնի և կենտրոնաձիգ ոյժերի համագործակցութիւնը, ձգում էր պետական իշխանութեան հեղինակութիւնն ու ազդեցութիւնը ծայրերում, այնքան, բնականօրէն, թափ էին ստանում նոյն ծայրերի կենտրոնատուտարրերի սեպարատս սեղեկները, այնքան սպառնական չափերի էին հասնում ենթակայ ժողովրդների ազրեսիւ

նացիօնալիստների հակապետական ձգտումները:

Բնական է, որ բօլշևիկների այդօրինակ մի գործելակերպ ներքին յեղափոփական քաղաքականութեան սահմանում, միանգամայն ձեռնտու և ողջունելի պիտի լինէր մուսուլման ագրեսիւ նացիօնալիստների կողմից: Սրանք չլինելով բօլշևիկներ, լինելով ֆօլաքկուած հակայեղափոխականներ և ոուս պետութեան դիմակաւորուած սըրտացաւներ, պիտի ամեն կերպ գործնականապէս աջակցէին և գաղափարապէս համակրէին բօլշևիկների ամեն մի քայլըն ու որոշումը, ինչպէս և իրաւայդպէս էլ անում էին. մենք տեսանք այդ մեր բերած փաստական տուեալներէից:

Միւս կողմից, որքան բօլշևիկները գըրում ու խօսում էին պատերազմի և մեր դաշնակիցների դէմ, որքան նրանք թիկունքում և ճակատում անսպառ եռանդով ագիտացիա էին մղում զինւորների շարքերում՝ չենթարկուել իշխանութեան, չգնալ ճակատ, չկոուել թշնամու դէմ, այլ եղբայրանալ նրա հետ, պահանջել իսկոյն վերջ տալու պատերազմին. որքան նրանք խաղտում էին դիսցիպլինան, ձգում ռազմական ռզին, թուլացնում կուելու ընդունակութիւնը, կարճ՝ խորտակում

զօրքը՝ կազմալուծելով, լքելով և ամբողջացնելով նրա շարքերը*), այնքան ընկնում էր Խուսիայի պատերազմական դիմադրութեան ոյժը և միջագային քաղաքական նշանակութեան աստիճանը, այնքան աւելանում էին արտաքին թշնամու փայլուն նուաճումների շանսերը և Ռուսիայի կատաստրօֆիկ պարտութիւնների տխուր նշանները:

Դարձեալ բնական է, որ բօլշևիկների այդ գործելակերպը ևս արտաքին (պատերազմական) քաղաքականութեան սահմանում պիտի ըստ ամենայնի խրախուսանքի արժանանար

*) Սպանիչ խօստովանութիւններ է անում այդ հարցի նկատմամբ բօլշևիկների հոգեհարազատ գաղափարակիցը՝ ձախ էս-էր-ների պարագլուխ Սպիլեիդօսովան կուսակց. 2-րդ համազումարում (ապրիլի 17-ին), իր զեկուցման մէջ խօսելով հաշտութեան մասին, ասում է նոյնի միջի այլոց հետեւալը. «Պէտք է յետադարձ հայեացք ձգել մերձաւոր անցեալի պատմութեան վրայ, երբ մենք ձախ էս-էր-ներս բօլշևիկների հետ միասին արեւ կնք վճռականապէս ամեն բան, որպէս զի արմատիւ անենք զօրքի միջից ռազմական ռզին, քայքայենք զօրքը, սնուցանենք նրա մէջ ատուութիւն դէպի կազմակերպուած պատերազմը ուս-գերմանական ձախտում»: (Տես Բազուի ուս-գերմանական ձախտում): «Наше знамя» № 26, մայիսի 23-ին, 1918 թ.):

մուսուլման պանիսլամիստների և պան-թիւրքիստների կողմից: Թէ «Ռուսիայի մուսուլմանական կազմակերպութեան» ղեկավարներ Թոփչիբաշեֆլեների և թէ ֆեդերալիստական «Մուսաֆաթի» լիդերներ Բասուլ - Չադէների փայփայած յոյսերն էին մօտենում իրականացման այն չափով, որ չափով խորանում էր այլասեռման և կազմալուծման պրօցեսը ուս զօրքերի շարքերում: Չէ որ նրանց օրինադրական բացայայտօրէն տաճկական էր դեռ պատերազմի սկզբից: Յեղափոխութեան օրով, սկզբնական ամիսներին, նրանք միայն «փափկանկատօրէն» յետաձգել էին առժամանակ այդ օրինատացիայի դիժը մինչև յարմար մօմենտը: Իսկ երբ այդ մօմենտի գալուստը այնքան արագացնում էր բօլշևիկական գործելակերպով, ապա Թոփչիբաշեֆլեներն ու Բասուլ-Չադէները կատարեալ իրաւունք ունէին իրանց «ИЗВѢСТІЯ»-ի մէջ մի կողմից ջերմ ողջունելու բօլշևիկական ամեն մի պահանջը (հրատարակել գաղտնի դօկումենտները, իսկոյն և եթ հաշտութիւն կնքել, ասել է խզել կապերը դաշնակիցներից), իսկ միւս կողմից բուռն պայքար մըդել ոչ միայն կաղետների դէմ, այլև նրանց հետ համաձայնական քաղաքա-

կանութիւն վարող կերենսկու և դեմօկրատական քօկի դէմ:

Ի՞նչ է հետևում այդ բոլորից:

Այն, որ քանի բօլշևիկական գործելակերպը մասսայական յաջողութիւն էր գտնում ներքին ու արտաքին քաղաքականութեան սահմաններում, այնքան հետզհետէ ուժեղանում էին առհասարակ հակայեղափոխական հոսանքը և հակապետական ապստամբ ձգտումները յատկապէս այն ծայրերում և այն ժողովրդական տարրերի մէջ, ուր ագրեսիւ նացիօնալիզմը մշակել էր արդէն իր նպատակների յատուկ ծրագիրը:

Այդ երևոյթը առանձնապէս աչքի էր ընկնում Ուկրայնում և Անդրկովկասեան մուսուլմանութեան մէջ:

Իսկ դա ուրիշ ոչինչ չի նշանակում, բայց եթէ այն, որ բօլշևիկների ներքին ու արտաքին քայքայիչ ու կազմալուծիչ քաղաքականութիւնը հող է պատրաստել և հետևապէս պատճառ դարձել հակայեղափոխական շարժման դարգացման առաւել այն երկրամասերում և այն հասարակական միջավայրերում, ուր կան արդէն հակայեղափոխական բնական գործօններ (խոշոր կալուածատիրական ֆէօդալական դաս):

Հոկտեմբերեան ապստամբութիւնը, իր մերկ էութեամբ, այլ բան չէր, բայց եթէ բօլշևիկներիներքին-քայքայիչ և արտաքին-կազմալուծիչ քաղաքականութեան անթերի յաղթանակը: Դա գրուպպայական ինդիվիդուալիզմի և էգօիզմի յաղթանակ էր մի կողմից ներքին պետականութեան (պետական ամբողջութեան) շահերի և դասակարգային կօլլեկտիւի դէմ, միւս կողմից արտաքին անկախութեան (ազգային—անուեսական ազատագրութեան) ձգտումների դէմ՝ արտաքին թշնամութիւնների անկախութեան նուաճումներից և շահագործութիւնից:

Իբրև այդպիսին, հոկտեմբերեան ապստամբութիւնը դարձաւ առաջին լուրջ էտապը հակայեղափոխական տենդենցների և ակնկալութիւնների ապագայ յաղթանակի ծայրերում:

Դա սուսական յեղափոխութեան զարգացման տխուր դիալեկտիկական էր: Միակտ, որ դեմօկրատիայի մի թևի (բօլշևիկների) կարծիքով կոչուած էր յեղափոխութիւնը աւելի «խորացնելու» և «լայնացնելու», նրա «երկրորդ էտապը» դառնալու, այդ նոյն ակտը փաստօրէն դարձաւ հակայեղափոխական շարժման զարգացման չարագուշակ նախադուռը, վերջին հաշուով՝ նա զար-

ձաւ յեղափոխութեան անուղղակի գերեզմանափորը:

Հասկանալի է, ուստի, թէ ինչու երդուեալ հակա-յեղափոխականները և մանաւանդ հակապետականները—ամենից առաջ մոստուլման ազրեսիւ նացիօնալիստները կամ մոսաֆաթիստները—այնպիսի ուրախ թափօր էին կատարում ժամ. կառ. գերեզմանի վրայ և բուռը ողջոյնով շնորհաւորում նոր տէրերի գալուստը: Զէ՞ որ այդ տէրերի հոգևոր պապը և քաղաքական դիրիժօրը—Վլադիմիր Ուլեանով-Լենինը—իր առաջին պարտականութիւններից մէկը համարեց առանձին դեկրետով դիմելու «Ռուսիայի և Արևելքի ողջ մոստուլմանութեան» *), որ նա պաթետիկ սողերով յայտնում է Ռուսիայի (ինչպէս և կովկասի) մոստուլմաններին ազատօրէն ինքնորոշուելու իրաւունքը, իսկ արևելքի մոստուլմանութեան հրահրում է դէպի քաղաքական ապստամբութիւն: Զէ՞ որ ի ուրախու-

*) Տես Լենինի դեկրետը «Бак Раб», թերթում, № 95, նոյեմբերի 30-ին: Այդ դեկրետը կազմում է Լենինի հրատարակած բուռը դեկրետների մէջ տմենից անիմաստը և անտակտը: Դա աւելորդ ապացոյցներից մէկն է այն բանի, թէ օրբան Լենինը հետու է պետական գործիչի խելից ու հոտաաութիւնից:

թիւն պանթիւրքիստների յայտարարում է Լինինը, որ Կ.-Պօլսի նուաճման վերաբերող ցարական գաղտնի պայմանագիրը իսպառ ոչնչացրուած է: Կարճ՝ բօլշևիկների առաջին լիդերի դեկրետը մի հաճելի յայտնութիւն էր առհասարակ բոլոր պանիսլամիստների համար, որոնք այնուհետև սկսեցին աւելի համարձակ գործել, աւելի յուսադրուած դիմաւորել իրանց սպասող ապագային: Ի դուր չէ, որ «Մուսաֆաթի» իդէօլոգները ողջունեցին այդ դեկրետը, անուանելով այն «ըստ էութեան և բովանդակութեան արտաքոյ կարգի հետաքրքրական կոչ, անսովոր մի դօկումենտ», որ առիթ է տալիս մուսուլմաններին «բօլշևիզմի և բօլշևիկների մասին կազմելու բոլորովին տարբեր, պարզ գիտակցուած, ինքնուրոյն և սեփական հասկացողութիւն և պատկերացում» *):

Կօմենտարի կարիք չունեն բեկական իդէօլոգների այդ ակնարկները, այնքան պարզ են նրանք:

Այսպէս ուրեմն, բօլշևիկների գործելակերպից և քարոզչութիւնից բղխած մի շարք օրինակաւ և սուբիէկտիւ հանգամանքներ նպաստաւոր հող պա-

*) «Изв. ком. бак. мусуль. общ. орг.» № 273.

տրաստեցին հակայեղափոխութեան սերմերը անեցնելու և շարժումը ուժեղացնելու համար:

Սակայն բօլշևիկ կառավարութեան բացարձակօրէն քաջալերած քաղաքացիական պատերազմը երկրի գրեթէ բոլոր մասերում և բօլշևիկ իշխանութեան օրինականութիւնը չընդունող մի շարք ծայրերի տեղական-անջատ իշխանութիւններ առաջանալու քաօսային վիճակը, այնպիսի ծանր հարուածներ պատճառեցին ռուս պետականութեան ամբողջութեան, այնքան խորացրին հասարակական լքումը, դեմօրալիզացիան և հոգեկան բէակցիան, որ հակայեղափոխութեան ոյժերը պատարաստ էին գտնում հրապարակ իջնելու և ազատ գործելու հողը:

Այն չափով, որով բօլշևիկ իշխանութիւնը քաղաքացիական արշաւանքներով խաղաղութիւնը ծայրերիկրներէ և առանձին ժողովրդների ինքնորոշման սկզբունքը, այդ չափով ոչ միայն նորանոր թշնամիներ պիտի վաստակէրնա, այլև հակառակ իր կամքի պիտի աւելի ու աւելի ուժեղացնէր այնտեղ հակայեղափոխական շարժումը:

Այդ կէտում ևս ռուս յեղափոխութիւնը անցաւ դիալեկտիկական տխուր «խաղերի» բովով:

Քանի բօլշեիկները օպօզիցիայի մէջ էին, նրանց բարեկամ էին և Ֆինլանդիան և՛ Ուկրայնը և՛ Անդրկովկասի «Մուսաֆաթը», որովհետև բօլշեիկները աւելի, քան մի այլ կուսակցութիւն բարձր հնչեցնում և պայքարոտ տոնով շեշտում էին ժողովրդների անբռնադատ անկախութեան պահանջը և ազատ ինքնորոշման սկզբունքը ընդէմ Վելիկօրուսիայի, որպէս պետականօրէն իշխող տարրի:

Ընդհակառակը, երբ իշխանութեան գլուխ անցան բօլշեիկները հետզհետէ փոխեցին իրանց դիրքը այդ հարցի (ինչպէս և ուրիշ շատ հարցերի) նկատմամբ և դիմեցին տրամադժօրէն հակառակ տակտիկայի: Վելիկօրուսիայի գերիշխանութեան և նացիօնալիզմի դէմ առաջ կատարի մարտնչողները, սկսեցին այժմ Վելիկօրուսիայի նոր իշխանութեան և վելիկօրուսական բօլշեիկզմի անունով սպառնալ ծայրերին (Ֆինլանդիա, Ուկրայն, Դոնի շրջան) և դէնքի միջոցով (քաղաքաց. պատերազմներով) բռնանալ նրանց դէմ, խառնուել նրանց ներքին գործերին:

Մենք ասացինք, որ ծայրերկրների և ենթակայ ժողովրդների ազգային-քաղաքական ձգտումների տեսակէտից

առասական յեղափոխութեան տուած ամենամեծ ըարիքը կազմում է ժողովրդների ինքնորոշման սկզբունքը: Թշնամի է և անընդունելի է նրանց համար այն քաղաքական հոսանքը՝ եղաւ նա աջից թէ՛ ձախից միևնոյն է, որը սպառնում է խախտել այդ ինքնորոշման սկզբունքը: Ուստի զարմանալի չէ, որ մի շարք ծայրերի նացիօնալիստական դրուպպանների կողմից առաջ դրվեստի արժանացած բօլշեիկզմը, յետոյ արժանացաւ յարձակումների և թշնամական տրամադրութիւնների նոյն դրուպպաններից, երբ բօլշեիկզմը այդ վերաւոր հարցում փոխեց իր տակտիկը: Զարմանալի չէ՝ ասում էնք, երբ մուսուլման նացիօնալիստները, որոնց «բօլշեիկասիրահար» արտայայտութիւններից այնքան շատ նմուշներ բերանք մենք, փոխում են իրանց ֆրօնտն ու տոնը ամենից առաջ՝ ի դէմս այն անցքերի, որոնք տեղի են ունենում անցեալ տարուայ զեկտեմբեր ամսին Տուրկեստանում՝ ընդդէմ տեղական մուսուլմանութեան:

Նոյն «ИЗВѢСТІЯ» ի էջերում մուսուլման իդէօլօգները թունաւոր բողոքի և բացատրական ըննադատութեան ձայն են բարձրացնում: Մի՛ ժամանակ դովուած բօլշեիկզմը դառնում է այժմ

նրանց աչքում Чиновичий больше-
визмъ», «Туркестанский Социаль-Шо-
винизмъ» *) : «Մոսկ. դեմ. մաքսիմուս
ծրագրի քողի տակ բերում են նրանք
(բոլշևիկները) Տուրկեստան ցարական
և նապոլեոնական ընթիմները պրիոմ-
ները» : Կամ՝ «Տաշկենտի բոլշևիկներ-
ը—ցարական ընթիմի ամենավատ
ժամանակների ուս չինովնիկներ են» :

Զարմանալի չէ, կրկնում ենք, որ
մուսաֆաթիստ Ս. Իբրահիմովը—ա-
ռաջ բոլշևիկների ամենամեծ ապօրգե-
տը—թունաւոր դառնութեամբ գան-
գատում է նրանց մասին. «բոլշևիկ-
ները—գրում է նա՝ ի միջի այլոց—
այսօր բաց են թողնում դեկրետ ժո-
ղովրդների կատարեալ ազատութեան
մասին, մինչև «պետութիւնից անջա-
տուելու սատիճան», իսկ միւս օրը ի-
րանց սուրհմների (ШТЪКИ) բոլոր ոյժով
պատերազմում են ծայրերում տեղա-
կան ազգաբնակչութեան դեմօկրատիկ
մեծամասնութեան ազատ կամքի ան-
գամ ամենափոքր արտայայտութեան
դէմ» : «Եթէ ժողովրդական կօմիսար-
ների կոչերը—շարունակում է «Մու-
սաֆաթի»՝ իդէօլօգը—դատարկ հնչիւն
չեն, այլ ունին լուրջ հիմք ու նշանա-

*) Տես մուսուլմ. «Извѣстія»-ն №№ 269 և
270 առաջնորդող յօդուածները :

կութիւն. եթէ մուսուլմաններին է թող-
նում իրանց վիճակը և ինքնորոշման
ազատութիւնը, ապա նրանց (ժողովր-
կօմիսարներին) մի բան է մնում մի-
այն՝ ազատել մուսուլմաններին իրան-
ցից» : *)

Պարզ է, որ բոլշևիկները զէնք են
տուել ագրեսիւ նացիօնալիստների
ձեռքը ոչ միայն իրանց դէմ ուղղելու,
այլև մասսաների մէջ շահագործելու
համար ընդդէմ իրանց իշխանութեան :

Եւ «Մուսաֆաթի» կուսակցութիւնը,
որի գործնական դիրքը եղել է միշտ
երկդիմի և արուեստական, իսկ յայտ-
նած սիմպատիաները եղել են սոսկ
դիպլոմատիական կեղծիքներ, այժմ
անցնում է իր իսկական միտիային,
իր բուն գործին, ընթանում է իր յա-
տուկ ուղիով :

«Մուսաֆաթի» ձգտումները պարզ
էին ներքին և արտաքին քաղաքակա-
նութեան սահմաններում :

«Մուսաֆաթի» կուսակցութիւնը
պաշտպանելով համայն մուսլիմի ֆե-
զերատիւ կազմի գաղափարը, ձգտում
էր կովկասեան մուսուլմանութեան
ազգային-քաղաքական վիճակը որոշած
տեսանել Ադերբեյջանի աւտօնօմիայի
իրականացումով : Հոկտեմբերեան ապ-

*) Նոյնը, № 275, դեկտեմբ. 16-ին :

ստամբուլիւնից յետոյ, երբ անդամահատուեց ռուս պետականութեան ամբողջութիւնը և ծայրերկրներ ու ժողովուրդներ, «ինքնորոշուեցին» անկախօրէն՝ ընդդէմ կենտրոնական նոր (բօլշեիկական) իշխանութեան կամքի, մեր ծայրերի մուսուլմանական կազմակերպութիւնները ևս դիմեցին այդ ուղղութեամբ նախապատրաստական քայլերի: Անդրկովկասն ու Հիւս. Կովկասը, իբրև տերրիտորիական միաւորներ, արդէն «ինքնորոշուել» էին իրանց անկախ իշխանութիւններով: Այդ տեսակէտից շօշափելի վտանգ չըկար հեռաւոր հիւսիսից, որովհետև տեղական հիմնական ժողովուրդները միօրինակ շահագրգռութեամբ են որոշել Անդրկովկասի վիճակը (Կօմիսարիատ և Սէյմ) և հակադրել այն կենտրոնական իշխանութեան:

Սակայն այն, ինչ հնարաւոր է եղել անել տերրիտորիական միատորների համար, այնքան դիւրին չէր նոյնը 'ի կատար ածել ազգային միատորների համար: Զատ-գատ ժողովուրդների ազգային ինքնորոշման հարցում ոչ միայն բացակայում էին ընդհանուր շահագրգռութեան մի շարք լուրջ հիմքեր, այլև յարուցում էին միմեանց դէմ մի շարք լուրջ խոչընդոտներ:

Ազգային ինքնորոշման առաջին ըսպառնական զրօշակը հոկտեմբերեան աստամբուլիւնից յետոյ պարզեց մուսուլմանական ազրեսիւ նացիօնալիզմը մեր ծայրերկրում: Անդրկովկասի մուսուլմանական բոլոր ազգային կօմիտէների ընդհանուր կօնֆերենցիան (Բագում, նոյեմբերին) որոշում է և կենտրոնական կօմիտէին պարտաւարեցնում, որ «շուտափոյթ (Въ срочномъ порядкѣ) հրաւիրուի անդրկովկասեան թիւրքերի և Կովկասի միացեալ լեռնականների ազգային Հիմնագիր ժողով, որը միայնակ լիազօր (աւտօնօմ) օրգանն է ազգի՝ սրա քաջաքական վիճակի ձեռն որոշելու համար» *):

'ի հարկէ, հայերն ու վրացիները ևս ունեցել են և ունին իրանց ազ-

*) Մուսուլմ. «Извѣстія», № 260, նոյեմբ. 28-ին, 1917 թ.

Ռնորոշ է այն հանգամանքը, որ անդրկովկասեան մուսուլմանութեան ազգային կազմակերպութիւնները թափում էին բոլոր ջանքերը Դադստանի և Հիւս. Կովկասի բոլոր մանմեղականները քաղաքական վիճակը և վիճակի որոշման ձեռն շողկապել սերտ յարաբերութեամբ Ադերբեյջանի հետ: Երկու մասերի մուսուլմանութեան վիճակի որոշողը պիտի լինէր միեւնոյն լիազօր օրգանը՝ մուսուլմանների ազգային Հիմն. ժողովը: Կովկասեան լեռ-

գային խորհուրդներն ու կօմիտէները նրանք ևս հրաւիրել են ազգային ժողովներ և խորհուրդակցութիւններ: Սակայն այն սանկցիան, որ մուսուլմանները վերապահում էին ազգային Հիմնադիր ժողովին և այն սպասելիքները, որ կապում էին նրանք ազգային «լիազօր օրգանի» հետ, չեն տածել և արծարծել քաղաքական տիրող հոսանքներն ու կուսակցութիւնները հարեան ժողովուրդների (հայերի և վրացիների) կեանքում: Սրանք իրանց ազգային-քաղաքական վիճակի ձեռք վերջնական որոշումը սպասում էին համառուսական Հիմն. ժողովից, ասել է համապետական լիազօր օրգանից, վերագոյն ինստանցիայից: Ուրիշ խօսքով հայերն ու վրացիները, — որոնց ազգային քաղաքականութեան տոն և ուղղութիւն էին տալիս դաշնակցականներն ու մենշեվիկները, — կանգնած էին պետականութեան տեսակէտի

նականների յարաբերութիւնները անդրկովկասեան թրքութեան հետ ջանի գնում այնքան աւելի էին սերտանում: Կեանականների միութիւնը ունէր իր քաղաքական բիւրօն Բաղում մուսուլմ. ազգային կօմիտէին կից: Հակայեղափոխական շարժումը և պանթիքթական սպասելիքները ստեղծել էին կովկասի երկու մասերի մուսուլմանների համար գործակերպի միեւնոյն ֆրօնտը:

վրայ և ազգային ինքնորոշման սկզբունքի կամ ազգային հարցի որոշումն ու լուծումը վերջին հաշուով սպասում էին Հիմնադիր ժողովից, համաձայն համառուս դեմօկրատական բլօկի (քաղկացած յեղ. դեմօկրատիայի բոլոր թւերից, բացի բօլշեվիկներից և ձախէս-էր-ներից) մշակած քաղաքական պրատֆօրմի: Ընդհակառակը, մուսուլմանները, — որոնց ազգային քաղաքականութիւնը վարում էին մուսաֆաթիստները, — կանգնած էին նակապետականութեան կենտրոնախոյս տեսակէտի վրայ և իրանց ազգային ինքնորոշման հարցի վերջնական լուծումը սպասում էին ազգային Հիմնադիր ժողովից՝ որպէս միակ լիազօր օրգանից, մինչև Ընդհ. Հիմնադիր ժողովը և անկախ նրանից, համաձայն բօլշեվիկների յանձնարարած քաղաքական բեցեպտների (քանի նրանք օպօզիցիայի մէջ էին):

Սրանով արդէն շրջադժուում և ընդգծում են սկզբունքային այն ահագին տարբերութիւնները, որ ունեցել են մեր ծայրերկրի երեք հիմնական ժողովուրդները իրանց ազգային-քաղաքական «իդէալը» իրականացնելու (ազգայնօրէն ինքնորոշուելու) մեթօդների շուրջը: Հայերն ու վրացիները

ձգտում էին այդ «իդէալի» իրականացման օրինականութեան և պետականութեան ճանապարհով համառոտական բարձրագոյն ներկայացուցչութեան կամքի որոշումով, իսկ մուրումանները ձգտում էին նոյն նպատակին՝ հակաօրինականութեան և հակապետականութեան ուղիով՝ ազգային-սեպարատ օրգանի լիազօր կամքի որոշումով:

Իսկ ազգային սեպարատ ձգտումները պահանջում էին սեպարատ ուղիներ և սեպարատ ակնկալութիւններ:

IX.

Ներքին խոչնդոտներ եւ արտաքին ակնկալութիւններ:

Յարաբերութիւնների աննպաստ դասաւորութիւնը անկարելի դարձրեց մուսուլման-ազգային Հիմնադիր ժողովի գումարումը: Վերջինս—իր այն առանձնայատուկ լիազօրութեամբ, ինչպիսին վերապահում էին նրան ազրեսիւ և կենտրոնախոյս նացիօնալիստները (ամենից առաջ մուսաֆաթիստները)—կլինէր մի անուղղակի մարտահրաւէր Անդրկովկասի այն ծայրերկրային Բարձր Իշխանութեան (Կօմիսարիատ և Սէյմ) հասցէին, որին

մասնակցում էին անդրկովկասեան քոլոր ժողովուրդները անխտիր և ուր ինքը մուսուլմանութիւնը ունէր պատկառելի ներկայացուցչութիւն: Ուրիշ խօսքով դա կլինէր ոչ միայն հակապետական (հակաուսական) մի ակտ, այլև հակաժայրերկրային (հակասեյմական) մի հարուած:

Այդպիսի մի հարուածի համար մուսուլմանութեան ղեկավար շրջանները չունէին հարկաւոր սյժն ու պատրաստութիւնը:

Սակայն, բացի դրանից, կային ուրիշ ներքին լուրջ խոչնդոտներ ևս, որոնց չէին կարող հաշուի չառնել մուսուլման նացիօնալիստները:

Այդ խոչնդոտներից մէկն այն է, որ այսպէս կոչուած Սովետական կամ Թորհրդային Իշխանութիւնը հետզհետէ ուժեղանում և կառավարական ղեկավար ֆունկցիաներով օժտուում էր հէնց այն վայրում, ուր մուսուլմանութիւնը ամենից հարազատօրէն իր տանն է զգում:

Այդ վայրը Բազուն է իր շրջակայքով:

Բազուն՝ մուսուլմանութեան ազգային կուլտուրական արժէքների, բարեկեցութեան և հարստութեան կենտրոնը. Բազուն՝ մուսուլմանութեան քա-

դաքական ձգտումները, հասարակական վերածնություն շարժման, նացիոնալիստական իդէօլոգիայի, վերջապէս, պանթիւրքիստ «Մուսաֆաթի» ծրննդավայրը և «Ազերբէյջանի մայրաքաղաքը» (Թոփչիբաշեի),— յանկարծ այդ հագումն սեղմուել է այնպիսի բազուկների մէջ, որոնցից դուրս ճանկելու համար Թոփչիբաշեիները և Բասուլ-Չաղէները կուսակցութիւնները անպատրաստ էին տակաւին:

Իայց կար մի այլ լուրջ խոչնդոտ ևս՝ Իսայապէս անուանուած «հայկական խոչնդոտն» էր: Եւ այդ խոչնդոտը կրկնակի իմաստ ունէր մուսուլման նացիոնալիստների աչքում: Խոչնդոտ՝ տերրիտորիական էտնիական և պետական օրիննտացիայի իմաստով:

Մուսուլման նացիոնալիստները շատ լաւ գիտէին, որ նրանք անկարող պիտի լինէին անկախ կամ աւատօժ Ազերբէյջան ստեղծելու, նախ քան այդ վերջին խոչնդոտը հաշուեյարդարելու: Մուսուլման «Մուսաֆաթին» քաջ յայտնի էր, որ առանց հայ «Իաշնակցութեան» հետ հաշուի նստելու, անկարող պիտի լինի իր քաղաքական իդէալը իրականացնել:

«Հայկական խոչնդոտի» առաջին

մասը (տերրիտ.-էտնիակ.) տանելի էր և դիւրին յարգելի: Իսայապէս անուանեցին Սեդրիովկասի՝ հայ-թրքական գաւառների նոր սահմանափոխումների հարցն էր, ստեղծելու համար հայ և մուսուլման ազգաբնակչութեան համար այնպիսի տերրիտորիական միաւորներ, որոնք ըստ կարելոյն միատարր և միապաղաղ լինէին էտնիապէս: Ազմինիստրատիւ նոր սահմանափոխումներով ազգային տերրիտորիաներ ստեղծելու միտքը յղացել և նախագիծը մշակուել էր հայերի կողմից՝ զխաւորապէս Իաշնակցութեան նախաձեռնութեամբ, այնպէս որ մնում էր, որ մուսուլմանութեան ղեկավար շրջանները, — որոնք իրանց հերթին մշակել էին հակառակագիծ, — փոխադարձ կօմպրոմիսներով որոշ համերաշխութեան գային հայերի հետ: Եւ այդ համերաշխութիւնը տեղի կունենար, առանց երկուստէք մեծ դժուարութիւնների հանդիպելու:

Աւելի դժուար էր «հայկական խոչնդոտի» երկրորդ մասը՝ պետական օրիննտացիայի հարցը:

Ռուս պետականութեան գաղափարը միս ու արիւն էր դարձել ռուսահայ ժողովրդի մէջ: Տեղական ժողովրդներից և ոչ մէկը (նոյն իսկ ոչ

վրացիները այն չափով) հայերի չափ շահազրգուսած չէ ոուս պետականութեան ուժեղ Ներկայացուցչութեամբ և նրա նեղուկների ամուր տիրապետութեամբ մեր ծայրերկրում: Մի շարք պատմական, աշխարհագրական և քաղաքական ճնշող պայմանների արդիւնք է այդ «ուսասիրական» խորարմատ տրագիցիան. հայ ժողովրդի հոգեբանութեան մէջ: Եւ իբրև այդպիսին հայերը պատրաստ են եղել միշտ իրանցից կախուած ըսողը հնարաւոր միջոցներին դիմելու՝ ուս պետութեան ուժեղ բազուկի ներկայութիւնը պահելու և ապահովելու համար մեր ծայրերկրում: Ինչ սիւտեմ և ըէժիմ էլ ունենար ոուս պետական իշխանութիւնը—դա երկրորդական հարց է՝ բարեփոխումների պրօբլեմ է—միևնոյն է այն անողորմ դիւլեմայի առաջ, որ կոչուած է լինի թէ չլինի ոուս իշխանութիւնը մեր ծայրերկրում:

Այդ փաստը գաղտնիք չէ հայ ժողովրդի հարևանների, մանաւանդ մուսուլմանների համար: Այդ փաստի ամենակենդանի և ցայտուն արտայայտութիւնը եղաւ պատերազմի ընթացքում՝ սկզբից ՚ի վեր: Եւ երևի չի եղել երբէք (գուցէ ըսցառութեամբ միայն 1877/78 թ. պատերազմի օրերին)

հայ և մուսուլման տարրերի օրինատացիաների այնպիսի սուր կօնտրաստ, անհաշտ հակամարտութիւն, ինչպէս արտայայտուել է արդի պատերազմի օրով՝ հայկական ոուսօֆիլ (հետևապէս նաև անգլո-ֆրանկօֆիլ) և մուսուլմանական թիւրքօֆիլ (հետևապէս նաև դերմանօֆիլ) տեսակէտների միջև:

Թուում էր, թէ ոուսական Փետրուարեան Յեղափոխութիւնը հղկել, հարթել ու իսպառ վերացրել էր այդ օրինատացիաների անհաշտ հակամարտութիւնը այն իմաստով, որ ազատ ու դեմօկրատիկ մուսիայում մեր հարևան մուսուլմանները պէտք է միանգամ ընդմիշտ թողնէին օտար պետութեան—այն ևս յետամնաց և ըէակցիօն թիւրքիայի—օրինատացիան և դառնային ոուս դեմօկրատական հասարակապետութեան անկասկած լոյալ քաղաքացիներն և ոուս պետականութեան անկեղծ պաշտպանները, ինչպէս երևում էր նրանց ոգևորութիւններից յեղափոխութեան սկզբնական ամիսներին: Փաստօրէն մուսուլմանների թիւրքական օրինատացիան ոչ թէ վերացել էր, այլ յեղափոխական ալեկոծումների ազդեցութեան տակ, ինչպէս նկատեցինք իբր տեղում, միայն սքոզուել, յետաձգուել էր: Դեռ

հոկտեմբերի 26-ին, «Մուսաֆաթի» համագումարին, կուսակցութեան կենտրոնական կոմիտէի նախագահ Մ. է. Բասուլ-Չադէն իր առաջին ճառի մէջ պարզ շեշտել է. «Թիւրքիզմի իդէան— դա ազգի իդէայի կաշտպանութիւնն է արիւնածարաւ Եւրոպայի առաջը»^{*)} Պանթիւրքական գաղափարի յաղթանակին է նուիրուած այդ կուսակցութեան ծագման ու գործնէութեան էութիւնը: «Թիւրքիզմի իդէայի» ամենամեծ ներկայացուցիչը ինքը Թիւրքիան է: Մեր հարեանները իրանց ազգային իդէայի պաշտպանութիւնը գտնում են «Թիւրքիզմի իդէայի» կամ նրա մարմնացումը կազմող Թիւրքիայի պաշտպանութեան մէջ:

Այստեղ ծագում է բնականօրէն մի հարց. արդեօք մուսուլման տիրապետող դասակարգի երկու խաւերը՝ կալուածատէր բէկութիւնը և քաղաքային բուրժուազիան, ունեն հաւասար վերաբերմունք դէպի տաճկական օրինանոցիան կամ պանթիւրքիզմը:

Առհասարակ վերցրած, սկզբունքային առումով, անշուշտ քաղաքային լիբերալ բուրժուազիան՝ իր տնտեսաարդիւնաբերական ինտերեսներով չի

*) Տես «Изв. ком. бак. мусул. общ. орг.» № 242, հոկտ. 28:

կարող նոյն կամ հաւասար շահազրգուծութիւն ունենալ դէպի մի յետամընաց ֆէօդալական պետութիւն, ինչպէս կալուածատէր պահպանողական ազնուականութիւնը կարող է ունենալ: Սակայն ցաւը նրանումն է, որ անդրկովկասեան մուսուլմանութեան մէջ առևտրական և մանաւանդ արդիւնաբերական բուրժուազիան շատ թոյլ է զարգացած. նա դեռ կազապարուած դասակարգ չէ, այլ զատակարգի սաղմային սկզբնաւորութիւնն է ներկայացնում: Մուսուլմ. բուրժուազիայի միակ կենտրոնը Բագդուն է, ուր թուրքական կապիտալը արդիւնաբերական կեանքում նուազում է՝ զարգանալու փոխարէն, տեղի տալով իր դիրքը աւելի ուժեղ մրցակիցների: Ֆինանսական կապիտալը թուրքերի մօտ անշուշտ շատ առատ է, բայց նա չի վերածւում արդիւնաբերական կապիտալի. նա չի մասնակցում նոյն խսկ բանկային օպերացիաներին հարկաւոր չափերով. նա աւելի շուտ վաշխառուական կապիտալի դեշէֆտներ է կատարում և ապա գործադրում է անշարժ սեփականութիւնների (տների) և կալուածների վրայ: 90 ական թուականները վերջերին առաջնակարգ նաւթարդիւնաբեր Թաղիսվը այժմ աւելի

շուտ կալուածատէր է, քան արդիւնաբերող:

Ի՞նչ է ցոյց տալիս այդ հանգամանքը: Այն, որ մուսուլման՝ առանց այն էլ սակաւ ու սահմանափակ (գրեթէ միայն Բագուում գոյութիւն ունեցող) բուրժուազիան չէր կարող հասունացնել լիբերալ իդէօլօգիա, որովհետեւ քաղաքական լիբերալիզմը հետեանք է միայն անտեսական լիբերալիզմի, ասել է՝ առևտրա-արդիւնաբերական ազատ մրցութեան և անկաշկանդ զարգացման ցայտուն ձգտումները: Իսկ այդ վերջին հանգամանքը, ինչպէս նկատեցինք, շատ թոյլ է մուսուլմանութեան կեանքում:

Միւս կողմից մուսուլման քաղաքային բուրժուազիան գտնուում է կալուածատէր ազնուականութեան (խանրէկ-աղալար դասի) ազդեցութեան տակ. թեով շատ աւելի գերազանց, անտեսապէս ամուր տիրապետող և աւանդական արտօնութիւններով հեղինակաւոր մի դաս, որի դասային շահերը պաշտպանող և քաղաքական իդէօլօգիան հիմնաւորող ինտելիգենցիան հէնց իրա՝ բէկական հարազատ սերունդն է, ինչպէս մենք տեսանք փաստերով: Նշանակում է, քաղաքային մուսուլման բուրժուազիան (որի մէջ,

ի դէպ է ասել, կայ զգալի տոկոս բէկական դաս(ից) չէր կարող իր քաղաքական ուրոյն, հակադիր դէմքն ունենալ: Մուսուլմ. ազգային գործերին տոն տուողը եղել է և է բէկական կօնսերվատիւ իդէօլօգիան (Թոփչիբաշեֆլիերի և Բասուլ-Չադէնիերի կուսակցութիւնների միջոցով), որը ներքին քաղաքականութեան մէջ եղել է հակապետական և հակաէդուփիսական, իսկ արտաքին քաղաքականութեան մէջ՝ պանթիւրքական (մերձաւոր սպասելիքներով) և պանիսլամիստական (հեռաւոր սպասելիքներով):

Սակայն ներքին խռչնդոտները—խորհրդի իշխանութիւնը Բագուում և հայերի՝ առասական օրինետացիայի արմակուռ կուրսը—այնքան ուժեղ էին, որ նրանց դէմ մեն մենակ բացարձակ պայքարել անկարող էր մուսուլմանական ազրեսիւ նացիօնալիզմը: Բան. և Զին. Սորհուրդը՝ որքան էլ նրա մէջ տիրապետող բոլշեվիկ Ֆրակցիայի պետականութեան ըմբռնողութիւնը թիրք և թոյլ լինի, այնուամենայնիւ նա ներկայացուցչութիւնն է առև իշխանութեան և պարզել է ծայրերկրի մի անկիւնում առև պետականութեան դրօշակը: Նշանակում է այդ չափով նա սչ միայն պիտի օգտագործէր հայ դի-

նական ոյժերը, որպէս պետական զօրամասեր, այլև տեղական հայ քաղաքական կազմակերպութիւնները պիտի նուիրէին Յորհրդի Իշխանութեան— որպէս ռուս պետականութեան ներկայացուցչութեան՝ անկախ նրա սօցիալ-քաղաքական տենդենցներէց— իրանց ողջ բարոյական աջակցութիւնը այն դէպքում, եթէ նրան վասնդ սպառնար թիւրքական օրինատացիայի գործօնների կողմից՝ թիկունքից թէ ճակատից, այդ միևնոյն է:

Այդ հանգամանքը պարզ էր միանգամայն մուսուլման նացիօնալիստներին՝ ամենից առաջ դեկավարողի դեր ստանձնած, «Մուսաֆաթի» համար: Բայց վերջինիս համար պարզ էր նաև այն, որ մուսուլմանների ազդային ինքնորոշման իւրօրինակ հասկացածու մեկնաբանած սկզբունքը այլ եղանակով անկարելի պիտի լինի իրականացնել, բայց եթէ ոյժի միջոցով, զէնքի նանսպարհով: Իսկ այդ միջոցը մուսուլմանների մօտ, մանաւանդ Անդրկովկասում, ամենաթոյլ կողմն է: Թուով, ճիշտ է, հայերից երկու անգամ աւելի են նրանք: Նրանց աղամարդ սեռը ողջ առողջ և թարմ ոյժերով պահպանուել է տանը: Բայց առանց զինավարժութեան, առանց

տեխնիքական հմտութեան և պահանջւող դիսցիպլինայի, անպէտք են այդ թէկուզ մեծաթիւ և թարմ ոյժերը՝ նորագոյն ռազմաբեմի համար: Մինչդեռ փոքրաթիւ և պատերազմից յոգնած ու լքուած հայերը ունին, այնուամենայնիւ, այդ անհրաժեշտ առանձնութիւնները:

Հասկանալի է, ռուսի, այն անսպառեռանդը, որ թափում էին մուսուլման կազմակերպութիւնները զինուորական քաղաքականութեան վրայ, որի մասին խօսեցինք մենք VII գլխում: Հասկանալի են այն հատձէպ պատրաստութիւնները, որ նուիրում ջանքերով առաջ էին տանում «Մուսաֆաթի» կամխտէները Բագում և Գանձակում: Ամիսների ընթացքում պշխատում էին նրանք ոչնչից զօրք ստեղծել՝ կազմակերպել թաթարական զնդեր, օֆիցերական դաս՝ իր հրահանգիչներով և գալոցական կանոնաւոր կուրսերով: Ի հարկէ, մուսուլմանական զօրքի աւանգարդը կազմում էր «վայրի զվիզլան» — «Մուսաֆաթ» կուսակցութեան այդ ընտրեալ «ազգային գվարդիան», որի վրայ այնքան մեծ յոյսեր էին դրել բէկ-ազալար դասի գաղափարախօսներն ու գործիչները:

Քանի ուժեղանում և զեմօնստրա-

տիւ ծաւալ էին ընդունում մուսուլման նացիօնալիստների ուղղափառ տենդային պատրաստութիւնները, այնքան նրանց ազդեսիւ քաղաքականութեան առաջ ծառայած երկու խոչընդոտների—Բ. և Չ. Խորհրդի և Դաշնակցութեան— փոխյարաբերութիւնները աւելի ու աւելի էին սերտանում: Պատրաստող քաղաքական վրտանգի հանգէպ նրանք երկուսն էլ պրոթէ հաւասարապէս շահագրգռուած էին—հարկաւ մասամբ միևնոյն, մասամբ տարբեր տեսակէտներից ելնելով—զուգորդելու, համագործակցութեան մէջ դնելու իրանց սյօները և շարունակ սպասողական դիրքի մէջ մնալու:

Հասունանում էր մի խուլ սլաշքար, որի բնօյթի և ապագայ բռնկման բացայայտիչ նշանները տեղի էին ունենում արդէն կանխօրէն՝ Բագուի բայտններից դուրս: Թիֆլիս—Բագու երկաթուղային գծի զանազան կայարաններում, թուրք բանդանների՝ միջոցով կատարուած ուսուէշելոնների զինաթափման դէպքերը ուրիշ բան չէ, բայց եթէ հակայեղափոխականի շարժման սկզբնական էտապները կամ վերոյիշեալ պայքարի նախնական կիսատարերային ակտերը *) ուղղած

*) Զինաթափման դէպքերի փաստական մա-

ներքին՝ մեզ արդէն յայտնի՝ գլխաւոր խոչնդոտներից մէկի—ուսու իշխանութեան—դէմ: Միւս կողմից, նոյն գծի վրայ (ինչպէս և հիւսիսից դէպի Բագու՝ Դաղստանի շրջանում), հայկական տարրի հաղորդակցութեան կատարեալ ընդհատումը՝ բացարձակ կողոպուտի և սպանութիւնների նետանքով, դարձեալ, իր հերթին, նախապատրաստական հարեածներ էին ուղղուած միւս գլխաւոր խոչնդոտի՝ հայութեան դէմ:

Հակառակ մուսուլմանական կազմակերպութիւնների բոլոր հաւաստիացումներին, որ իբր այդ գործողութիւնները աւազակային շայկաների տարերային բռնկումներ են, փաստ է՝ բոլոր նշանների հաստատումով ապացուցուած անհերքելի փաստ, որ այդ գոր-

նրամասների վրայ աւելորդ ենք համարում կանգ առնել, դա յայտնի է ընթերցողներին լրագրական հաղորդագրութիւններից: Այդ դէպքերը տխուր խոհերի առիթ են տալիս Առաջ թուրք բանդանները երբէք չէին համարձակուում ուսու անգամ անդէն զինուորին մօտենալ: Զինաթափման յաջող դէպքերը ցոյց են տալիս ոչ միայն այդ բանդանների արդէն չափազանց երես առած յանդգնութիւնը, այլև ուսու զինուորական մասսաների ուղղափառ ոգու աներևակայելի անկման և բարոյական լքման ու այլասեռման ախտի պատկերը:

ժողովրդինները մուսուլմանական կենտրոններից նախագծուած, կազմակերպուած և խրախուսուած ակտեր են եղել: Նախագծել է Բազուն («Մուսաֆաթի» մայր կենտրոնը), խրախուսել և աջակցել է Թիֆլիսը (սէյմական և կառավարական մուսաֆաթիստները) *) և կազմակերպել ու կատար է ածել Գանձակը («Մուսաֆաթի» մարտական աւանպոստը):

Այդ ակտերը ունէին իրանց նախամտածած իմաստը, իրանց առաջադրուած, խորապէս գիտակցուած նպատակը:

Էջերոնների զինաթափումով մուսուլման կազմակերպութիւնները ձեռք

*) Պարսպ զրոյցներ են և տեղեկացիւց ընդհանրացումներ, երբ բոլշեւիկները շանում են ամեն կերպ պատասխանատուութիւնը փաթաթել առհասարակ Թիֆլիսի, ասել է՝ ամբողջ Սէյմի վրայ: Եթէ Սէյմի մեղքը կայանում է նրանում, որ նա հանդուրժել է շարունակ մուսաֆաթիստներին իր հարկի տակ, ապա այդ տեսակէտից աւելի մեծ մեղք ծանրանում է Բազունի Սովետ-ի վրայ, որ սկզբից մինչև վերջը, մինչև մարտի 17-ը, համբերել մուսաֆաթիստներին իր շարքերում, իսկ բոլշեւիկները, ինչպէս մենք կտեսնենք, յանցաւոր անտարբերութեամբ են նայել նրանց պատրաստութիւնները վրայ:

էին բերում այն անհրաժեշտ ուղիւժիւրքը, որի հրամայական կարիքն էին զգում թաթարական նոր կազմակերպւող գնդերը: Ուրիշ ինչ աղբիւրից կարող էին նրանք օրինական ճանապարհով ստանալ կամ գնել հրազէնների և ուղմական դանաղան պարագաների պահանջող պաշարը, եթէ նրանք խուսափէին բռնի զինաթափման և մասսայական զոհերի գնով բացարձակ կողոպտման գործողութիւնից:

Իսկ մի անհրաժեշտ ակտ էր ներքին արագ և հետեօդալից պատրաստութիւնների համար: Բայց այդ ակտով կրկնակի ոճիր էին գործում հակայիզափոխականները: Նրանք զինաթափելով պետական գօրքին, ասել է՝ կողոպտելով սուս իշխանութեան գոյքն ու սեփականութիւնը, պատրաստուած էին կախ յայտարարելու նոյն իշխանութեան տեղական օրգանների դէմ:

Միւս կողմից, նրանք ընդհատելով երկաթուղային գծի նորմալ հաղորդակցութիւնը և յատկապէս արգելելով հայկական տարրի և հայկական գնդերի տեղափոխութիւնը՝ դէպի հովհանսեան ճակատը, մուսուլման կազմակերպութիւնները կրկնակի ծառայութիւն էին մատուցանում իրանց ընդհանուր գործին. մի կողմից պայքա-

ըելով ներքին խոչնդոտների դէմ, միւս կողմից օգնում էին՝ թէկուզ կրաւորապէս, այն արտաքին ոյժերին, որոնց հետ, վերջին հաշւով, կապել էին այդ կաղմակերպութիւնները իրանց յաջողութիւն ժպտացող ակնկալութիւնները:

Այն օրուանից սկսած, երբ հարիւր հազարների հասնող ոռւս զօրքը Հուսից թողնց Կովկասը, մաքրելով թիւրքական և պարսկական հողերը. այն օրուանից սկսած, երբ ոռւս զօրքը ոչ միայն իսպառ մերկացրեց Կովկասեան ձակատը իր ներկայութիւնից, այլև անխնամ ձգելով, կործանելով, ոչնչացնելով և կամ իր հետ տանելով միլիարդների արժէք ունեցող սաղմամթերքը, փաստօրէն զրկեց Անդրկովկասը ինքնապաշտպանուելու օրինակաւ երաշխիքներից արտաքին թշնամու առաջ. այն օրուանից սկսած, երբ աշնան ամիսներին զիտամաք հարիւրաւոր վերստեր յետ քաշուած տաճկական զօրքերը նորից յայտնուեցին հորիզոնից և ձեռնարկեցին իրանց ձմեռուայ արշաւանքը մերկացած սաղմաճակատի ողջ տարածութեան վրայ՝ Վեհիպ փաշայի բերնով անելով յայտնիցինիկ յայտարարութիւնը՝ որ նրանք պիտի առաջ խաղան այնքան և մինչ

այն կէտը, ուր կհանդիպեն ոռւս զօրքի, — ահա այդ օրուանից սկսած մուսուլման հակայեղափոխականների սիրտըն ու հոգին պաշարեց տօնական մի աւետարեր տրամազրութիւն: Նրանք փառաւորապէս զիտէին, որ ներքին խոչնդոտների — Սէյմի սօցիալիստ-դեմօկրատական մեծամասնութեան, Բապուի Բ. և Զ. Խորհրդի և հայերի ոռւսօֆիլ կուրսի — յամառութիւնը բնկանելու, հակայեղափոխական նարուածի առաջ պարտուած խոնարհեցնելու և իւրօրինակօրէն ինքնորոշելու համար անհրաժեշտ է իրանց արտաքին ակընկալութիւնների կատարեալ արդարացումը, այսինքն, թիւրքական զէնքի յաղթական արշաւը և թիւրք-գերմանական բլօկի ակտիւ քաղաքականութիւնը Անդրկովկասի խորքում:

Քանի գնում, այնքան աւելանում և ուժեղանում էին այդ հեռանկարի իրականացման շանսերը: «Ոռւսաֆաթը» փայլալուծ էր իր մերձաւոր սպասելիքների շուտափոյթ գալստեան ու կատար ամման ժամը:

Բայց բաղդը շտապեց ու աւելի շուտ վիճակ ձգեց, քան հասել էր հարկաւոր ժամը: «Եվելինա» նուրի միջնադէպը (մարտի 17-ին կրեկոյեան) և նրա առիթով տեղի ունեցած 3—4 օրուայ

արիւնահեղ անցքերը Բազում կատարելապէս մատնեցին «Մուսաֆաթ» կուսակցութեան գաղտնի պատրաստութիւնների ամբողջ ծրագիրը: *)

Իս հակայեղափոխական շարժման իսկական բռնկումն էր, առաջին պաշտօնական ակտը, կազմակերպուած ապստամբութիւնը տեղական իշխանութեան դէմ, որ անհրաժեշտորէն պիտի տեղի ունենար Բազում՝ բէկաղալարական կուսակցութեան հակայեղափոխական մտորումների և ազգային-իշխանատենչ հակումների կենտրոնում:

Այդ ապստամբական փորձը պէտք է անխուսափելիորէն վիժէր և «Մուսաֆաթի» քաղաքական գործնէութեան կեանքում տխուր ու վերափոխիչ նշանակութիւն ստանար, որովհետև վաղաժամ առիթը աւելի վաղ նետեց նրան կուսի գաշտը, քան պայմանները հասունացել էին համագործակցող խոչնդոտների դէմ բացարձակ հրապարակ

*) «Бюллетень»-ի առաջին համարը (մարտի 22-ին, 1918 թ.), որ բաց է թողել Բազուի զինուոր - յեղափոխական պաշտպանութեան կոմիտէն, շեշտում է «Մուսաֆաթի» այն ակտի մտանկցութիւնը և դեկավար դերը. որ ունեցել է նա ապստամբութեան գործում, կանգնած «վոյրի դիվիզիայի» գլխին:

իջնելու համար, — քան, որ գլխաւորն է, արտաքին ակնկալութիւնները հասել էին իրանց իրականացման յաջողութիւն խոստացող կէտին:

Այս կապակցութեան մէջ մի անհրաժեշտ հարց է ծագում. ինչպէս գնահատեց արդեօք Խորհրդային Իշխանութեան տիրապետող Փրակցիան — բոլշեվիկների կուսակցութիւնը — կատարուած երեոյթը: Այդ հարցին լրիւ պատասխանելու համար, անհրաժեշտ է նախ գոհացում ստանալ մի այլ հարցի նկատմամբ. ինչպէս էին վերաբերում արդեօք բոլշեվիկները առհասարակ դէպի «Մուսաֆաթ» մինչև Բազուի արիւնահեղ անցքերը:

Անիրազեկ և անքննադատ ընթերցողները, որոնք ապրում են սոսկ օրուայ տպաւորութիւններով և յիշում են միայն օրուայ կարգացածը, կարծում են, որ Բազուի ապստամբութեան տխուր ասպետները — մուսաֆաթիստները — դէմ խիզախ պայքարել են միշտ և միայն բոլշեվիկները իրանց «Бакинскій Раб.» օրգանով: Այդ ընթերցողներին պիտի միանգամայն ազդեցնէ այն հանգամանքը, որ, ընդհակառակը, բոլոր յեղափոխական կուսակցութիւններից միայն բոլշեվիկներն են եղել, որոնք ամենամեծ չա-

փով խնայել և անգամ պաշտպանել են մուսուլմանական ահարկու նացիօնալիզմը և սրա ցայտուն ներկայացուցիչ «Մուսաֆաթ» կուսակցութիւնը:

Սա պարապ մեղադրանք չէ, այլ փաստերով ամրապնդուած մի անհրեքելի համոզմունք:

Քօլլեվիկները օրգանը Բազում է հիմնուել է 1917 թ. ապրիլ ամսին: Առաջին № լոյս է տեսել ապրիլի 22-ին: Աջ ու ձախ, տեղի թէ անտեղի, մեծ եռանդով և անսպառ կրքոտութեամբ քննադատել, պայքարել և մանաւանդ հայհօյել է բոլշեվ. «Բազ. Բաճ.» թերթը նացիօնալիստական, յեղափոխական և ոցիալիստական կուսակցութիւններին. 'իհարկէ ամենից անխնայօրէն, ամենաթունաւոր տոնով և ֆրակցիօնական անբուժելի ախտով—մենշեվիկներին: Աչքի փուռը—մենշեվիզմն էր. «չարիքներէ» աղբիւրը—Ահրիմանը—մենշեվիզմն էր:

Սակայն, ո՛վ զարմանք, բոլշեվիկները չափազանց խնայողաբար են վերաբերուել և լսելեայն սահել ու անցել են նացիօնալիստական «Մուսաֆաթի» գոյութեան ու գործնէութեան վրայից. այսինքն այն բէկ-ազալբաղական և բուրժուական կուսակցութեան, որին վերապահուած էր ամենավտան-

գաւոր դերը Ադերբէյջանի մայրաքաղաք Բազում:

Մինչև № 86 (նոյեմբ. 18, 1917 թ.) այսինքն մօտ 7 ամսուայ ընթացքում, «Բազ. Բաճ.» թերթը զրի չի առել և ոչ մի քննադատական խօսք ոչ միայն «Մուսաֆաթի» դէմ, այլև առհասարակ մուսուլմանական նացիօնալիզմի մասին: Միայն № 86 ում խօսելով («Организация новой власти на Кавказе» յօդ.) Անդրկովկ. նոր իշխանութեան մասին, յիշում է մենշեվիկ, զաշնակց. կուսակց. և մուսուլմանական նացիօնալիզմի մասին, առանց «Մուսաֆաթ» անունը յիշելու: № 89-ում զարձեալ խօսելով նոյն հարցի մասին («Олуги реакции работают» յօդ.) յիշում է բոլոր կուսակցութիւնները (մենշեվ., զաշնակց. և էս-էր) առանց «Մուսաֆաթի» անունը տալու, յիշելով միայն պանիսլամիստ խօսքը (բայց չէ որ պանիսլամիստ են և՛ ոչ մուսաֆաթիստ նացիօնալիստները՝ Թոփէբաշեվ և ընկ.): № 93-ում (նոյեմբ. 28-ն) խօսելով նոյն նիւթի մասին («Закавказское Правительство» յօդ.) բոլշեվիկ օրգանը հայ և մուսուլման նացիօնալիստներին անուանում է «պօզրոմ-շէիկներ», հայ նացիօնալիստների տակ պարզ շեշտելով զաշնակցականներին,

իսկ մուսուլման նացիօնալիստները տակ „Չաքարիայի պապանձում“ պահպանելով. և ոչ մի խօսք „Մուսաֆաթի“ մասին:

Վերջապէս № 102-ում («Русск рев. и Закавказск. власть» յօդ.) յօդուածագիրը (առաջնորդող) խօսելով Անդր-իշխանութեան և ժողովրդներ ինքնորոշման մասին, յիշում է «Մուսաֆաթ» անունը: Բայց ինչպէս. „Մուսաֆաթը“ նոյնն է մուսուլման իրականութեան մէջ, ինչ „Իաշնակցութիւնը“ հայ իրականութեան մէջ, ուրիշ ոչինչ: *)

*) Անդրոյշ և աններելի է այդպիսի մի համեմատութիւն առանց հարկաւոր բացատրութեան: Իստակարգային կազմով, բաղաբաղան իդէօլոգիայով և սոցիալական ձգտումներով էապէս տարբեր են «Իաշնակցութիւնն» ու «Մուսաֆաթը», ինչպէս մենք ցոյց տուինք մի տեղ: Առնաւարակ շատ անցախանձելի է «Бах. Раб.»-ի հրապարակախօսների «մարքսիստական» մտածելակերպի նրբամտութիւնը: Մի տեղ (№ 86) Կովկասը պատկերանում է նրանց, որպէս „մանր բուրժուական երկր“: Որը իր տեղական ժողովրդներով (վրացի, հայ և մուսուլման) „ենթարկուել է մանր-բուրժուական-պաշտպանողական (оборончesk.) կուսակցութիւնների տիրապետութեան“: Միւս տեղ (№ 89, 93 և այլն) Կովկասը իր իշխանութեամբ և կուսակցութիւններով դառնում է նրանց աչքում կալուածատիրական և կապիտալիստական: Իստողութիւնների մի սուժբուր, որ աչքի է ընկնում շատ հարցերում:

«Бах. Раб.» շարունակում է յամուսնութեամբ լսել „Մուսաֆաթի“ մասին որևէ քննադատական խօսք անելու: Բոլոր կարգի օժականներով հորովում է նա իր սիրած թեման՝ Անդր-կովկասի իշխանութիւնը՝ իր ներկայացրած կուսակցութիւններով— մենչեվիկներ, դաշնակցականներ և էս-էր-ներ. իսկ մուսուլմանների համար զործ է ածում նա ընդհանուր և անորոշ արտայայտութիւններ՝ պանխալմիստներ, բէկեր, խաներ, ազալարներ: Ո՞ր կուսակցութիւնն է ներկայացնում այդ բէակցիօն դասին՝ իշխանութեան կազմի մէջ, և պաշտպանում նրա շահերը, չկայ դրա մասին և ոչ մի խօսք (տես № 2, 8 և 9, յունւարին 1918 թ.):

Միայն № 19-ում, յունուարի 25 ին, 1918 թ.—ասել է իր գոյութեան 10-րդ ամսում—բօլշեվիկական օրդանը հարկ է դրում արտայայտել իր առաջնորդում «Մուսաֆաթի» մասին: Արդէն լսել անկարելի էր. երես առած և բոլշեվիկներից հովանաւորուած «Մուսաֆաթի» լիզերները (Բասուլ-Չաղէ և ընկ.) ըստարձակ հարց էին դրել Խորհրդի Գործադիր Կոմիտէի (Исполнит. Ком.) նիստում, որ մուսուլման ազգային զօրագնդերը անհրաժեշտ են Կովկասում ստեղծուած անարբիխան

ճնշելու և կարգը վերականգնելու համար: Նշանակում է՝ մուսուլման ազգային խորհուրդը՝ որի իդէօլոգները հանդիսանում էին իրանք մուսաֆաթիստները, պէտք է իշխանութեան ֆունկցիաներով օժտուած հանդէս գար զինւորական քաղաքականութեան ամենապատասխանատու հարցերում: Դա ազգային ինքնորոշման իրաւունքի իւրօրինակ ըմբռնողութիւնից բղխեցրած մի պահանջ էր պարոնայք մուսաֆաթիստների կողմից: Եւ զինւորական քաղաքականութեան այդ բացայայտ տենդենցը և իշխանատենչ ձգտումները՝ ընդհանրապէս մուսուլման նացիօնալիստների կողմից, ամիսներ շարունակ արտայայտուում և մղւում էին ամենայն ակներևութեամբ, ինչպէս մենք տեսանք մանրամասն փաստերով:

Բայց բոլշեվիկների օրգանը նոր միայն, յունուարի վերջերին, այն էլ առիթի հարկադրութեամբ, «բեխարար» ձևացած և անվստահ տոնով գրում է. «Ինքը «Մուսաֆաթը» յիզափոխութեան տակ, ըստ կրեոյթին (sic!) հասկանում է միայն ազգային ինքնորոշում, և այն էլ խեղաթիւրուած կողանակով», (№ 19): Նոր միայն «Бак. Раб.» գիււա է անում, որ «Մուսաֆա-

թը» մուսուլման կալուածատէրի և բուրժուադիայի, Թաղիկների և Նադիկների ներկայացուցչութիւնն է կազմում: Բայց նոյն իսկ այդ հասարակ միտքը նա խզւածուած է ուղղակի և համարձակ արտայայտելուց, ուրբ-մուրր ճանապարհների է դիմում՝ մուսուլման ազգային խորհրդին է վերագրում վերջին բնորոշումը և ոչ ուղղակի «Մուսաֆաթին»:

Միայն № 23-ում (30-ին յունուարի, 1918 թ.), առաջնորդուում, բոլշեվիկ թերթը վերջապէս բարեհաճում է իրերն ու երևոյթները իրանց անունով կնքել. «Մուսաֆաթը»—գա հակաժողովրդական, հակայեղափոխական ոյժերից է բաղկացած»: Եւ որպէս զի իսկական «ինտերնացիօնալիստի» «օրիկալու» տեսակէտ պահպանած լինի, կամ գուցէ «Մուսաֆաթին» միակողմանի վերաբերմունքով չնկղացնելու համար, «Бак. Раб.» ճիշտ նոյն յատկութիւններ միաժամանակ վերադրում է և՛ Դաշնակցութեան, Բասուլ-Չաղէի հետ միասին յիշում է նաև Դաշնակցութեան անունը:

Այս բոլորից յետոյ բնականօրէն հարց է ծագում, ի՞նչ փաստական հիմքերով և բարոյական իրաւունքով բոլշեվիկները մեղադրում են Թիֆլիսի

մենշեկիկներին, որ սրանք համբերող ու հանդուրժող քաղաքականութիւն են վարել մուսաֆաթիստների հետ, երբ իրանք երկար ամիսներ շարունակ ոչ միայն համբերել են բէկերի իդէօլոգներին, այլև քաջալերել, հաճոյախօսութիւններ են արել նրանց (դըրանց նմուշները ևս կաեսնենք): Ի՞նչ իրատուքով բօլշեկիկներին օրգանք գըրում է. «И только теперь г.г. Гегечкори „поняли“, что мусаватисты не союзники, а предатели»: („Бак. Раб.“ № 56, մարտի 12 հ. տ.):

Ե՞րբ, ճրտեղ և ի՞նչ ձևով սեր սպիտակի վրայ ցոյց տուիք, յարգելի պարոններ, որ դուք աւելի վաղ էք հասկացել մուսաֆաթիստներին, որ ձեր աչքում նրանք աւելի վաղուց են յայտնի, որպէս «предатели»: Ձէ՞ որ դուք արդէն չափազանց ուշացաք ձեր պայքարով «Մուսաֆաթի» դէմ. շատ աւելի ուշ հրապարակ իջաք այդ ողջ էութեամբ հակայեղափոխական ոյժերի որջի դէմ կոուելու, քան որևէ այլ յեղափոխական և սօցիալիստական կուսակցութիւն Բազում: Եւ ի՞նչ արժէք ունին ձեր ուշացած մտրակումները (№ 61-ում, մարտի 18-ին հ. տ.): «Եվելինա» նաւի միջնադէպի յաջօրդ օրը): Կամ ճրքան ճշմարտութիւն կայ

ձեր խօսքերի մէջ, երբ արինահեղ անցքերից յետոյ միայն (№ 62-ում, մարտի 29-ին հ. տ.) դուք զանգատուելով և «խօշորագոյն սխալ» համարելով, որ «Մուսաֆաթը» ընդունում է Բազուի Բ. և Զ. Սորերդի կազմի մէջ, աւելացնում էք, որ «այդ սխալի վրայ դուք մասնացուցել էք իր ժամանակին»: Ե՞րբ, ճրտեղ, չգտանք ձեր թերթերի էջերում:

Մակայն դա դեռ մեղքի մի մասն է: Բօլշեկիկներին օրգանք ոչ միայն խընայել և լռել է մուսուլման ազրեսիւ նացիօնալիզմի և սրա ցայտուն ներկայացուցիչ «Մուսաֆաթի» գոյութեան ու գործնկութեան անոյ, այսինքն ոչ միայն մեղք է գործել պատսիւ եղանակով, այլև պաշտպանել և շոյել է այդ նացիօնալիզմն ու «Մուսաֆաթին», այսինքն գործել է յեղափոխական օրգանի համար աններելի մի յանցանք ակտիւ եղանակով:

Շատ փաստերի վրայ մասնացոյց չենք անում. բաւական է ընթերցողին թերթել հետևեալ №№ 8, 13, 43, 113 և այլն (1917 թ.) և № 2 (1918 թ.): Ինչ խայթոցներ և անմիտ յարէակումներ կուզէք, որ չի ուզում «Бак. Раб.» ժամ. կառ. վարած «նացիօնալիստակ.» քաղաքականութեան, վելի-

կօրուսական և կաղետական նացիօնալիզմի դէմ: Միւս կողմից, ինչ անհեթեթ մտքեր, տենդենցիօզ կարծիքներ կուզէք, որոնցով պաշտպանութեան չի պահում նա մուսուլման նացիօնալիզմը: «Պայքարել մուսուլման նացիօնալիզմի դէմ, նշանակում է պայքարել առճասարակ մուսուլման օղզարնակութեան դէմ»: Կամ՝ «մուսուլմանները, մանաւանդ Բագում, իրանց ամենագաժան թշնամիները համարում են Միլիվոյիներին, որովհետև սրանք նրպատակ են դրել ոչնչացնել մուսուլմանութիւնը» (?):

Ոչ միայն վայրենի են և զոհերի նրման դատողութիւնները, այլ և անպատուարներ գիտաւորութեամբ արտայայտուած խօսքեր են գրանք:

Յիշեցէք այնուհետև, թէ ինչպէս անցեալ տարուայ յունիսին «Եակ. Բաճ.» առանձին եռանդով քանակօրէ էր մղում այն ժամանակ մենշեվիկները և էս-էրները ձեռքով խմբազրոյց խորհրդի «ИЗВЕСТІЯ»-ի դէմ և պաշտպանում մուսուլ. նացիօնալիզմը: Բօլշեվիկների օրգանին դուր չէր գալիս, որ մենշեվիկներն ու էս-էրները «անզազար և յատկապէս յարձակում էին մուսուլմանական նացիօնալիզմի վրայ»՝ ի նկատի ունենալով նրանց հա-

մագումարի հակապետական որոշումները կամ մերկացնելով ողջ մուսուլմանութեան անունով պարզած ազգային դրօշակի տակ թագնուած բէակցիօն գասի յիտադէմ նացիօնալիզմը: «Եակ. Բաճ.» գանգատում է մենշեվիկական և էս-էրական «ИЗВ.»-ի դէմ, համարելով նրա վերարեբուծքը «միակողմանի, անբնորոշելի և անթոյլատրի»:

Թող այժմ բնթիբցօղը գատէ, թէ ով է քննադատել մուսաֆաթական նացիօնալիզմը զեւ շատ ամիսներ առաջ և ով է նրան պաշտպանել:

Սակայն բօլշեվիկական օրգանը օջնքան էր կուրացել Ֆրակցիօնական ակտով, որ նրա աչքում «գաշնակցականները և մուսաֆաթիստների Ֆրակցիաները շատ աւելի ձախակողման են, քան մենշեվիկները: Այդ բացատրում է յիշեալ երկու Ֆրակցիաների քանկորական (ընդգծումս թերթինն է) կազմով, մինչդեռ մենշեվիկների Ֆրակցիան գտնուած է բուրժուական ինտելիգենտների գրուպայի ձեռքում:» («Եակ. Բաճ.» № 2, 1918 թ.)*)

*) Միևնոյն համարում և միևնոյն սիւնակում, վերևում «Մուսաֆաթի» ներկայացուցիչներին՝ Անդրկովկասի իշխանութեան կազմի մէջ, անուանում է թերթը պա՛խլամիստներ, իսկ ներքեւում նոյն կուսակցութեան յատկա-

Յունուարի 3-ն (№ 2) ,,Իաշնակց.“ ու
 ,,Մուսաֆ.“, իրանց յեղափոխակա-
 նութեամբ և բանւորական կազմով
 բոլշեվիկ օրդանի աչքում աւելի ձա-
 խակողմեան նկատուած այդ ֆրակցի-
 աները յանկարծ յունուարի 30-ին (№
 23-ում) դառնում են հակաժողովրդա-
 կան և հակայեղափոխական ոյժերը:

Ո՞րն է, վերջապէս, ,,Бак. Раб.“-ի
 հարադատ տեսակէտը:—Ոչ մէկը:

Ե՞րբ է, վերջապէս, ,,Бак. Раб.“
 ճիշտ դատում:—Ոչ մի անգամ:

Նրա ,,ճշտախոսութիւնը“ կախուած
 է մօմենտի ֆրակցիօնական շահապըր-
 դութիւնից: Հէնց դրանով պիտի բա-
 ցատրել նրա «Ձաքարիայի պապան-
 ձուժը» և երբեմն պաշտպանողական
 դիրքը քէկ-աղայարական «Մուսաֆա-
 թի» հանդէպ այն ամբողջ ժամանա-
 կաշրջանում, երբ բոլշեվիկ ֆրակցիան
 դեռ ճնշուած օպօզիցիայի մէջ էր և
 նրան պէտք էին մուսաֆաթիստների
 քուէները՝ խորհրդի մեծամասնութեան
 դէմ պայքարելու մօմենտներին: Բոլ-
 շեվիկներին լուսթիւնը և անգամ հօմ-
 պլիսմենտները մուսուլման ազբեսի-

ցում է նա ձախակողմեան և այլ առաքինու-
 թիւններ, կրկնում ենք, սուբուր դատողու-
 թիւնների նման օրինակ գոեհիւսթիւններ
 բազմաթիւ են այդ թերթի մէջ:

նացիօնալիստների (կարգա մուսաֆա-
 թիստների) նկատմամբ, բարոյական
 պարամուրհակի մի փոխհատուցումն
 էր այն բազում ծառայութիւնների
 համար, որ մատուցել է ,,Մուսաֆա-
 թը“ բոլշեվիկներին, ինչպէս մենք
 թուեցինք մանրամասն նախորդ զը-
 խում:

Յետոյ արդէն, երբ մի կողմից բոլ-
 շեվիկները համնում են տիրապետու-
 թեան և այլևս կարիք չեն զգում մի
 փոքրիկ ֆրակցիայի քուէների աջակ-
 ցութեան, իսկ միւս կողմից հետզհետէ
 մերկանում է ,,Մուսաֆաթի“ երկդիմի
 քաղաքականութեան աստուղը, այն
 ժամանակ արդէն կօնֆլիկտը անխու-
 սափելի է դառնում:

Առաջ մէկը միւսի (բոլշեվիկներն ու
 մուսաֆաթիստները) ներկայութիւնը
 տանում էր՝ մէկը միւսին օգտագոր-
 ծելու գնով, իբրև օպօզիցիօն ոյժեր,
 թէև ներքուստ մէկը միւսին հակակը-
 բում և ատում էր:

Յետոյ արդէն մէկը միւսի մէջ զըն-
 նում էր իր վտանգաւոր ախոյեանին,
 էր բնական խոչնդոտին՝ իրանց իշխա-
 նատենչ ձգտումներին հասնելու հա-
 մար: Բոլշեվիկները հաշուի էին առ-
 նում մուսուլմանական վտանգը՝ Խոր-
 հրդի իշխանութեան սանդուխքի ա-

տիճանները բարձրահալիս: „Մուսա-
ֆաթը“ նոյն Խորհրդի Իշխանութեան
ամրապնդման մէջ գտնոււմ էր իր սե-
պարտ ձգտումներ իրականացման ա-
ռաջ ցցուած ամենալուրջ խոչնդոտը:

Ի հարկէ, յարաբերութիւնների այս
զիալեկտիկական ընթացքով հասկա-
նալի է „Եաւ. Բաճ.“-ի, իբրև Փրակ-
ցիայի պաշտօնական օրգանի, զիրքը՝
Բայց այն, ինչ հասկանալի է, դեռ
ներելի չէ:

Ներելի չէ, սիստեմատիկօրէն լոնը
մի կուսակցութեան կազմի զեկազար-
տարբերի սօցիալական ընթացիօն ընդ-
թի հանդէպ. վերջին ծայր դատա-
պարտելի է՝ ինձայել և անգամ պաշտ-
պանութեան առնել բէկ-աղալարական
իզէօրգանների ազրեսիւ նացիօնալիզմը:
Զի որ „Մուսաֆաթը“ բանօրական
քաղաքականութեամբ զբաղոււմ էր
ոչ այն պատճառով, որովհետև ինքը
զեմօկրատական էր և յեղափոխական,
այլ նա իր ըանտրտորս քաղաքակա-
նութեամբ աւելի շուտ և փաստօրէն
քօղաբկոււմ էր լայն հրապարակի ա-
ռաջ իր հակազեմօկրատական և հա-
կայեղափոխական էութիւնը և մասսա-
ներից տրուած ըուէններով ապահո-
վոււմ էր իր տիրապետութիւնը մու-
սուլման-ազգային իրականութեան մէջ:

Իսկ Բ. և Զ. Խորհրդոււմ իր լինելու և
գործելու փաստը, մանաւանդ ձախա-
կողմեան Փրակցիայից (բօլշեվիկնե-
րից) եղած խնայող վերաբերմունքը և
բարեացակամ շոյանքները զէնք էր
ծառայեցնոււմ „Մուսաֆաթը“ իր ձեռ-
քին՝ մուսուլման մասսաների մէջ իր
հմայքը, իր բարոյական կրեղիտը
բարձր պահելու համար, իսկ միւս
կողմից յաջողութեամբ մրցելու հա-
մար մուսուլման սօցիալիստական
կազմակերպութիւնների գէմ: Արիւնա-
հեղ անցքերից յետոյ միայն, բօլշե-
վիկների օրգանը ինքնասպան, բայց
արդէն ուշացած խոստովանութիւն է
անոււմ, գիտակցելով իրանց սխալ քա-
ղաքականութեան կործանարար հետե-
անքները: „Մենք ուժեղացրել ենք
մուսաֆաթիստների զիրքը՝ ՚ի վաս
հուժմեթիստների և ձախ էս-էր-ների
(մուսուլմաններից), որոնց մենք յետին
շարքն ենք մղել“—զրոււմ է „Եաւ.
Բաճ.“ *): Աւելի պարզ ինքնախարտ-
զանոււմ չէր կարելի սպասել: Բօլշե-
վիկները արջի ծառայութիւն են մա-
տուցել մուսուլման բանօրական մաս-
սաներին: Այդ է հետևոււմ նրանց խոս-
տովանութիւնից:

*) „Եաւ. Բաճ.“ № 62, 29-ի՝ մարտի 6. տ.
1918 թ.

Ճշմարիտ սօցիալիստը և անկեղծ յեղափոխականը, որ գիտէ միշտ Ֆրակցիայի շահերը ստորադրել դասակարգի շահերին, և ոչ հակառակը, այլապէս կվարուէր, քան վարուել են բօլշեւիկները: Մեր ծայրերկրի հակայեղափոխութեան շարժիչ, մեքենավար կենտրոնը Բապուն է՝ մուսուլման ազրեասիւ նացիօնալիզմի և սեպարատ ձրքտումների ծննդավայրը: Շամխորը՝ Գանձակը, Եւլախը, Մուղանը, Լենքորանն ու Պետրովսկը և Շամախին՝ իրանց անցքերով, մէկը միւսի հետ զուգորդուած էպիգօդներ են, որոնք անդի են ունեցել Բապուի հերոսների նախագծած ցուցմունքներով: Իսկ բօլշեւիկները դուրսը կատարուած մերկ փաստերի դէմ յուզելով, մինչև վերջը լուել են և խնայել իրանց նետերը նախագծող կենտրոնի կամ „Մուսաֆաթի“ մայրաքաղաքի նկատմամբ:

Ահա ինչու ներկի չէ բօլշեւիկները վարքի դիժը:

* * *

Մինչև այստեղ արած մեր փաստական և վերլուծական դիտողութիւնները պարզեցին ըստ ամենայնի՝ Բապուի անցքերի սօցիալ-քաղաքական այն բնոյթը, որի մասին խօսեցինք մենք

ներածական ակնարկներով և գլխում: Մենք տեսանք աւելի քան շօշափելի տուեալներով, որ այդ երևոյթը չի պատկանում այն շարուն հասկացողութեամբ ընդհանրացրած քաղաքացիական պատերազմների շարքին, որոնք կատարուել են Ռուսաստանի խորքերում:

Մենք այդ երևոյթը անուանեցինք ոչ թէ քաղաքացիական պատերազմ, այլ մի հակապետական սեպարատ-շարժում, մի հակայեղափոխական բէակցիօնէր ապստամբութիւն:

Հակապետական է այդ շարժումը այն պատճառով, որովհետև նա ուղղուած է ողոս պետական տիրապետութեան հիմքերի դէմ մեր ծայրերկրում՝ յենուելով արտաքին ակնկալութիւնների կամ օտար պետականութեան ձգտումների վրայ: Հակայեղափոխական է այդ ապստամբութիւնը այն պատճառով, որովհետև նա ուղղուած է յեղափոխութեան նուաճումների արթնումն պահպանի՝ յեղափոխական իշխանութեան դէմ՝ յենուելով բեկ-աղալարական բէակցիօն դասի կալուածատիրական շահերի վրայ:

Ոչ թէ շարժման հակայեղափոխական էութիւնն է, որ իրաւունք չի տալիս մեզ եղած անցքերը քաղաքացիա-

կան պատերազմ անուանելու, այլ քաղաքացիական շարժման հակապետական էութիւնը: Հակայիզափոխական շարժում՝ մեղմ կամ ուժեղ բնաւորութեամբ, ընդհանուր է բուն Ռուսիայի քոլոր անկիւններում: Բայց այդ վերջինը հակապետական չէ, որովհետեւ նա ուղղուած է ոչ թէ ոռւս պետականութեան դէմ, այլ ոռւս պետական արդի իշխանութեան կամ տուեալ իրաւակարգի դէմ: Իսկ մի կողմ է ոռւս քաղաքացիութեան մի մասի կողմից ուղղուած միւս մասի դէմ՝ գոյութիւն ունեցող սօցիալ-քաղաքական կարգերի շուրջը: Ընդհակառակը, մուսուլման պանթիւրքիստ-նացիօնալիստների կրօնը, ինչպէս մենք տեսանք, ուրիշ բնոյթ ունի: Վերջինս ուղղուած է ոչ միայն տուեալ իրաւակարգի դէմ, այլև առհասարակ ոռւսական էլիմենտի պետական տիրապետութեան դէմ մեր ծայրերկրում՝ առաջնորդուելով իր ինքնորոշման սկզբունքով և օտար պետութեան օրինատացիայով:

Ահա ինչու Բազուի անցքերը՝ իրանց նախերգանքներով ու արձագանքներով, չի կարելի անուանել քաղաքացիական պատերազմ՝ գաղափարի սովորական իմաստով:

Եղան մարդիկ և անգամ մամուլի

օրդան («Нашъ Голосъ»), որոնք նոյն անցքերին առին հայ-թրքական ազգային ընդհարումների կամ կոուլթի բնոյթ:

Չկայ մի աւելի գեհիկ ու մակերևոյթային տեսակէտ, քան այդ:

Մենք գիտենք, թէ ինչ նշանների ազդեցութեան տակ է կաղապարուել այդ տեսակէտը մակերեսահայեաց մարդկանց մէջ:

Անցեալի յիշողութիւնները (1905—06 թ. հայ-թրքական ընդհարումներից մնացած), վերջին ժամանակներս (պատերազմի սկզբից սկսած) հայ-թրքական յարաբերութիւնների լարուած վիճակը, հայերի և մուսուլմանների օրինատացիաների կամ քաղաքական պծերի հակամարտութիւնը և, որ աւելի շոշափելի է, Բազուի անցքերի օրերին երկուստէք (հայ և թուրք) ստուար մասաների ահտիւ մասնակցութեան փաստը:

Այս բոլոր նշանները, անշուշտ, այնքան են աչք ծակելու չափ իրական և ուժեղ, որ կարող են մարդկանց մէջ կաղապարել տեսակէտ ու համոզմունք վերոյիշեալ իմաստով:

Սակայն, թող ներուրի մեղ ապել, որ դա հասարակ ականատեսների, սովորական դիտողների, իրէալիստ քաղ-

քննիչների և միամիտ обыватель-ների մի «տեսակէս» է, այսպէս կոչուած՝ ընթացիկ մ'ի կարծիք (ходячее мнение)՝ բղխեցրած սոսկ արտաքին ակընքախ նշաններից, որ կարող է, իր հերթին, վշուր-վշուր գալ հասարակագիտական խտտապահանջ վերլուծութեան անողոք հարուածների տակ:

Հասարակական երևոյթների գիտական անալիզը չի առաջնորդուում երևոյթին ուղեկցող արտաքին նշաններով, որոնք շատ յաճախ լինում են խաբուսիկ և սքողում են երևոյթի հարազատ բնոյթը: Գիտական մեթոդը ծառայեցնում է այդ նշանները որպէս փաստական նիւթ և լրացուցիչ տուեալներ: Հասարակական երևոյթների պատմական բնոյթը որոշելու համար մարքսիստական գիտական վերլուծութիւնը որոնում է այն հասարակական շարժիչ ոյժերը՝ իրանց զործօն նպատակներով, այն թագնուած ստիմուլները, որոնք հիմք են ծառայում երևոյթի ծագման և որոնց էութեամբ ու տենդենցներով միայն կարելի ու ներելի է որոշել երևոյթի պատմական բնոյթը:

Եթէ պատմագիտութիւնը առաջնորդուէր արտաքին նշաններով և աղժըկալից ցոյցերով, ապա երկրներէ մի-

ջև մղւող պատերազմները՝ ըստ իրենց բնոյթի, պէտք է լինէին ժողովրդական, ազատագրական, յանուն ազգի, ցեղի ու դաւանանքի պատուի կատարւող երևոյթներ: Ո՛ր կարող էք գտնել ժողովրդական այնպիսի խանգալաւո ոգևորութիւն, մասսայական զոհեր և հաւաքական զոհաբերութիւններ, կուռքների միջև երկուստէք թունաւար ատելութիւն, քան պատերազմի ժամանակ, մանաւանդ սկզբընական շրջանում: Եւ պատկնտաւոր իդէօլոգները՝ սկսած լրագրական կրէատուրներից մինչև պարլամենտական գործիչները, մինչև մեքենայութիւնների հեղինակ «ժանրախոհ» դիպլոմատները, այդպէս էլ բնորոշում են երևոյթը, մոլորեցնելով քաղքենի իդէալիստներին և անգիտակ обыватель-ներին: Մինչդեռ պատմագիտութեան նորագոյն մեթոդը մերկացնում է երևոյթները իրանց հիմնական տենդենցներով և ցոյց տալիս, որ պատերազմները մղւում են տիրապետող դասակարգերի տնտեսական նուաճումների և քաղաքական ազդեցութիւնների հրամայական պահանջին բաւարարութիւն տալու համար. ուրեմն նրանք ժողովրդական չեն և ոչ էլ ազատա-

գրական, այլ իմպերիալիստական են և նուաճողական:

Եթէ արտաքին նշանները կամ գործողութիւնները որոշիչ նշանակութիւն ունենային երևոյթի ներքին ընոյթի համար, ապա մենք պէտք է առաջին յիդափոխութեան օրով (1905—06 թ.) եղած հրէական պոպոմները պետութեան կենտրոնում և հայ-թրքական ընդհարումները մեր ծայրերկրում հրոշակէինք, որպէս ուս-հրէական և հայ-թրքական աղգային երևոյթներ, որովհետև մէկ թէ միւս տեղ կացիւններով, դազանակներով, սրերով ու հրացաններով գինուած ամբոխները, ստուար մասսաներն են իրար ջարդել ու կոտորել: Բայց մենք գիտենք, իրապէս, որ բիւրօկրատական ընթիւմը յինուելով հակայիդափոխական տիրող դասակարգերի (ուս և թուրք կալուածատէր ընթացիւն դասերի) վրայ և օգտագործելով տարբեր իրականութիւնների մէջ գոյութիւն ունեցող դասակարգային անտագոնիզմը՝ ջարդերի և կոտորածների կոյր գործիքներ է դարձրել անգիտակ ու ֆանատիկ մասսաներին:

Նոյն երևոյթը գտնում ենք նաև ներկայումս, թէև կատարուած բաւական առանձնայատուկ եղանակով՝

շնորհիւ ժամանակի առանձնայատուկ պայմանների: Ներկայումս չկայ միջին դերը խաղացող վերին նախագծող ու կազմակերպող հեղինակաւոր ոյժը («շէյթանը» կամ հին բէժիմը): Հէնց այդ պատճառով էլ արդի երևոյթը աւելի պարզ է իր դասակարգային մերկ ընոյթով: Ներկայ դէպքում հակայիդափոխական շարժման ակտիւ նախաձեռնութիւնը պատկանում է նոյն թուրք կալուածատէր դասին՝ ընթացիւն ընթացիւն ու աղայարութեան՝ իրանց աղբիւսիւ իդէօլոգներով հանդերձ: Թիկունքում կամ ներքին ֆրոնտում գործելով իրանք, խոր հաւատով գրել էին նրանք իրանց ակնկալութիւնները ճակատի կամ արտաքին ֆրոնտի վրայ:

Ո՞ւմ դէմ էլ ուղղուած շարժումը:

Այս հարցի լրիւ պատասխանը պէտք է մեր ուշագիւր ընթերցողը ստացած լինի աշխատութեանս ամբողջ ընթացքում, մանաւանդ վերջին երեք գլուխներից:

Եթէ շարժումը հակայիդափոխական է ամենից առաջ, ինչպէս մենք ցոյց տուինք, նշանակում է նա ուղղուած է երկրի յիդափոխական իրաւակարգի և հասարակակարգի դէմ: Իսկ վերջինս ներկայացուցիչն ու պա-

հապանը ուրիշ ոչ ոք չէ, բայց եթէ ոուս պետական իշխանութիւնը, նշանակում է շարժումը ուղղուած է այդ իշխանութեան դէմ:

Այնուհետեւ, եթէ այդ շարժում հակապետական է՝ յանուն ազգային ինքնորոշման իւրօրինակ հասկացուած սկզբունքի, ինչպէս մենք զարձեալ ցոյց առինք, նշանակում է նա ուղղուած է ծայրերկրում տիրապետող ոուս պետականութեան շահերի ու զգալափարի դէմ, սուս պետական տիրապետութեան դէմ:

Կարճ՝ կոխը մղուած է մի կողմից գոյութիւն ունեցող ոուս պետական իշխանութեան, միւս կողմից պետականօրէն ինքնորոշուել ցանկացող կամ ազգային իշխանութեան ձգտող մուսուլման տիրապետող էլեմենտների միջև:

Շարժման գործօնների բացայայտ նպատակը, առաջնորդող անդենցները հէնց դա է: Եւ միայն ըստ շարժման նպատակի ու տնտեսներ իրաւունք ունի մարքսիստը իր դիազնօզը դնել՝ երևոյթի հասարակական բնոյթը որոշելու համար:

Շարժման ընթացքում եղած ուղեկից մօմենտները ունին արդէն միայն երկրորդական նշանակութիւն, որոնք

չեն կարող փոխել երևոյթի հիմնական բնոյթը: Այդ մօմենտներից մէկը կաղծում է, ինչպէս շեշտեցինք և բացատրեցինք իր տեղում, «հայկական խոչնդոտը»: Հայկական էլեմենտը մուսուլման հակայեղափոխական և հակապետական նացիօնալիստների տեսակէտից խոչնդոտ է իրանց շարժման առաջ այն չափով և այն իմաստով որով նա հակայեղափոխական չէ՝ իր ընդհանուր ձգտումներով, և հակապետական չէ—իր ազգային ամբողջութեան տարած քաղաքական գծով:

Այդ չափով «հայկական խոչնդոտը» իրական է և ոչ մտացածին:

Սակայն, որպէս զի իրանց դասակարգային իղձերին համազգային բընոյթ տան և հակայեղափոխական սեպերատ շարժումը մասսայական ծաւալ ստանայ, մուսուլման ազրեսիւ նացիօնալիստները առաջնակարգ նըշանակութիւն են վերագրում երկրորդական մօմենտին, դիտաւորեալ և կնդժ ընհանրացումներով չափազանցում են «հայկական խոչնդոտը», և այդ հողի վրայ զրգոում են մուսուլման մասսաների կոյր բնազդները, շահագործում են նրանց մէջ արուեստականօրէն սնուցած ու աւանդաբար անցած «հայատեսաց» զգացմունքները և

կոյր գործիքի դերերում ոտքի են կանգնեցնում անգիսակ զանդուածներ:

Այդ իմաստով «հայկական խոչընդոտը» հասցնում է մինչև «հայկական վտանգի» գոյութիւն չունեցող երևակայական չափերի:

Միև կողմից, ցաւ 'ի սիրտ պիտի խնստովանենք այն բացասական փաստը,—մենք չենք, որ պիտի ուրանանք այն,—որ հայ իրականութեան մէջ ևս կան նացիօնալիստական գրուպաներ, որոնք ոչ պակաս ետանդով նոյն արխուր գերն են խաղում. նրանք ևս, իրանց հերթին, գրգռում են հայ անգիտակից մասսաների աւանդաբար անցած և տակաւին արմատախիլ չեղած «թուրքատեաց» զգացմունքները, և զբանով աւելի լարուած ու թշնամական միջնորդ ստեղծում երկու գրացիները միջև: 'Ի հարկէ, հայ նացիօնալիստները ևս իրանց հաշիւներն ունեն. նրանք ևս իրանց նեղ կուսակցական տենչանքներին ձգտում են համազգային նպատակի գոյն տալ և մասսաներ շարժել դրա շուրջը:

Իրանով հայ նացիօնալիստները կրրկնակի յանցանք են գործում. մի կողմից շարունակում են վառ ու կենդանի պահել թուրքատեացութեան ինչ

որ վրիժառու զգացմունքներ հայ ժողովրդի լայն խաւերում. միև կողմից նրանք ջուր են ածում մուսուլման բէակցիօն դասի ազրեսիւ նացիօնալիստների ջրազացի վրայ: որոնք հէնց այդպիսի փաստեր կուղենան հակառակորդի կողմից, որպէսզի աւելի մեծ յաջողութիւն ունենայ նրանց պրօվօկացիօն պրօպագանդը մուսուլման ֆանատիկ մասսաների մէջ. այսինքն աւելի մեծ չափով գերի ու գործիք դարձնեն վերջիններիս իրանց դասակարգային բէակցիօն ձգտումների համար:

Նացիօնալիստական բանակների երկուստեք մղուող այդ աւերիչ գործնէութեան հանդէպ պատմական մեծ միտիւ ունի կատարելու սօցիալիստական դեմօկրատիան հայ և մուսուլման իրականութիւնների մէջ:

Սօցիալիստական դեմօկրատիայի սրբազան պարտականութիւնն է լուսաւորական-կրթական յամառ ու սիտեմատիկ աշխատանք տանել ժողովրդական մասսաների մէջ. մերկացընել նացիօնալիստական ծրագրների ու ձգտումների դասակարգային բնոյթը. արմատախիլ անել աշխատաւոր ժողովրդի հոգուց զարկով պատուաստուած թունաւոր բացելները՝ վրիժառու,

թշնամական, արիւնարբու զգացմունքների, ուղղուած՝ թուրքը հայի դէմ, հայը թուրքի դէմ—աւերիչ լողուններին շուրջը. քրթնաշան աշխատանքով լուսաւորել բանւորական ու գիւղացիական միտքը, հասկացնել և գիտակցութեան բերել, որ ժողովուրդը ժողովրդի, ազգը ազգի դէմ չունին ոչ մի հաշիւ ու թշնամութիւն, որ տիրացիտող դասակարգերի նացիօնալիստի դէտրոններն են միայն, որոնք դասակարգային ձգտումներն ու աննշանքները քոյարկում են համաժողովրդական և համազգային շինծու բնոյթի, խարուսիկ դրօշակի տակ:

Աւելի յամառ ու տոկուն, կրկնակի ու երրակի աշխատանք պիտի տանել այդ ուղղութեամբ յատկապէս մուսուլման իրականութեան մէջ, ուր պայմանները մի քանի կողմից աւելի աննպաստ են և խոչնդոտները շատ ուժեղ. բէկ-աղալարական դասի մեծ քանակը (ինչպէս մենք տեսանք 11-րդ գլխում), անտեսական ամուր տիրացիտութիւնը և հասարակական ուժեղ ազդեցութիւնը մուսուլման ազգային կեանքի մէջ—մի կողմից, մուսուլման ազգաբնակչութեան ստորին լայն խաւերի յետամնաց, կրօնական նախապաշարմունքներով կաշկանդուած ու խա-

ւար վիճակը—միւս ողմից. դեմօկրատական և մանաւանդ սօցիալիստական կրթիչ ու կազմակերպուած էլեմենտների չափազանց թոյլ զարգացումը, համարեա սաղմոյին վիճակը—երրորդ կողմից:

Այդ աննպաստ պայմանների դէմ մաքառելու համար պէտք է մուսուլման դեմօկրատիային լայն ու կազմակերպուած հիմքերով օգնութեան վայ միջազգային դեմօկրատիան, մանաւանդ իր դրացիութեամբ, վարք ու բարքով և լեզուի մատչելիութեամբ մուսուլմանութեան ամենից մօտ կանգնած հայ դեմօկրատիան:

Հայ սօցիալիստական դեմօկրատիան՝ Բազու թէ այլուր, պէտք է ամեն կերպ հասկացնէ և ներշնչէ մուսուլման աշխատուոր ժողովրդին այն անկեղծ համոզմունքը, որ հայ աշխատուոր ժողովուրդը ամենին շահ ու ցանկութիւն չունի ճեպկական խոչնդոտկազմելու, եթէ իրաւ ինքը՝ մուսուլման աշխատուոր ժողովուրդը, շահագրգռուած է և կամենում է ազգայնօրէն ինքնորոշուել: Մուսուլման աշխատուորութեան այդ հաւաքական կամքի առաջ ոչինչ չի կարող առարկել նաև միջազգային դեմօկրատիան և յետագիտական իշխանութիւնը:

Բայց զբա համար մուսուլման զեմօկրատիան պէտք է նախ ամեն կերպ աշխատէ մուսուլման գիւղացիութիւնն ու բանւորութիւնը ազատագրել կաշուածատէր բէկութեան և բէկական քուրժուազիայի կաշկանդուած խնամակալութիւնից, որպէսզի ինքնորոշուած Աղերբէյջանում չկարողանան իշխել բէկացիօն դասի հակայեղափոխական կարգերը, այլ պահպանուեն և ամրապնդուեն ժողովրդի միջոցով և ժողովրդի համար ձեռք բերուած յեղափոխական նուաճումները:

Հարեան ժողովուրդները կուս համերաշխութեան, եղբայրական համակեցութեան և սրբազան դաշինքին պիտի նուիրուած լինի հայ և մուսուլման զեմօկրատիաների ոյժերի մաքսիմումը: Միայն զբանով կարելի է չեզօրացնել և խեղդել պրօվօկացիաների և երկուստեք թշնամութեան աղբիւր ծառայող նացիօնալիզմի թունաւոր ազդեցութիւնը:

X.

Յեղափոխութեան պարտութիւնը եւ հակայեղափոխական շարժումը:

(Եզրափակիչ դիտողութիւններ):

Գլխաւորը յեղափոխութիւն կատարելը չէ, այլ յեղափոխութեան նուաճումների պահպանութիւնը, — ասել է մեր մեծ ուսուցիչներէց մէկը:

Ռուս յեղափոխական զեմօկրատիան — ցաւ 'ի սիրա պիտի խոստովանել — ամենից քիչ արամազրութիւն ունեցաւ հետեւելու քաղաքական մաքի կարկառուն գէմքերի այդ հնաւանդ պատգամին:

Եւ եթէ այսօր ուզենանք մի յետադարձ հայեացքով «պատասխանատուներ» որոնել այն վերջին ծայր ողբերգական վիճակի հանդէպ, որ ապրում են ներկայիս ոռու երկիրն ու յեղափոխութիւնը, ապա այդպիսիներ պիտի համարել նրանց, որոնք ահա մի տարուց աւելի է դրութեան տէրերն են եղել, որոնք վայելել են ստուարաշատ մասսաների վստահութիւնը և որոնց արամազրութեան տակ կուտակուած են եղել երկրի բէալ ոյժերը:

Այդ պատասխանատուն ոչ այլ ոք է, բայց եթէ բացառապէս ինքը յեղա-

փոխական ղեմօկրատիան՝ իր բոլոր
թեկերով: Չէ որ մարդիկ են կոռւմ կո-
փում մարդկային հասարակութեան
պատմութեան էջերը: Եւ չէ որ յեղա-
փոխական ղեմօկրատիան էր, որ քա-
ղաքականապէս լիազօրուած անկաշ-
կանդ դարձնում էր ազատագրուած
Ռուսիայի 15 ամսեայ պատմութեան
էջերը: Ինչո՞ւ, ուրեմն, ուրիշի օձիքից
բանել, պատասխանատուութեան հարց
ծագելուց:

Յեղափոխական ղեմօկրատիան շատ
հեռու էր իր կոչման բարձրութիւնից.
Իսկ ու անհասուն՝ պատմական հրս-
կայ միասիայի համար. անփորձ ու
անդիտցիպիւն՝ ներքին ու արտաքին
քաղաքականութեան ղեռնարակն ճիւղ
հանգոյցները լուծելու համար:

Ռուս ղեմօկրատիան չուեց յեղա-
փոխական էվօլիցիայի—ինչպէս կա-
սէր Մարքսը ներկայ դէպքում—կարող
արտայայտիչներ ու ձեռնհաս ներկայ-
ացուցիչներ*), այլ առատօրէն մատա-

*) Յեղափոխական էվօլիցիայի միակ կա-
րող արտայայտիչը և խոշոր ներկայացուցիչը
սուսական ղեմօկրատիայի մէջ կղաւ Գ. Վ.
Պլեխանովը, որը պատերազմի և յեղափոխու-
թեան հարցերում անշեղ հեռեկողականութեամբ
և զազափարային մաքրութեամբ տարաւ մին-
չև իր մահը մարքսիստական գիծը: Եթէ Պլե-
խանովը մենակ մնաց և ըստ յարգին չզնաճա-

կարարից յեղափոխական Ֆրադէօլօզի-
այի ֆանֆարոն ու ձանձրալի ասպետ-
ներ և միասակար լարախաղացներ:

Յեղափոխական ղեմօկրատիան—զա-
բոնակալութեան օրերի ստորերկրեայ
շրջանի, նկուղային աշխատանքի սե-
րունդն է, «կրուժկովչինայի»՝ նեղսիրտ
ու ազանդաւորական որդիքը, զոկարի-
նեօրութեան և դօգմայական հասկա-
ցողութիւնների դպրոցում ուսած աշա-
կերանները, սրոնք, իբրև այդպիսիք,
անպէտք ու անընդունակ էին միան-
գամայն քաղաքական գործնէութեան
լայնարձակ ասպարէզի, պետական
քարդ մեխանիզմի կառավարութեան
և հասարակական շինարար ու ստեղ-
ծագործական աշխատանքի համար:

Դեմօկրատիան ստանձնել է իր ոյ-
ժերից, իր պատմական հասունու-
թիւնից ու փորձառութիւնից վեր պա-
տասխանատուութիւն և անխուսափե-
լիօրէն ու սղբերգական վախճանով
պիտի վիժէր նրա գործը: Եւ ստանձ-
նել է այդ պատասխանատուութիւնը,
որովհետև սխալ ըմբռնել էր պատմա-

տուեց, այս զրա պատճառը պիտի որոնել ոչ
թէ նրա անձնատրութեան, որպէս մտածողի,
սուրբեկալի թերութիւնները մէջ, այլ սուս
կրականութեան օրեկալի ալիստական
մէջ:

կան մօտենար, ծուռ կշռաչափել է յեղափոխութեան կոչումը, նրա քաղաքական բովանդակութիւնն ու առաջնորդող տենդենցները, թերի գնահատել է ձեռք բերած նուաճումները և թեթեւ վերաբերուել դէպի նրանց պահպանութեան պատասխանատու գործը:

Դեմօկրատիան ոչ այնքան մտածում էր յեղափոխութեան խոշոր նուաճումների փաստական ամրապնդման մասին, որքան իօսքի եռանդ էր վատնում յեղափոխութեան «լայնացման» և «խորացման» հոգսի վրայ: Իսկ յեղափոխութեան «լայնացումն» ու «խորացումը» ամեն բան էր ուս երկնակամարի տակ, բացի իսկական յեղափոխական-ստեղծագործական ակտիւ գործ լինելուց:

Մի ժողովուրդ, որ իր անտեսական յետամնացութեամբ, կուլտուրական-կիսանահապետական կենցաղով, մտաւոր—հոգեկան զարգացման ցածր մակարդակով և քաղաքացիական անդաստիարակութեամբ չունէր հարկաւոր պատրաստութիւնը Փետրուարեան Յեղափոխութեան անգամ տարրական նուաճումները ըստ հարկին գնահատելու և մարսելու, այդպիսի մի ժողովրդի արբեցրին երկնային բարիքնե-

րի իրականացման հրապուրիչ յղյսերով: Դեմօկրատիայի ամեն մի թևը, կուսակցական տիրապետութեան տենչից բռնուած, աւանսով խոստումների հեղեղ էր թափում մասսաների առաջ՝ նրանց ջղուտ ու սպառազէն բազուկների և բազմաքանակ քուէների աջակցութիւնից օգտուելու համար: Եւ որովհետև ամենամեծ խոստումները—մինչ «սօցիալիզմի արքայութիւնը» իրականացնելու աստիճան—տուել են բօլշեվիկները՝ դեմագօգիական բոլոր կարգի դիւրազրաւ պրիօմներով հրահրելով մասսաների կոյր բնադէները և ժպտալով նրանց գրուպայական ինդիվիդուալիզմին ու էգօիզմին, ուստի միանգամայն բնական է, որ միայն բօլշեվիկներին պիտի յաջողուէր տիրանալ մասսաների, մանաւանդ զինական դասալքուած ոյժերի, կամքին:

Այն օրը, երբ բօլշեվիկները զինուորական բռնի ապստամբութեամբ զրաւեցին քաղաքական իշխանութիւնը, այդ օրը անողոք մի հարուածով սև գիծ քաշուեց ուսական Մեծ Յեղափոխութեան—պատմական այդ բնական, հասունացած երկունքի—նուաճումների վրայից: Հոկտեմբերի 25-ը, լգա—թող ով խելք ու գիտակցութիւն ունի ըմբռնէ—ոչ թէ ուս յեղափո-

խութեան «խորացումը» կամ «երկրորդ էտապն» է նշանակում, այլ դա փաստօրէն ախուր անակնկալներով յղի մի անողոր րէակցիա է փետրուարի 27-ի Մեծ Յեղափոխութեան դէմ:

Ռուսական դեմօկրատիզմի և յեղափոխութեան ներքին պարտութիւնը եղել է անցեալ տարուայ հոկտեմբերին՝ բօլշեվիկների զինուորական բռնութի հետևանքով, իսկ արտաքին պարտութիւնը եղել է ներկայ տարուայ փետրուարին՝ գերմանացիների թելադրած և բօլշեվիկների ընդունած անկախօնխտական հաշտութեան սուրբկական պայմանագրի ոյժով:

Ռուս յեղափոխութեան ճշմարիտ բարեկամները, որոնք գիտակցութիւն են ունեցնլ, իրանց միշտ ազատ ու բարձր պահելու յեղափոխական սնամէջ Ֆրադէօլօգիայից և Ֆանֆարոնութիւնից, պէտք է վազուց խոստովանէին դառն կսկիծով, որ դեմօկրատիան մեղանչել է չարաչար պատմական օրէնքների դէմ և յեղափոխութիւնը տանուլ է տուել իր գործը ամբողջ գծի վրայ:

Յեղափոխութեան ներքին կամ թիկունքի և արտաքին կամ ռազմաճակատի կրած պարտութիւնը պատրաստեց ամենուրէք ամենանպաստաւոր հողք

հակայեղափոխական շարժման ճաղման ու զարգացման համար:

Յեղափոխութեան ներքին պարտութեան ակտը (հոկտեմբերեան ապստամբութիւնը), որին հետեւց քաղաքացիական արիւնահեղ պատերազմների անվերջ շարանը պետութեան զրեթէ բոլոր ծայրերում, աւելի խորացրեց յեղափոխական դեմօկրատիայի ներքին ճակատի ճեղքումը և նրանով, որ պետութեան ամբողջութիւնը անգամահատուեց և վերածուեց մի շարք տերրիտորիալ-կառավարական անկախ միաւորների. (Ուկրայն, Սիբիւր, Դոնի շրջան, Տուրկեստան, Հիւս. Կովկաս, շրջան, Տուրկեստան, Հիւս. Կովկաս, Անգրկովկաս, դեռ չհաշուած Ֆինլանդիա): Վեիկօրուսական բօլշեվիզմի սպառազէն բռնացքի շարունակական արշաւանքները այդ անկախ միաւորների դէմ, վերջին ծայր քայքայեցին հողորդակցութիւնն ու պարենաւորումը, ասել է ուժեղացրին բացասական ներգործութիւնը այն ֆակտորների, որոնք, իրանց տուեալ վիճակում, պիտի անխուսափելիօրէն խորացնէին ազգարնակութեան ամենալայն խաւերում արդէն սկսուած հոգեկան րէակցիան, յնոր իրաւակարգիւ դէմ և նպաստաւոր հող պատրաստէին

հակայեղափոխական տրամադրութիւնների և շարժման համար:

„Ռուսաստանի ներկայ պայմաններում, — գրում է Կարլ Կաուցկին բօլշևիկներին հոկտեմբերեան ապստամբութեան մասին, — պրօլետարիատի դիկտատուրան սպառնում է վերածուել և դառնալ որպէս երկրի քաղաքական և սօցիալական քայքայման և կործանման գործիք, ձգել երկիրը քաօսական դրութեան մէջ, որ առաջ կըբերէ յեղափոխութեան բարոյական պարտութիւնը և բաց կանէ դռներ հակայեղափոխութեան առաջ“ (*):

Ինչպէս յայտնի է, հոկտեմբ. ապստամբութիւնից միայն չորս օր անցած է գրի առել Կաուցկին իր կարծիքը ուսական անօրինակ կատակիզմի մասին: Եւ այսօր մենք տեսնում ենք, թէ ինչպիսի զարմանալի ճշտութեամբ է իրականացել մեր մեծ ուսուցչի մարգարէութիւնը բօլշևիկական ապստամբութեան հետևանքների մասին:

Աւելի սարսփօտի ու ճակատագրա-

*) Տես Կաուցկու յայտնի յօդուածի՝ «Къ русскимъ событіямъ», հայերէն հրատարակութիւնը առանձին գրքոյով՝ «Հոկտեմբերեան ապստամբութիւնը Ռուսաստանում», Ռազու, 1918 թ., էր. 16.

Կան էր յեղափոխութեան արտաքին (կամ ազգաճակատի) պարտութիւնը: Եր պարտութիւն, որ իր ամբողջ էութեամբ, իրերի զարգացման անխուսափելի բնթացքով, բնական արդիւնք էր յեղափոխութեան ներքին կամ թիկունքի պարտութեան:

Ո՞ւմ համար կարող էր անհասկանալի մնալ, որ Բրեստ-Լիտովսկի «հաշտութեան» անլուր ու անօրինակ հաջողածը հնարաւոր էր միայն, որպէս պատերազմական յարաբերութիւնների տրամաբանական զարգացման բնական ճեղքումը՝ սկսած անցեալ տարուայ հոկտեմբերից: Ո՞ւմ համար էր գաղտնիք, որ բազմամիլիոն զօրքը ցրած, ասել է զօրագուրի և ուժասպառ երկրի ողբերգական վիճակի հանդէպ՝ գերմանական իմպերիալիստները ուրիշ լեզուով չպիտի խօսէին Լենին — Տրոցկու կառավարութեան ներկայացուցիչների հետ, քան խօսել ու թեցուցիչներին հետ, քան ինչպէս պիտի զարմանալ չազբեւ են: Եւ ինչպէս պիտի զարմանալ չորսամիայ պատերազմի գերմանական անողոք պրակտիկայից յետոյ, երբ թշնամին իր իսկ թելադրած «հաշտութեան» պայմանագիրը խաղաղում է բոլոր կէտերով՝ ցանկացած ուղղութիւններով անդադար շարունակելով իր արշաւանքները դէպի անտէր երկրի:

խորամասերը, ուր յափշտակելու աւարի մթերանոցներ կան և ուր նա կարող է իր քաղաքական բեցեպտներէ համաձայն նոր պետական միաւորներ, նոր անկախ մասեր ստեղծել:

Իրերի տրամաբանական զարգացման իմաստով նայելով այդ բոլոր գործողութիւններին, միանգամայն անհիմն են երևում բօլշեվիկական այն մեղադրանքները, որ ուղղում են նրանք, ամենից առաջ, Ռեկրայնի և Ֆինլանդիայի հասցէին:

Այդ երկրների կալուածատէր գաղութները, — առում են բօլշեվիկները, — զիմելով գերմանական սուրբնաւոր (ШТЫК-աւոր) րէակցիայի օգնութեան, դաւաճանել են երկրի և յեզպոստութեան շահերին:

Միանգամայն ճիշտ է:

Բայց ինչո՞ւ վելիկորուսական սուրբնաւոր բօլշեվիկովը ուժով և արինասեղութեամբ խառնուեց այդ երկրների ներքին գործերի մէջ մինչ այն աստիճան, որ արտաքին թշնամու օգնութեան զիմելու համար արամազրութիւններ հոսունացրեց այնտեղ: Մինչդեռ առաջ, քանի բօլշեվիկովը իզեական էր և օպօզիցիայի մէջ, հէնց նոյն երկրամասերի կատարեալ ինքնորոշումն էր պահանջում, հասկանալով

զրա տակ պետութիւնից անջատուելութեանը: Պարզ է, որ օտար պետութեան ըէակցիայի գիրկը նետելու հանգամանքը ստեղծել են վելիկորուսիայից խրախուսուած քաղաքացիական պատերազմները յիշեալ ծայրերկրներում:

Երկրորդ, կատարեալ սխալ է և անմտութիւն, կարծել, որ գերմանական սպառազէն բռունցքը ներս է խուժել Ֆինլանդիա և Ռեկրայն այն պատճառով, որովհետեւ հրաւիրել են նրան այդ երկրների տիրապետող դասակարգերը:

Այդպէս դատելու համար կամ պէտք է մանուկի չափ անսահման պարզամիտ լինել կամ աւելի շուտ պարզամիտներին մօլորեցնելու յետին գիտաւորութիւններ ունենալ:

Գերմանական կօալիցիան իր երկաթէ թաթերի մէջ է առել ինչպէս ծայրերկրները՝ Ռեկրայն, Ֆինլանդիա, Անգրիկովկաս, այնպէս էլ մայր Ռուսիայի (վելիկորուսիայի) շատ մասերը այն պատճառով, որովհետեւ ինքն է ցանկացել և կարող էր կատարել իր ցանկութիւնը՝ անտէր երկրի մի ծայրից մինչև միւսը, առանց լուրջ դժուարութիւնների: Նրա ցանկութիւնն էր օչ միայն փոքրիկ, մէկը միւսից անկախ և մէկը միւսի դէմ լարուած ու

գծտուած մասերի բաժանելով պետա-
կան ամբողջութիւնը, վերջին ծայր-
խեղճացնել և ուժասպառ դարձնել ուս-
պետականութիւնը, այլև մինչև վեր-
ջին կայծերը մարել ամենուրեք ուս-
յնդափոխութեան բոցերը, հովանաւո-
րել հակայնդափոխութեան զործօննե-
րին և զարկ տալ ամեն մի շարժման
հակայնդափոխական բնաւորութեամբ:

Հակայնդափոխական և հակապետա-
կան շարժումները ծայրերկրներում
անխուսափելի հետևանքներ են ուս-
յնդափոխութեան ներքին ու արտաքին
պարտութիւնների: Մի Ֆինլանդիա,
մի Ուկրաին, մի Անգլիոյ կաս իրանց
նուաճուած վիճակով և սիգարատ ող-
բերդութեամբ միայն զատ զատ ար-
տայայտիչներ են և հետևանքներ հա-
մապետական ողբերգութեան:

Ինչո՞ւ էք զարմանում, յարգելի բոլ-
շեվիկներ, երբ զերման-աւստրո-թիւր-
քական ինկերական և փաշայական
ըէակցիւնն ոյժերը առել են իրանց ձի-
րանների մէջ ծուաւուած երկրի ա-
ռանձին մասերը և յնուելով սեղա-
կան հակայնդափոխական և հակապե-
տական ոյժերի վրայ՝ գծում են իրանց
քաղաքական քարտէզը և կիրառում
իրանց ըէակցիւնն ընցիւղաները:

Ո՞ւմ դէմ էք գանգատուում դուք:

Յիշում էք ձեր իւրօրինակ պացի-
ֆիզմը պատերազմի դէմ, յիշում էք
ձեր տաք լոզունգները յանուն եղ-
բայրացման այն գամփոնների հետ, ո-
րոնք այժմ էլ շարունակում են ան-
մուռնչ վիլհելմի և Հինգերորդի ա-
նագործին օպերացիաները կատարել
«սօցիալիստական հայրենիքի» կիսա-
կենդան մարմնի բոլոր մասերի վրայ:
Յիշում էք ձեր ծաղրը երկրի ինքնա-
պաշտպանութեան գաղափարի դէմ և
ձեր կարուկ պահանջը՝ կնքել հաշտու-
թիւն ինչ էլ ուզում է լինի:

Ձեր ասածն ու արածը ուղղել էիք
սխալ հասցէով և խաբուսիկ յոյսերով:
Գերմանական պրօլետարիատից, բացի
մերժումից և «երաժարեմքից», ոչ մի
պատասխան չստացաք: *)

*) Դուք խոստովանութիւններ է անում Լե-
նինը (բօլշեվիկների եօթերորդ համադումա-
բում, ներկայ տարուայ մարտ ամսին) իր կու-
սակցութեան յուսախարութիւնների նկատ-
մամբ: «Փաստերը—ասում է նա—հերթեցին
թէօրիան զերմանացիներէ մասին: Մենք կար-
ծում էինք, որ նրանք առաջ չեն արշաւի (հաշ-
տութիւնից յետոյ), բայց արշաւում են»:
, Կարծել, որ մօտ ապագայում յեղափոխու-
թիւն կլինի Գերմանիայում, — դա ինքնախա-
բէութիւն է և յեղափոխական ֆրազա: «Ռու-
սական յեղափոխութիւնը կրել է ամենաճանր
պարտութիւնը»: ,Բոլոր բօլշեվիկները դար-
ձել են պաշտպանողականներ (оборонцы) հոկ-

աակը, ձեր գործելակերպը, — որից օգտուեց և ուժեղացրեց իր դիրքը միմիայն գերմանական իմպերիալիզմը, — ոչ միայն թուլացրեց գերման պրօլետարիատի ըմբոստ ու յեղափոխական տրամադրութիւնները, ինչպէս վկայում են գերման սօցիալիստները, այլև մահացու վտանգի ենթարկեց ուսական յեղափոխութիւնը:

տեմբերի 25-ից 'ի վեր' — Մի շարք նաևեր է այրում իր յետից Լենինը: Գերմանացիներէ մասին շեշտուած թէօրիան հնարել են իրանք բօլշեվիկները՝ նոյն գերմանացիներէ հետ «եղբայրացման իդէայն» հեղինակները: Գերմանիայում մօտալուտ յեղափոխութիւն լինելու էլիւզիաները տածել են շարունակ բօլշեվիկները և այդ իմաստով մօլորեցուել դժբախտ, գիւրահաւատ մասսաներին: Յիշում է Լենինը իր հեռագիրը (յունուարին) գերմանական գործադուլի մասին, որի քաղաքական նշանակութիւնը այնքան ուռեցրեց նա, որ իր սեփական ստորագրութեամբ հեռագրեց ամեն տեղ, որ «բնա լուրերի Լիբկնեխտը ազատուել է բանախց և պիտի անցնէ գերմանական կառավարութեան գլուխը»: Միայն մարտ ամսին է նա պարտուած համարում ուս յեղափոխութիւնը, մոռանալով կամ չզիտակցելով, որ յեղափոխութեան այդ արտաքին պարտութիւնը հետևանք է միայն ներքին պարտութեան (հոկտեմբերին): Եթէ բօլշեվիկները հոկտեմբերէից 'ի վեր եղել են оборонцы-ներ, ինչնու դա խոստովանուում և շեշտուում է միայն մարտին և ինչնու հոկտեմբերէից 'ի վեր նրանք շարունակ վանել են իրանցից оборона-ի գործն ու քաղաքաբը:

Վերջինս վաղուց է կորցրել իր մակընթացութեան պօտենցիել ոյժն ու թափը: Նրա յորձանքից Գերմանիանետուած ալիքները մինչև ինկերական ժայռի երկաթապատ կրծքին հասնելը՝ փշուր-փշուր և ցրիւ-ցրիւ եկան անհիւրընկալ երկնակամարի անգամ թիթիկ հողմի հարուածներէց:

Ռուսական յեղափոխութեան վերջին խօսքը ևս մնաց «ձայն բարբառոյ յանապատի»:

Ռուսական յեղափոխութիւնը ամենածանր հարուածներով պարտուել է այն ժամանակ, երբ ուս երկիրը՝ երեսու դարձրած Նիկօլայ 11-ից, գերութեան յանձնուեց վիլհելմ 11-ին, երբ ցարիզմին յաջորդեց կայզերիզմը ուս քրականութեան պատմական թատերաբեմում, երբ Ռուսիան երթարկուեց գրաֆ Միրբախների ճիպտի հսկողութեան:

Իսկ այդպիսի պայմաններում ուս յեղափոխութիւնը բոլորովին անգոր է (անգոր էլ եղել է միշտ) իր հեռուոր արձագանքները տալու. նա իր արդի վիճակում միայն խոր ցաւի ու արգահատանքի է արժանի:

Ռուս յեղափոխութիւնը՝ իր նուաձուսներով, միայն մի փրկութիւն ունի. այն է՝ եթէ Գերմանիայում եղաւ յե-

դափոխութիւն փափագած ծաւալով ու
խորութեամբ:

Իսկ Գերմանիայում հնարաւոր է
յիզափոխութիւնը միայն այն ժամա-
նակ, եթէ կայզերիզմի և իշխելիական-
րէակցիայի կռած շղթաները ջախջա-
խուեն մեր արեւմտեան դաշնակիցներին
ծանր թնդանօթներին յաղթական հա-
րուածների տակ այնպէս, ինչպէս ցա-
րիզմի և բիւրօկրատական րէակցիայի
կռած շղթաները ջախջախուել են գեր-
մանական կրուպի թնդանօթների յաղ-
թական հարուածների տակ:

Միևնոյն հետևանքները միևնոյն նա-
խադրեալներին:

Սակայն աններելի է մի իշխանու-
թեան՝ ապագայի այդ ապառիկ հա-
շիւների գնով, վարել իր ներկայի պե-
տական «րէալ» քաղաքականութիւնը
Նրկիրը ենթարկել գերմանական վայ-
րագ իմպերիալիզմի անողոր յօշոտում-
ներին և անխնայ կողոպուտներին,
դիւրահաւատ մասսաներին դարձնել
սօցիալական էքսպլերիմենտների կոյր
օբիեկտներ և քաղաքացիական պատե-
րազմների միջոցով կռուած մնալ իշ-
խանութեան փեղերին՝ հաւատարմով և
սպասելով «յիզափոխական Մեսիայի»
երկրորդ զալստեան, — դա նշանակում է
սպանել իր երկրի յիզափոխութիւնը:

մինչև սոսկ ենթադրական, «երանե-
լի» ապագան գալը:

Եթէ ճիշտ է Աւգուստ Բեքելի այն
հանրածանօթ կարծիքը, որ ամեն մի
երկրի յիզափոխութեան պատճառը
հէնց ինքը՝ տուեալ երկրի րէակցիօն
կառավարութիւնն է՝ իր վարած դը-
ժնդակ քաղաքականութեամբ, ապա
ճիշտ պէտք է լինին աւայն, որ ամեն մի
երկրի հակայիզափոխութեան պատ-
ճառը հէնց ինքը՝ տուեալ երկրի յի-
զափոխական կառավարութիւնն է՝ իր
կործանարար, անարխիական քաղա-
քականութեամբ:

Այդ տեսակէտից եւրոպակ. յիզափո-
խութիւնների համար անծանօթ ողբեր-
գութեան ուսանելի դասեր շատ է տա-
լիս ոռուական յիզափոխութեան ար-
դի անօրինակ տրագիդիան: Եւ պատ-
մութիւնը կարող է այժմեանից իսկ
արձանագրել իր տխուր էջերում, որ
սուա երկրի կործանման, յիզափոխու-
թեան պարտութեան և հակայիզափո-
խութեան զարգացման ամենազլխաւոր
պատճառն ու պատասխանատուութիւնը
ընկնում է յիզափոխական և յօմգը-
նիստ էքսպլերիմենտաւորների վրայ:

1918 թ. մայիս ամսին.
Բագու:



Բ. Իշխանեանի առանձին լոյս-
տեսած աշխատութիւնները:

1. «Տաճկահայ խնդիրը և միջազ-
գային դիպլոմատիան», Թիֆլիզ, 1907
թ., էր. 140 (սպառուած) 40 կ.
2. «Թիւրքիայի ազագան», Թիֆ-
լիս, 1908 թ., էր. 58, (սպառ.) 20 կ.
3. «Տնտեսական զարգացման ֆազե-
րը», Թիֆլիս, 1906 թ., էր. 64,
(սպառուած) 20 կ.
4. «Ազգային պրոգրեսը և դասակար-
գային շահերը», Թիֆլիս, 1908 թ.,
էր. 310, (սպառուած) 60 կ.
5. «Աշխատանքի և աշխատուորի
զաղափարը Ազա-Նեպրիի, Յ. Յակո-
բեանի և Շ. Կուրդինեանի բանաստեղ-
ծութիւնների մէջ», Նոր-Նախիջևան,
1909 թ., էր. 49, (սպառուած) 20 կ.
6. «Հասարակական զաղափարները
Ռ. Պատկանեանի և Ա. Շահադիզի
բանաստեղծութիւնների մէջ», (սօց-
վերլ.) Թիֆլիս, հրատ. Գուտամբեր-
զի, 1910 թ., էր. 447 թ. 1. ր.
7. «Wesen und Geschichte des Aus-
ländertums in Russland», Բերլին, 1912
թ., էր. 64.
8. «Die ausländischen Elemente in

der russischen Volkswirtschaft», (historisch-ökonomische Untersuchungen), Verl. Fr. Siemenroth, Բերլին, 1913 թ., էր. XII+300 7 մարկ

9. «Nationaler Bestand, berufsmässige Gruppierung und soziale Gliederung der kaukasischen Völker», (statistisch-ökonomische Untersuchungen), Բերլին, 1914 թ., էր. 81, (Göschensche Verlag-sbuchhandlung) 2 մարկ

10. «Экономическія и общественныя основы армяно-грузинскаго антагонизма» (критическій анализ), հրատ. Գուտտենբերգի, թիֆլիս, 1914 թ., էր. 96 40 կ.

11. «Կովկաս. ժողովրդ. ազգաբնակչ. կազմը, պրոֆես. խմբաւորումը և սոց. շերտաւորումը» հրատ. Գուտտենբերգի, թիֆլիս, 1914 թ., էր. 208 75 կ.

12. «Հայ-վրացական յարաբերութիւնների պրոբլեմը», թիֆլիս, 1914 թ., էր. 97 20 կ.

13. «Нѣмецкій профессоръ о германскомъ шовинизмѣ» (факты и разоблаченія), Պետրոգրադ, 1915 թ., էր. 27, (սպառ.) 15 կ.

14. «Գերմանիայի և թիւրքիայի սնտեսա-ըազաբական փոխ-յարաբե-

րութիւնները» (քննական տեսութիւն) թիֆլիս, 1915 թ. էր. 64, (սպ.) 40 կ.

15. «Աղէտի և տառապանքի աշխարհից» (Այց թիւրքահայ փախստականների), թիֆլիս, 1915 թ., էր. 78, (սպառում) 40 կ.

16. «Народности Кавказа» (статистико-экономическое изслѣдованіе), съ предисл. С. Патканова, изд. М. В. Попова, Պետրոգրադ, 1917 թ., էր. 116, (սպառում) 1 ռ. 50 կ.

17. «Развитіе милитаризма и империализма въ Германіи» (историко-экономическ. изслѣд.) съ предисл. проф. М. Туганъ-Барановскаго, изд. «Книга», Պետրոգր., 1917 թ., էր. XI+352, (սպառում) 3 ռ.

18. «Դիմակաները պատում» (ովքեր են բողեվիկները) Բագու, 1918 թ., էր. 76. 2 ռ.



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

- I. Երևոյթի բնոյթը.
- II. Շարժման գործօնները.
- III. Տնտեսական տիրապետութիւնը և քաղաքական տենդենցները.
- IV. Պատերազմը և պանխաւամիզը.
- V. Յեղափոխութիւնը և թուրքական նացիօնալիզմը.
- VI. Թուրքական նացիօնալիզմի ազդեցութիւնը.
- VII. Մուսուլմանութիւնը և զինուորական քաղաքականութիւնը.
- VIII. «Մուսաֆաթ» կուսակցութիւնը և բոլշեւիկները.
- IX. Ներքին խոչնդոտներ և արտաքին ակնկալութիւններ.
- X. Յեղափոխութեան պարտութիւնը և հակայեղափոխական շարժումը (եզրափակիչ զիտողութիւններ).



„ԲԱՆԻՈՐԻ“ գրադարանից լոյս են տեսել՝

№ 1. Աւգուստ Բերելի «Ինտերնացիոնալիզմը և հայրենիքի պաշտպանութիւնը», Բ. Իշխանեանի առաջաբ., ծանօթ. և վերջաբանով, Եր. 32, գինը 40 կոպ

№ 2. Շտայն «Գերմանական սօցիալդեմօկրատիան բօլշեվիկների մասին», Բ. Իշխանեանի առաջաբ. և ծանօթ., Եր. 24, գ. 30 կ.

№ 3. Կ. Կառլցկի, «Հոկտեմբերեան ապստամբութիւնը Ռուսաստանում», Բ. Իշխանեանի առաջաբ. և ծանօթ., Եր. 24, գ. 20 կ.

№ 4. Բ. Իշխանեանի «Հակայեղափոխական շարժումը Անդրկովկասում» (Բազուի արիւնահեղ անցքերի առիթով), Եր. 240, գ. 2 ր.

ԴԻՄԵԼ ԳՐԱՎԱՃԱՌՆԵՐԻՆ.

«Ազգային գրադարան»



NL0403996

4494